




ՀԱՅՈՒԹԻՒՆ

1991
Խ-Հ



ԽԸ

ՏԱՐԻ



ԵԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅՑ
Ս. ԵԶՄԻԱԾԻՆԻ

Անողոք. միեր - հակըք. միեր

1991




ՀՐԱՄԱՆԱԿ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲՍՉՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

17663-ԱԿ

161-91



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՒՐԸ ՄԵԾԱՀԱՐԳ ՏԻԱՐ
ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ՄԵԾԱՐԳՈՅ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԻԱՐ ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երեսան

Աստուծոյ ողորմութեամբ մեր մայր երկրի անկախութեան
ամրապնդման ճանապարհին, ահա մի նոր ամրոց և կոթողունեց,
ընտրութեամբ ի հարձիշան մեր հայրենիքի առաջին ճախազա-
հի, համայն մեր ժողովրդի ազատ կամքով:

Յանոն Հայաստանեաց Առաքելական Եկեղեցու և հայա-
տացեալ ժողովրդի, Սուրբ Էջմիածնից շնորհաւորանք և օրի-
նութիւն Զեզ՝ արծաթընիր ճախազահ մեր հայրազատ Համբա-
պետութեան, և մշտանորոգ անսպատ եռանդ ու լատանութիւն,
որպէսզի Զեր ազգանուէր գործակիցների հետ ձեռք ձեռքի տր-
ուուծ շարունակէք անվարան յառաջ ընթանալ անկախութեան
ճամքով, ապահովելով հայոց հայրենիքի քաղաքական անվտան-
ութիւնը և մշակութային ու տնտեսական զարգացումը, իմաստու-
թեամբ ու արդար կորովով յաղթահարելով ամէն դժուարութիւն,
ամէն փորձութիւն:

«Եւ արդ՝ մի մերժէք ի ձենց զհամարձակութիւնն ձեր, յորուն
կայ մեծաց վարձուց հատուցումն: Պիտոյ է ձեզ համբերութիւն,
զի զկամն Աստուծոյ արարեալ, հասչիք աւետեացն» (Երք. Ժ
35~36). ամէն:

Վ. Ա. Զ. Գ. Ե. Ն. Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՉԸ

Կամօրն Աստուծոյ և մեր ազատատենչ ազգի, յառաջիկայ Սեպտեմբերի 21-ին, մեր նորածին հանրապետութեան քաղաքացիները պիտի պատասխանեն անկախութեան հրաւերին, միաձայն ու բարձրաձայն յայտարարելով՝ այս՝

Ազատութեան ու անկախութեան կանչը մեր բազմադարեան պատմութեան հրամայականն է, մեր ազգի գիտակցութեան թելադրանքն է, մեր ապագայ գոյատևման երաշխիքն է:

Կը խորհինք թէ Սեպտեմբերի 21-ի այո՛ն ո՛չ թէ լրումն է մեր անկախութեան իտեպի, այլ շարտնակումն է անկախութեան՝ առավել վճռական ու գործարար գործնթացի, ապահովումովը մեր հայրենիքի քաղաքական անվտանգութեան և տնտեսական զարգացման:

Հայաստանեաց Առաքելական Եկեղեցին անվարան ու լաւատես սպառում է լսել մեր ժողովրդի պատմական այո՛-ն, և հետևել այդ ձայնին:

Մաղթում ենք սրտանց, մեր երկրի երիտասարդ անձնուրաց ղեկավարներին՝ ազգաշեն անսպառ եռանդ ու իմաստութիւն, միասնական համերաշխ գործակցութեամբ:

Սյս արևոտ պահին, ես յիշում եմ՝ Բոլիսարեստում 1938 թուականին «Հերկ» ամսագրում, իմ խմբագրականի վերջին սա տողերը՝


«Ահա թէ ինչու, այսօր երբ կը վերցիշենք կորսուած անկախութեան պատմութիւնը, լեցուն հաւատով ու լաւատեսութեամբ՝ մեր ազգի ներկայի և ապագայի նկատմամբ, կուգենք գոչել՝ Թող ապրի մեր Հայաստանը: Թող մեայ Մայիս 28-ի խորհուրդը՝ որպէս անոր ապագայի աստղը»:

Հայոց աշխարհի հորիզոնի վրայ, ահա բարձրանում է անկախութեան այդ աստղը:

Օրհնութիւն և փառք՝ ճառագայթող այդ աստղին ու յաւէտ ազատ՝ արմենական մեր ազգին:

ՎԱԶԳԻՆ Ա.

ԿԱՅԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՀԱՅՐԱՊԵՏ Տ. Տ. ՎԱԶԳԻՆ Ա.-Ի
ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ
(23 Անպտեմբեր 1991 թ.)

Նախաստեղծման հեռու ժամանակներում, մեր քաջ Նահապետը Հայկ, արդարութեան երեքթնեան իր ճետով ճեղքեց խալարը բռնակալոթեան և դրեց սահմանաքարը հայոց ազգի ազատ Տան: Այդ օրից ծնունդ առաջ ինքնիշխան արմենական երկիրը՝ Հայաստան:

Անցան դարեր, և հրաշք տեսիլքովը Սուրբ Լուսաւորչի, Աստուծոյ Որդին իշտ Արարատեան աշխարհ ու իր հետ բերեց «լոյսը փառաց» որով բացուեց ճանապարհը մեր ազգի ոգեկան ազատութեան:


Այսօր երբ մեր պատմութեան նոր առաօտն ներ դիմաւորում, հոչակումովը մեր նորածին հանրապետութեան անկախութեան, յիշենք հայրենաստեղծ մեր Հայկ Նահապետին և Սուրբ Գրիգոր Լուսաւորչին, որ Քրիստոսի արարչագործ լոյսով ոգեղինացրեց կեանքը հայոց, որով աշխարհի նորիզոնի վրա բարձրացաւ ծիածանը «փառաց լոյս» մեր անձման Ռոկեղարի: Նաև յետ այսու, մեր ազգի տենչանքը պէտք է լինի, անկախութեան ճանապարհով հասնել՝ ազատագրուած հայ ոգեկանոթեան նոր բարձունքերի:

Հայեր, որ ի Հայաստան և որ ի սփիտս աշխարհի, արյնացէք և ոխնեցէք՝ մնալ հաւատարիմ ազատն Հայկ Նահապետին և մեր նորիների Լուսաւորչին ամենասուրբ:

Ողջոյն և օրհնութիւն Հայաստանի ինքնիշխան անկախ մեր հանրապետութեան:

Օրհնութիւն և փառք մեր ազատատենչ ու հաւատաւոր անմահ ազգին:

«Ի Տեառնէ եղան այս, և է սրանչելի առաջի աշաց մերոց: Այսօր է զոր արար Տէր, եկայք ցնծացուք և ուրախ եղերուք ի սմա»: (Սաղմոս ՃԺԷ 23—24). Ս.մ.ն:



S. S. ՎԱԶԳԵՆ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ԵՐԵՎԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՑՈՒՅՑԻՑ

Սիրեցյալ ժողովորդ Մեր,

Այս խոռվահույզ ժամանակներում, երբ մեր ազգը մարտնչում է իր արդար իշխանության համար, երբ մեր ինքնիշխան հայրենի պետության անձնվեր երիտասարդ ղեկավարները հերոսական ճիգեր են ի գործ դնում հասնելու համար ազատության և անկախության գործընթացի վերջնական հաղթանակին, մեր Մայր Եկեղեցին՝ Հայ Առաքելական Եկեղեցին ևս, ոգեշնչված նոյն այդ իշխանությունով, կամենում է իր նպաստը, իր աշխատանքի բաժինը բերել ի կենսագործումն մեր ազատատենչ ժողովրդի ազնիվ սպասումների:

Այս գգացումներով, այս խոհերով տոգորված, Մենք ողջունում ենք Հայատանի հեռուստատեսության ղեկավարության որոշումը, այս ամսից սկսած առավել լայն տեղ տալու «Խորան Լուսոյ» կրոնական հաղորդաշարին, ի մսիթարություն մեր հավատավոր ժողովրդի գավակների:

Ընդառաջելով հեռուստատեսության ղեկավարության այս գովելի առաջդրանքին, Մենք որոշեցինք «Խորան Լուսոյ» հաղորդումների ծրագիրը ընդլայնել նոր միջոցառումներով և գործակիցներով, Սյունաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանի ղեկավարության ներքո:

Այսօր Մենք հաճելի պարտականությունը ունենք Մեր օրինությամբ բացումը կատարելու «Խորան Լուսոյ» հաղորդումների այս նոր շրջանի:

Ամենայն Հայոց Սուրբ Էջմիածնից շողարձակվող «Խորան Լուսոյ» հաղորդումները մեր ժողովրդին մշտապես պիտի բաշխեն Աստուծ խոսքը, Քրիստոսի Ավետարանի կենարար պատգամները և Սուրբ Հոգու շնորհերը, ի շինություն նրա նոգեսր ու բարոյական կյանքի: Զի Մենք, ինչպես դարեւ շարունակ մեր լուսաբնակ նախնիները, հավատում ենք իրկնի ու երկրի արարիչ Աստծոն, նրա Միածին Որդու փրկչագործ Ավետարանին ու Սուրբ Հոգու շնորհարաջի զորությանը:

Սույն կրոնական հաղորդումներով մեր Եկեղեցու սպասանվորները իրենց քարոզության մեջ պիտի ընդգրկեն նաև նոյներ Հայ Առաքելական Եկեղեցու պատմության, դավանության և մատենագրության վերաբերյալ,

ինչպես և լայն տեղեկություններ մեր Եկեղեցու՝ մեր օրերում ծավալող գործունեության մասին Հայաստանում և սփյուռքում:

«Խորան Լուսոց»-ից, մեր հոգևորականները՝ եպիսկոպոսներ, վարդապետներ և բահանա հայրեր, իրենց կենացանի խոսքով պիտի շանան մանավանդ նպաստել մեր ժողովրդի հոգնոր բարոյական կատարելագործանը, հայրական թելադրանքներով, որ նրանք սուրբ հավատքի զորությամբ ու ազնիվ ներշնչանքներով հեռու մնան մեղանշումներից, մոլորդյուններից և վատառողջ հակումներից, թէ իրենց ընտանեկան հարկի տակ, թէ իրենց աշխատանքի վայրում, թէ իրենց հասարակական կյանքում:

Խսկապես, մեր ժողովուրդը ազգային զարթոնքի հետ զուգահեռ, կարիք ունի նաև բարոյական եկարագրի զարթոնքի: Զի մարդ անհատի հոգու գերագույն զարդը, գերագույն պարձանը՝ բարոյական գիտակցության հրամայականն է, որով իր հոգուց արմատախիլ պետք է անի անցալից մնացած արատները, եսակենտրոն մղումները, ինչպիսիք են՝ շահամոլորդյունը, ընշարադցությունը, կաշառակերությունը, այլ և այլ զեղարարություններն ու մոլորդյունները:

Դուք, արմենական ցեղի հպարտ զավակներ, լավ իմացեք, որ մեր Առաքելական սուրբ Եկեղեցին իր բարոցությամբ և խորհրդակատարություններով մի տևական «անոնկի զանգակատուն» է, որ նրավեր է կարդում մեր ազգի բոլոր զավակներին ապրել ու գործել բարեկարտությամբ, շինարար աշխատանքով ու առաքինի արարութներով, իր ազգակիցների հետ եղբարական սիրո միության մեջ: Հայ Եկեղեցին միարար ու խաղաղադարձ մի համազգային սիրո եղբարակցություն է:

Մեր եկեղեցիների բնեմերից, սուրբ պատարագի ժամին, ամեն կիրակի բաղցրաձայն հնչում է մեր անենան «Տէր ողորմեա»-ն, վերջում այս աղոթքով՝ «Տէր ողորմեա, Տէր ողորմեա, տուր աշխարին խաղաղութիւն, ազգի հայոց սէր, միուրին»:

Սիրեկիներ Մեր, մեր օրերում, եք այնքան ոգևորությամբ ու ուժգնությամբ բարձրադադակ խոսվում է ազատության և արդարության զաղափարների մասին, կամենում ենք ձեզ հիշեցնել, թէ այդ մարդասիրական վեհ զաղափարների հիմքերը գտնվում են Քրիստոսի սուրբ Ավետարանում: Դրա համար է, որ Փրկիչը մեր Հիսուս կոչվում է «Արեգակ արդարութեան ու ազատութեան» և «Խշան խաղաղութեան»:

Սրբարություն, ազատություն ու խաղաղություն, ահա ոգեղեն սյուները քրիստոնեական ավետարանչության, քրիստոնեական բարոյականի:

Քրիստոնեական առաքելության հիմնական նպատակը մարդու փռկությունն է չարի ու մահվան կապանքներից:

Քրիստոնեությունը, այսպիսով, մարդակենարուն կրոն է, որովհետև քրիստոսակենարուն է, զի Հիսուս հավասարապես Աստված էր և Մարդ: Քրիստոս իր մարդեղությամբ և խաչափառի վրա իր զոհաբերումով է, որ դարձավ Փրկիչ ազգի մարդկան: Քրիստոսով է, որ մարդը կոչվեց դառնալ պայծառակերպ բարոյական էակ:

Կարող ենք նոյնիսկ մտածել, թէ առանց՝ Քրիստոսով մարդու բարոյական պայծառակերպման, Աստված կարկվեր իր գոյության բարոյական իմաստից:

Մարդասերն Աստված իր Միածին Որդուն աշխարհ առաքեց, իր

արարչագործության բարոյական գերագույն նպատակը իրականացնելու համար մարդկային հոգեկան աշխարհում:

Ինչքան միսիթարական է Մեզ համար, Հայոց Հայրապետի համար, որ մեր ժողովորդը այսօր ի Հայատան և ի ափյուռ աշխարհի, իր երեսը դարձել է դեպի աղոթարան և ողջունում է ծագումը արդարության ու ազատության արեգակի հայրենի աշխարհի վրա և վերանորոգում իր նախնաց սրբազն ուխտը՝ Քրիստոսի Ավետարանի լուսով դառնալու նոր մարդ, նոր ժողովորդ, ազատագրված ժողովորդ:

Ցանկանում ենք նաև հիշեցնել, որ ամեն մեկի մտածելու ու գործելու ազատությունը պայմանավորված է իր նմանների, իր ազգակից եղբայրների մտածելու ու գործելու ազատությամբ:


Իրապես ազատ ու արդար է այն մարդը, որը հարգում է ազատությունն ու արդար գործը իր եղբայրների:

Սույն մի քանի տողերով, Մենք վերջացնում ենք Մեր խոսքը և մաղթում, որ «Ըստրան Լուսոյ» հաղորդումը Քրիստոսի լուսով պայծառացնի մեր ժողովրդի միտքն ու հոգին, մեր ժողովրդի բարոյական նկարագիրը, մեր ժողովրդի ձեռաց գործերը:

«Լուսվի քո Քրիստոս, ամեներեան լուսաւորեցաք և ի սուրբ խաչ քո փրկիչ հաւատացեալքս ապահնեցաք»:

«Էմանուիլ, Էմանուիլ, այո, հավատանք, թէ Աստված ընդ մեզ է»:





ՄՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆԻՐՈՅՑՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Արդեն նվիրական ու ավանդական դարձած մեռնօրհների սրբազն արարողությունը ահավասիկ 1700 տարիներից ի վեր բովանդակ հայության միասնական աղոթքի ու հոգևոր ուխտի նորոգման խորհուրդն է դարձել: Մեռնօրհնությունը հայ հավատացյալ ժողովրդի հոգու և սրտի ամենամուտ ազգային-եկեղեցական տոնախմբությունն է, որին ներկա է եղել մեր ժողովուրդը հոգեկան ուրախության հուզերով և ազգային հպարտության զգացումներով:

Սուածին անգամ այս սրբազն հոդի վրա, հավանաբար 303 թ., Ս. Գրիգոր Լուսավորիչն է, որ օրինել է սրբալուս մեռնը Արշակունի Տրդառ Գ հայոց արքայի կնքահայրությամբ: Այնունեան դարերի ընթացքում Ս. Լուսավորչի արժանավոր հաջորդները միշտ օրինել են սուրբ մեռնը, որպեսի երբեք ու երբեք Հայ Եկեղեցուն և հայ հոգիների մեջ «շամաքի ձեռը մաքուր իր կանթեղին, հոգիներին՝ սրբազն հուր»:

Ահավասիկ այս հանդիսավոր առիթով Մայր Հայութնիքը իր դոները բացեց բազմահազար հավատավոր հայորդների առջև: Եվ ահա արսօր էլ հայ ուխտավորներն աշխարհի բոլոր կողմերից եկել են Ս. Էջմիածին, Մայր Հայրենիք՝ իրենց հետ բերելով բյուր կարուներ, կրոնական ու հայրենասիրական հուզ ու ապրում:

Աշխարհի տարբեր երկրներից ոխտավորաբար Մայր Սթոր Ս. Էջմիածին են ժամանում Հայաստանյաց Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, հոգևոր ներկայացուցիչներ, թեմական և Եկեղեցական վարչությանց անդամներ, Մայր Աթոռոի բարերարներ, ազգային-հայաստանական գործիչներ, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ և այլ հյուրեր: Նրանք գալիս էին հաղորդակից լինելու մեռնարույր Ս. Էջմիածնով մեր նախանձների սուրբ հոգիների հետ, գալիս էին տեսմելու Հայաստանի ինքնիշխան հանրապետության վերածնունդը և միասնաբար աղոթելու մեր Եկեղեցու և Մայր Հայաստանի շինության ու անսասանության համար:

Ս. Էջմիածինը իր պահնոխատ զավակներին կանչել է իր հովանու ներքո, իր մայրական գորովագութ գիրկը՝ իր մեռնարույր օրինությունն ու աղոթքը բաշխելու համափյուռ հայությանը:

1991 թ. սեպտեմբերի 21-ից մինչև 25-ը սրբազնության մասնակցելով համար Մայր Աթոռ Ս. Էջմիածնի են ժամանում Երոսաղեմի հայոց Պատրիարք Ամենապատիլ Տ. Թորգոմի արքեպիս. Մամուկյանը՝ ընկերակցությամբ Տ. Անան եպս. Ղարիբյանի, Կ. Պորտ հայոց Պատրիարք Տ. Գարեգին արքեպիս Գագանճյանը՝ ողեկցությամբ Տ. Շահնամ եպս. Սվաճյանի, Տ. Մանվելի վրդ. Երկաթյանի և Տ. Պարոյը թիվ. Դամատյանի: Մեռնօրմեներին իրենց մասնակցությունն էին թիրել նաև ԱլԻՆ-ի հայոց արքեպիս թեմի առաջնորդ Տ. Խաժակ եպս. Պարսացյանը, ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովհաննիսը, Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Ֆիրայը արքեպս. Մարտիկյանը, Եղիպատոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Հինչինյանը, Հովհաննան հայոց թեմի հայրապետական պատուիրակ Տ. Ուկան եպս. Գալիքարյանը, Երաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ալբա եպս. Առառողյանը, Ալյուրապիսի և Նոր Ջեղանդիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Արամ եպս. Պայտովյանը, Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Հովհաննիսը եպս. Տերտերյանը, Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգոր եպս. Մորասյանը, Յարապիսի հայոց թեմի առաջնորդ Տ. Տաթևի եպս. Մորասյանը, Պորտկիլիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տաթևի եպս. Մորասյանը, Յարապիսի հայոց թեմի առաջնորդ Տ. Վահագյանը, Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատուիրակ Տ. Գյուտ արքեպս. Նազաշյանը, Լիոնի հայոց առաջնորդ Տ. Նորվան եպս. Զարարյանը, Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատուիրակ Տ. Մելքոնյանը եպս. Գրիգորյանը:

Ամենայի Հայոց Հայրապետի մասնավոր հրավերով մեռնօրհմերի սրբազն արարողությամբ մասնակցելու համար Մայր Աթոռ էր ժամանել Մեծի Տաճա Կիդիկո Գարեգին Բ Կաթողիկոսը՝ ընկերակցությամբ Տ. Սիպոս Տ. Վոյ. Սարգսյանի և Տ. Արշակի վրայ. Գաթությամբ:

Հանդիսությամբ մասմակցող քոյր Եկեղեցիների պատմիքակության մաս իր կազմում Թուաց Եկեղեցու, Վրաց Եկեղեցու և Հոռմական Կայոցիկ Եկեղեցու ներկայացոցիները:

ԿԻՐԱԿԻՆԱՄՈՒՏԻՑԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅԹՈՒՆ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ

Սեպտեմբերի 28-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 18-ին, Հայ Եկեղեցու Ավրաւպետական Աթոռութերի գահակալմերը, եպիսկոպոսաց դասը, վարդապետները ու քահանա նայերը, Հայոց Հայրապետի գլխավորությամբ, Եկեղեցական թափորով, ուխտավորների ու նախատարակմերի խորհման բազմությամբ առաջնորդվեցին Մայր տաճար՝ Անքա լինելու կիրակմանունի նամինապետ ժամերգությանը:

ՄՐԱՎԱՌԻՑՍ ՄԵՌՈՒՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԹՈՒՆ

Սեպտեմբերի 29-ին, կիրակի: Այսօր Ամենայն Հայոց Հայրապետոց մեջտոք նամինավորությամբ, իր գահակալույթան Յթ-րդ տարում, վեցերորդ ամսամի կատարում է սրբազնությունը՝ ի վայելուն Հայաստանաց Առաքելական Եկեղեցու և նախատարակությանը:

Քառասուն օրեր առաջ Մայր Աթոռում միսին էր սրբազնությունի պատրաստությունը: Մեռոնի արծաթաձոյլ մեծ կաթան, լցված ձիթապտղի անարատ լուղով, դրվել էր Ավագ խորանում ամենօրյա «աշոթիք և երգօք նոգեսորք» և ծածկվել «յորմ շղարշովք»:

Վաղ պատվոտից նազարատիոր նայ ուխտավորներ և նախատարակմեր արտերկրից և Հայաստանի տարեր շրջաններից եկել են մասմակցելու նամազզայն այս սրբանույզ ու գեղեցիկ արարողությամբ:

Մինչ մեռոնօրների արարողությունը, առավտոյան ժամը 10-ին, Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, նամինապետ սուրբ պատարաց է մատուցում Կ. Պողոս նայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արքեպոս Գապանեցյանը:

Ա. պատարագի արարողությունից նետո Եկեղեցական մեծանանելս թափորը, սկիզբ առնելով Վեհապատից, ձգվում է դեպի Մայր տաճարի առաջ պատրաստված բեմ:

Քահանայապետական լին զգաստավորման մեջ Եկեղեցական թափորը գլխավորում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ շրջապատված Մեծի Տաճի Կիլիկիո Կաթողիկոսով, Տ. Թորգոն և Տ. Գարեգին Սրբազն Պատրիարքներով, որոնք տոնական և նամինապետ զգաստավորության մեջ իրենց դիրքի և սրչությի նախաձայն, ինչպես նաև 12 եպիսկոպոսներով ու արքակիւլպությունով, որոնք մասմակցելու են սուրբ մեռոնի օրմնությամբ:

Թափորի առջնից ընթանում են կարմրագետություն, շրապինի երկու շաբթիները՝ արծաթագլուխ զափազաններով: Նրանց նետում են շաբաթիրները, որից նետո գալիս են նոգենու ճեմարանի ուսանողները, շորջապատճենություն վարդապետները ու քահանա նայերը: Թափորի կենտրոնում երկու վարդապետներ կրում են խաչքառ ու նախապետական զափազանը, իսկ երկու սարկապատեր՝ և մեռոնի կաթոսի ուկեթել երիզներով բանված սպիտակաթուր շղարշը: Նրանց նետում է սրբազնություն մեռոնի օրմնության կնքանացը՝ Գևորգ Հովհաննեանը (Նյու Ջրքի):

Ծրելագգեստ առաջնում է 12 արքակիւլպությունների և եպիսկոպոսների շրաբնությունը՝ մասմարներով, արծաթապատ Ամենապատմերով և այլ սրբություններով: Մեծի Տաճա Կիլիկիո Պատրիարքին և Պատրիարքության այլ նամինապետական առիթով կրում է Կիլիկիան Աթոռից թերված մեռ-

նով լի սափորը, Ամենապատիվ Տ Թորգում Պատրիարքը տանում է աստվածամուխ Ս. Գեղարքը, Ամենապատիվ Տ. Գարեգին Պատրիարքը՝ Ս. Կենաց փայտը, Ներսէ արքեպոս. Պողապալյանը՝ Լուսավորչի Ս. Աջը, Տ. Զավելն արքեպոս. Չինչինյանը՝ անուշարոյց ծաղիկներով անոթը, Տ. Գրիգորիս եպոս. Բունիաժյանը՝ բալասանով անոթը, Տ. Խաճակ եպոս. Պարսամյանը՝ հին մեռնուր, Տ. Վաչէ արքեպոս. Հովսեփյանը՝ Ս. Արիատակես Հայրապետի աջը, Տ. Արսէն եպոս. Քերերյանը՝ Ս. Թադեոսի աջը, Գյուտ արքեպոս. Նագաշյանը՝ Ս. Հակոբ Մարտիրոսի աջը, ինչ Տ. Գարեգին եպոս. Ներսիսյանը, Տ. Աղան եպոս. Պալիոզյանը, Տ. Գիսակ եպոս. Մուրադյանը տանում են արծաթապատ կազմերով Ս. Ավետարաններ:

Վեհափառ Հայրապետը հներաց օրինում է բազմահազար հավատացյալներին և ոխտավորներին, որոնք երկուղածությամբ գուխ են խոնարհում հայրապետական Ս. Աջի առաջ: Հայոց Հայրապետի աջ և ամյակ կողմերով բայցում են Տ. Ավագ եպոս. Աստուրյանը և Տ. Հովհան եպոս. Տերտերյանը՝ որպես փեշակիրներ:

Հայրապետական թափորին մաս են կազմում քոյր Եկեղեցիների պատգամավորները, որոնք տեղ են գրավում Հին Վեհարանի առջևում այս առջիկ պատրաստված մասնալոր բեմի վրա: Հարթակի վրա են գտնվում Հայաստանի խորհրդարանի նախագահ Տիգր Լուն Տեր-Պետրոսյանը և պաշտոնական այլ անձինք:

Բնամարթակի աջակողմյան դասում կանգնած Մայրավանքի երգչախմբի անդամները, Մայր թռող վարդապետների և սարկավագների հետ միասին, երգչախմբի ղեկավար Խորեն Մելիսանեցյանի գլխավորությամբ, կատարում են մեռնորհնության շարականներն ու մեղեդիները:

«Հրաշական Աստուած» շարականի վեհ հնչյունների ներքո, Տրդատյան կամարակապ դուռ միջով, Եկեղեցական համբխավոր թափորը, Վեհափառ Հայրապետի գլխավորությամբ, բարձրանում է կանգակատան առաջ պատրաստված բեմ-խորանի վրա՝ կատարելու սրբալոյս մեռնի օրինությունը: Նույն պահին վեհ ու հաղթական թնդում է «Ուրախ լեռ» շարականը, որ հոգեկան անպատում բերկրանքի ու խնդրության հովզերով է համակում բոլորի սրտերը:



Արդարին այսու ուրախ է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, քանզի ամենուր լույս է, խոնկ և աղոթք:

Հայոց Հայրապետը բազմում է «յաթոռ և երկուտասան եսխսկոպոսներ կալով շրջապատ առաջի, ուներով ի ձեռ խրեանց զուրք նշան Կենաց, զԱշ Սրբոյ Լուսաւորչին և զնշխարս սրբոց և մեռնաշիշ մի լցեալ հին մեռնաւ»:


Մեռնորհների հոգեհովով ու սրտահովով արարողությունը ուղիղ եթերով ցուցադրվում էր հանրապետության հեռուստառեսությամբ:

Ակավում է սրբալոյս մեռնի օրինության մեծահանդես արարողությունը: Սրբազն եպիսկոպոսները «Կանոն օրինութեան սրբալոյս մեռնի» հրահանգի համաձայն Ս. Գրիգ կատարում են համապատասխան հատվածների ընթերցումներ սուրբ յուղի պատրաստության հոգեոր, աստվածային նշանակության և նրա գործածության մասին: Այնուհետև Վեհափառ Հայրապետն ընթերցում է մեռնորհների մեծ աղոթքը. «Ար զօրությունը ամենասուրբ Հոգոյի եղիցի ինչս ապ՝ իոլ ցածութեան, զգեստ լուսաւորիչներ, օծումն թագաւորութեան, սրբութիւն հոգուց և մարմնոց, շնորհք հոգեպատճեան, պահապան Կենաց, Կնիք արդարութեան, զես հաւատոյ, համա-

ՀԱՅՈՒԹՅԱՆ ՏՐՈՅՆՈՐԻԴ ՔՈՎԱՐԱԿԱՆ ԽՈՎՄԱՆ ԹՐԱԴԱՐԱՄԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՏՐՈՅՆՈՐԻԴ ՔՈՎԱՐԱԿԱՆ ԽՈՎՄԱՆ ԹՐԱԴԱՐԱՄԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԱՎԱՐԱՐԱԿԱՆ ԽԵՂԱՔԱԿԱՆ ՀԵՏՈՒԹՅՈՒՆ



տակ հայթող ընդունելով ամենայն գործոց բանապիտին, ոգուց փրկութիւն, ցնծութիւն սրտից, ուրախութիւն խախտենական, զի որ ոք օծի ի աման՝ վերստին ծննդեան իշուկ, երկիրաց լիցի յԱստուծոյ և ամերկիու հակառակորդէն»: Ապա երգեցիկ խոսքը մեղմորեան երգում է «Որ յառաջագոյն յօրէն» մեռութիւնության սրտառուց շարականը, «Մեղեդի մեռոնի՝ Հայր Սան Կիլիկի Կաթողիկոսը կարդում է մեռութիւնության երկրորդ և երրորդ մեծ աղոթքները: Այնուհետև «լինի բացումն դրան հիթոյ մեռոնի». Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հովհաննիկ արքեպոս. Սանթորյանը հրավիրում է սուրբ մեռոնի կնքամորք՝ բաց անելու մեռոնի կաթոսայի կաֆարիչը, և հենց այդ պահին էլ դպրոց խոսքը ոգևորությամբ եղանակում է «Բացեր, Տէր, այսօր զգանձդ երկնային» շարականը: Կիլիկյան Սթոռի Գահակալը մոտենում է կաթոսային և նրա մեջ լցնում Անժիլիասից բերված մեռոնը: Ապա Սան Կայոց Կաթողիկոսը հանդիսավորապես մեռութիւնության արծաթյա կաթոսայի մեջ է թափում «զնիւթ ծաղկանցն և ապա զբաղասանն, և զկնի զիին մեռոնն»: Այս խորհրդավոր պահը կատարվում է «Սոսպելոյ աղաւնոյ» հոգեցունց շարականի երգեցողության ներքո: Եվ հենց նույն պահին էլ տոնական հնչում են Մայր տաճարի զանգակատան զանգերը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Կենաց Ս. Փայտով, Ս. Գեղարդով և Ս. Գրիգոր Լուսավորչի աջոկ երեք անգամ տեառնագրում և խառնում է նոր մեռոնը՝ երգելով. «Օրինեսից և սրբեսից մեռոնս այս նշանա»: Մյուս սուրբ մաստինքներով ևս տեառնագրվելուց հետո, կաթոսան ծածկվում է կափարիչով, և Վեհափառ Հայրապետը կարդում է վերջին աղոթքը. «Արդ, այժմ և մեր պատրաստելով զայ որպես կաթն մատուցանեմք, զի ամենեքան որ ի ամանէ առնուցում՝ արժանի լիցին ընդունել զիաստառուն կերպուր, զճշմարիտն, զերկնայինն՝ ի շնորհաց միածնի քո Տեառն մերոյ շիտսի Քրիստոսի...»:


«Եւ այժմ ծագեա ի սիրու մեր զպարգևս բարութեան Հոգուոյ Սրբոյ, և հաղորդակից երեւեցո զմեզ պարգևաց քո սրբոց, վասն զի դու իսկ ես մեռոն անբիծ, և մաքուր և անուշու, որ հանապազ բուրես յանձինս սրբոց քոց»:

Ապա Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով ավարտվում է սրբալու մեռոնի օրինության համազգային հանդիսավորունք:

Այս նվիրական արարության ավարտին Սան Կայոց Հայրապետն իր ոգեշտունչ բարողն է խոսում վեր հանելով սուրբ մեռոնի հոգեսր խորհուրդն ու իմաստը մեր ազգային գիտակցության մեջ:



Կարդանցում է մար Տիրոց՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանը



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԻՆ Ա.-Ի
ԽԹՍՔԸ ՄԻՒՐՈՆՈՂՆԻԹԵԱՆ ԱՌԹԻ
(29 Անպետմբեր 1991 թ.)

«Յանոն Հօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ». ամէն:

«Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ Ամա»:

Սիրեցնալ հոգնոր զաւակներ Մեր,

Այսօր, երբ Սուրբ Էջմիածնի կամարների տակ հաւաքուած, օրինեցինք սրբապոյ միտոնք, յիշենք որ շատ դարեր առաջ Սուրբն Գրիգոր՝ մեր Լուսաւորչի հրաշք տեսլիքով, իհաւ այստեղ Որդին Աստուծոյ, Փրկիչն մեր Քրիստու և նրա հետ՝ նաև լոյսը փառի:

Այդպէս է, որ Հայաստանում հոչակուեց քրիստոնէական հաւատքը իրեն պաշտօնական կրոնը համայն հայ ազգի, որի ծոցում, դեռևս առավելական դարից, սկսել էր տարածուել սուրբ Աւետարանի աստուածային խոսքը: Բայց մանաւանդ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի քարոզչութեամբ ու հրաշալի գործունեութեամբ, և հայոց Տրդատ թագաւորի դարձով ու մկրտութեամբ, նոր հաւատքը վերջնապէս յաղթանակեց, և հիմքը դրուեց ու կազմակերպուեց Հայաստանեաց Առաքելական Սուրբ Եկեղեցին, կենտրոն ունենալով հենց այս տեղը, որ իշել էր Միածին Որդին Աստուծոյ:

Այդ օրուանից հայ ժողովորդի հոգու աշխարհը սկսեց շաղախուել Քրիստոսի Աւետարանի լոյսով:

Այդ օրուանից հայ ժողովորդը սկսեց ապրել հոգնոր նոր վերածընունդ:

Այդ օրուանից հայ ժողովորդը սկսեց պայծառակերպուել և դառնալ ստեղծարար ազգորդին:

Վկայ է պատմութիւնը, որ քրիստոնէութեամբ հայ ազգը դարձաւ համաշխարհային երևոյ:

Սպո՞, համաշխարհային երևոյ, նախ՝ որովհետև նա առաջինը հանդիսացաւ, որ 301 թուականին իր սիրտը բացեց Քրիստոսի Աւետարանի լոյսին ու նոր հաւատքը հոչակեց ազգային պետական կրոն, իսկ հայոց Տրդատ արքան, եղաւ առաջին թագաւորը, որը մկրտուեց քրիստոնեաց:

Ինչպէս յայտնի է, 813 թուականին Հռոմի կայսը՝ Կոստանդիանոս, Միլանի հրովարտակով քրիստոնէութիւնը հոչակեց լոկ արտօնեալ կրոն Հռոմէական կայսրութեան տարածքի վրայ և ինքը մկրտուեց շուրջ տասը տարի յետոյ միայն:

Հայ ժողովորդը, քրիստոնէութեամբ, դարձաւ համաշխարհային երեւոյ նաև իր հինգերորդ դարի Ռուսեղարով, երբ աշխարհում կազմաւորուեց ու ճառագայթեց մի նոր մշակոյթ, մի ազգային ինքնատիպ նոր ոգեկանութիւն, որի ստեղծած արժեքները իրենց մնալուն տեղն են գրաւել միշագային քաղաքակրթութեան պատմութեան մէջ մինչև մեր օրերը:

Եւ վերջապէս հայ ժողովորդը, քրիստոնէութեամբ դարձաւ համաշխարհային երեւոյ նաև Վարդանանց պատերազմով, որ աշխարհի պատմութեան հորիզոնին վրայ հանդիսացաւ առաջին պատերազմը վասն խոճի, վասն հաւատի ազատութեան: Վարդանանց նահատակութիւնը հայոց պատմութեան մէջ մնաց մինչև մեր օրերը, խորհրդանշիշը մեր ազգի ազատատեսն ոգու, մեր ազգի անկախութեան տեսչի:

Այս օրերին, երբ մեր մայր հայրենիքը հոչակել է իր պետական ան-

կախութինը, Հայ Առաքելական Եկեղեցին բարձրադաշտ ողջունում է այդ հոչակումը, այն գիտակցութեամբ, որ ինքը՝ Հայ Եկեղեցին, իր սկզբանարժան ժամանակներից մինչև մեր ժամանակները պահել-պահպանել է անկախութեան գաղափարը, հոգևոր կեանքի մակարդակի վրայ: Դարեր շարունակ բռնատէրի լծի տակ հայ հաւատացեալը ինքն իրեն զգացել է ազատ ու անկախ միայն իր մայր Եկեղեցու կամարների ներքոյ:

Արդար է հետևարար, որ Հայ Եկեղեցին ճանաչուի նախավկան, ճախակարապետը մերօրեայ պետական անկախութեան:

Հայ Եկեղեցին, ինքնիշխանութեան ու անկախութեան գաղափարը իրականացրել է դարեր շարունակ նաև այլ Եկեղեցիների հետ իր յարաբերութիւնների ճանապարհին:

Քրիստոնեայ մեծ Եկեղեցիներ, Բիզանդական շրջանից սկսած, յանախ ձգտել են իշխել Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի հոգու վրայ ու խափանել նրա ազգային ոգեկանութեան անկախութինը: Այդ տեսակիտից Հայ Եկեղեցու պատմութիւնը մի հերոսամարտ է՝ ընդդեմ նման օտար Եկեղեցիների նուաճողական ձգումների:

Հայ Առաքելական Եկեղեցին այսօր էլ եղբայրական սիրավիր յարաբերութիւններ է կամենում պահել բոլոր քրիստոնեայ քոյր Եկեղեցիների հետ, Եկումենիկ ոգով, սրբութեամբ պահպանելով սկայան իր դաւանանքը և իր ներքին վարչա-կազմակերպաշական ազգային անկախութիւնը: Հայ ժողովրդը երբեք պիտի չկամենայ կախման մէջ լինել այլ Եկեղեցական կենտրոններից: Եւ երբեք պիտի չհանդուրժի, որ այլ Եկեղեցիներ մարդու բուրժեամբ զրադուն մեր ազգի ծոցում՝ Հայաստանում թէ սփիտքում:

Հայ Առաքելական Եկեղեցին հնագոյն վատերական քրիստոնեական սկզբաներից մէկն է և կարիքը չունի դրսից կրօնական-Եկեղեցական ուսմունք ներմուծելու:

Այսօր, մեր անկախ պետութեան հոչակումով, այժմեութին է ստանում նաև հայ ազգի Եկեղեցու հոգևոր անկախութեան ամրապնդման հրամայականը, իբրև հայ ժողովրդի միակ հարազատ Եկեղեցին, անկախ օտար կրօնական կենտրոններից:

Մեր նոր ինքնիշխան պետութեան անկախութեան հիմքերից մէկն է նաև հայ ազգի Եկեղեցու անկախութիւնը և ինքնիշխանութիւնը:

Մենք դաւանում ենք Հայատամբը՝ մէկ ազատ ազգութիւն,
մէկ անկախ պետութիւն,
մէկ անկախ ազգային Եկեղեցի:

Այս հաւատամքով, այս գիտակցութեամբ, Սուրբ Հոգու գօրութեամբ օրհնուած այս սրբալոյն միուննը Մենք հոչակում ենք անկախութեան միունու:

Հայեր, հոգևոր զաւակներ Մեր, այս սրբազան միուննվ՝ միացէք, եղբայրացէք, եղէք մէկ կամք, եղէք մէկ ուրախութիւն, եղէք մէկ ցաւ: Նոյն մէկ ազգ, մէկ ընտանիք, մէկ ժայռացած երդում և հաւատացէք մեր այս մի բոլոր հայրենի հողին ու նրա գալիքին, սուրբգրական Արարատի հայեացքի տակ, Սուրբ Էջմիածնի օրհնութեան ներքոյ:

«Քանիզ ո՞վ է մեր յոյս, կամ խնդութիւն կամ պահ պարծանաց մերոց, եթէ ոչ դոյք ժողովորդ մեր, առաջի Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի ի նորա գալստեանն: Զի դոյք էք փառք մեր և խնդութիւն» (Ա. Թեսադ. Բ. 19—20): Այժմ և միշտ, ամէն:

ՀԵԴՈՒԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Սրբալոյս մեռնի օրինության արարողության ավարտից հետո, Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թափորով, «Հայրապետական օրիներգի» վեհաշոնչ երգեցողության ներքո, առաջնորդվում է Վեհարան՝ օրվա տոնի առթիվ ընդունելով շնորհավորությունները: Այս առիթով Վեհարանի սեղանատանը տրվում է պաշտոնական ճաշկերույթ, որին մասնակցում են Հայաստանի խորհրդարանի նախագահ Տիգրան Ավագ Անդրանիկ Սեր-Պետրոսյանը, պատգամավորներ և ոլխուավորներ:

ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՂՋԹՔ ԾԻԾԵՌՍԱԿԱԲԵՐԴՈՒՄ

Սեպտեմբերի 30-ին, երկուշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Ամենայն Հայոց Վազգեն Ա Կաթողիկոսի գլխավորությամբ, Հայ Եկեղեցու պատգամավորները, քոյլ Եկեղեցիների ներկայացուցիչներն ու հյուրերը, ծաղկեցներով ու ծաղկեպասակներով այցելում են Ծիծեռնակաբերդի հայ ճահատակաց հուշարձան:

Նահատակաց հուշարձանի հավերժական կրակի շորջ բոլորված, Հայ և քոյլ Եկեղեցիների հոգևոր դասը միասնաբար աղոթում են անմեղ ճահատակ հայորդիների հոգիների խաղաղության և հանգստյան համար:

Նոյն օրը, ժամը 12-ին, Հայ Եկեղեցու հոգևորականաց դասին և քոյլ Եկեղեցիների ներկայացուցիչներին ընդունեց Հայաստանի Խորհրդարանի նախագահ Տիգրան Ավագ Անդրանիկ Սեր-Պետրոսյանը: Նա մեկ անգամ ևս շնորհավորեց Վեհափառ Հայրապետին մեռնօրինության առիթով և, բարձր գնահատելով Հայ Եկեղեցու և հոգևորականության ները մեր ժողովրդի կյանքում, ողջունեց նրա վերագրաբռնքի նոր ուժին:

Երեկոյան ժամը 19.30-ին Արամ Խաչատրյանի անվան համերգային սրահում Արարատյան հայրապետական թեմի «Մանկունք» երգախմբի և Մայր տաճարի երգեցիկ խմբի կատարմամբ սովորական համերգ կազմակերպվեց, որին իրենց օրինությունն էին քերել Ամենայն Հայոց Հայրապետը, Մեծի Տանն Կիլիկի Կաթողիկոսը, մեր նվիրապետական մյուս Աթոռների պետերն ու ներկայացուցիչները, թեմակալ առաջնորդները և քոյլ Եկեղեցիների պատգամավորները:

Հոկտեմբերի 1-ին Վեհարանում, Վեհափառ Հայրապետի բարձր ճախագիտությամբ, տեղի ունեցավ եպիսկոպոսաց խորհրդակցական ժողով, որտեղ քննարկվեցին մեր Եկեղեցու և ժողովրդին հոգող տարրեր հարցեր:


Մայր Աթոռ ժամանած հյուրերը հոկտեմբերի 2-ին, հրաժեշտ տպով Ամենայն Հայոց Կաթողիկոսին և շնորհակալություն հայտնելով նրա շերմ ու հոգատար վերաբերունքի համար, մեկնում են անմոռաց տպավորություններով:

Մայր Աթոռում գտնվելու շրջանում հյուրերն այցելեցին հանրապետության տեսարժան վայրերը, եղան Գառնիի տաճարում, Ս. Գեղարդա վանքում, Խորվիրապում, Աւանում, այցելեցին թանգարաններ և մշակութային

կենտրոններ, ծանոթացան ինքնիշխան Հայաստանի դժվարություններին և նոր հվաճումներին:

Բոլոր պատգամավորներն ու հյուրերը կարոտակեզ շրթներով համբուրեցին մեր սուրբ վանքերի խնձօքով քարերը, հոգևոր շունչ ու ջերմություն ստացան հայոց սրբազան հողից և հայրենի աշխարհից հեռացան ապագայի լուսավոր ու գեղեցիկ տեսիլքներով:





ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՈՒՊԵՏԻՆ ԾՆՍԴՅԱՆ 83-ՐԴ
ՏԱՐԵԿԱՐՁԻ ԱՌԹԻՎ.

Սույն թվականի սեպտեմբերի 20-ին, որքաթ օրը, Նորին Սույր Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուսմինահայ նախկին մի խոմք աշակերտներ այցելեցին Մայր Աթոռ Ա. Էջմիածին և շերմորեն ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից: Նրանք եկել էին հայտնելու իրենց սրտագին երախտագիտությունը Հայոց Հայրապետին և շնորհավորելու նրա ծննդյան տարեդարձը՝ այս անգամ արդեն 83-րդը, և ցանկալու երկար տարիների քաջառողջ և բեղուն ազգանվեր գործունեություն:

Աշակերտները արտասանեցին իրենց սրտի խոսքերը սիրելի ուսուցչին:

ԶԵՐԴ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր հորելյանական տարեդարձին ճշվում է հորելյարի կյանքի անցած ողին, նրա վաստակը և արժանիքները: Սակայն Զերն այլ է: Զեզ գնահատում և Զեր վաստակն ու արժանիքները ուկյա տառերով պատմությունն է գրում: Խև մենք՝ Պուրեշի Միասքյան-Քեսիմյան ազգացին վարժարանի Զեր նախկին սաներս, այսօր, մայր հայրենիքում, որպես համայն հայ ժողովրդի մեկ մասնիկը, եկել ենք Զեր սրբացած Աջք համբորելու, մատթելու քաջառողջություն, երկար կյանք ու նորանոր հաջողություններ Զեր աստվածանվեր ու ազգանվեր հանապաօրյա գործունեության մեջ՝ ի փառ մեր Եկեղեցու, մեր ժողովրդի և վերածնված Հայատանի: Անկասկած, նոյնպիսի շերմ զգացմունքներով և մաղթանքներով համակված են նաև համայն Սփյուռքում ապրող Զերդ Սրբության նախկին աշակերտները:

Զերդ Սրբության հովության 35 տարիները միաժամանակ փոյտրկալի ու երշանիկ ժամանակագրության տարիներ եղան:

Չեր իմաստուն և ազգանվեր հովվության շնորհիվ Հայաստանյաց Սուպերկանա Եկեղեցին վերածնունդ ապրեց, վերականգնվեցին պետության և Եկեղեցու միջև բարի հարաբերություններն ու համագործակցությունը, որոնք բնորոշ են եղել մեր ազգի հազարամյակների պատմության համար:

Հայաստանն իր բազմահազարամյա պատմության ընթացքում ունեցել է 10-ից ավելի մայրաքաղաք, սակայն Հայ Սուպերկանա Եկեղեցու Մայր Աթոռոր միշտ եղել է Սուրբ Էջմիածինը:

Չեր կանքի հավատամքը Դուք ընտրել և նրանով առաջնորդվել եք դեռևս Չեր երիտասարդ տարիներին, մինչև Ս. Էջմիածին նվիրվելը: 1937 թ. հունիսի «Հերկ» ամսագրի առաջին համարում այն ժամանակ տակավին երիտասարդ գրականագետ և լրագրող Լևոն Կարապետ Պալճյանը, հայ հասարակությանը և մասնավորապես հայ երիտասարդությանը դիմելով, գրում էր. «Ամեն հայ մտավորականի ու երիտասարդի առաջին պարտքըն է իր մտքով ու հոգիով վերածվել հնոցի մը, մեր հավաքականության պատկանող խնդիրները մտածելու նախակով ու զանոնք նոր ձևերով, նոր լուծումներով դարձնելու հավանարով»:

Կարծես այսօրվա մեր իրականությունը կանխատեսում էր ապագա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, երբ ազգի ապագայի համար ծրագրեր էր նշում. «Պետք է ազգային հասարակական մտածումի տիմիրինը ատելած: Որպեսուն, մանավանդ հետայսու, ազգովին մտածելով միայն կարելի է ազգովին ապրել:

Որպեսուն մտածելով միայն կարելի է արդի կյանքի «ոլիոմին» հետևել:

Որպեսուն ազգային ճակատագրական հանգուցները մտածելով միայն կարելի է լուծել»:

1988 թ. դեկտեմբերի 7-ի ողբերգական արհավիրքից հետո Դուք, Չերդ Սրբություն, չընկալվեցիք, այլ ընդհակառակը, պետության դեկափառների կողքին ոչ մի ճիզ ու եռանդ շխանցեցիք և երիտասարդական ավոնով լծեցիք երկրաշարժի հետևանքները թթվացնելու ու խոր վերքերն անորելու հիբավի մարդասիրական ու ազնիվ գործին: Հենց այդ աղետայի օրերին էր, որ մեկ անգամ ևս հաստատեցիք ապագա գործունեության կարգախոսը՝ «Մեկ հայրենիք, մեկ Եկեղեցի, մեկ ժողովորդ»:

Փոյտորկափի վերջին երեք տարիների ընթացքում, լինելով ժողովորդի նետ, Չերդ Սրբության իմաստուն խորհուրդներով և քայլերով միշտ ցույց եք տալիս մեր պայքարի ճիշտ ողին և միջոցները՝ զերծ պահելով մարդկանց ծայրահեղություններից և անխոհեմ քայլերից:

Հայ Սուպերկանա Եկեղեցու հիմնադրման առաջին խոկ օրից մեր սուրբ Հայրապետությունը և Եկեղեցին ծառայել են ժողովորդին՝ ապահովելով նրա թե՛ հոգեկան, թե՛ մշակութային վերելքը: Եթե ճիշտ է, որ կրոնը քաղաքակիրության միջև ուժն է, ապա դրա վառ ապացուցը հանդիսանում են մեր Հայ Սուպերկանա Եկեղեցին և նրա սուրբ Հայրերը, որոնցից վերջինը՝ 130-րդը, Դուք, Չերդ Սրբություն, նոր շունչ ու նոր ոգի տվեցիք Մայր Աթոռին և մյուս թեմերին:

Մենք, համայն աշխարհի հայեր, բախտավորությունն ունենք լսելու, տեսնելու և կարդալու Չերդ Սրբության իմաստուն, խորաթափանց, հուսադրող ու ոգևորող խոսքը: Դուք վերադասիարակում եք մի ժողովորդ, որը տասնյակ տարիների ընթացքում մոլորության մեջ էք ընկել: Չերդ Սրբության աստվածանվեր և հայրենանվեր այս գործունեությունը ուկյա

թելի նման փայլել է Հայրապետական Զեր ամբողջ կենսագրության ընթացքում: Զերդ Սրբության փետրվարի 14-ի 1991 փրկչական ամի և ի տումարին Հայոց Ուժև կոնդակում, խոսելով Ավարայրի ճակատամարտի բախտորոշ հշանակության և Ս. Վարդանանց անմահության մասին, շեշտում եք. «Մեր ժողովուրդը պետք է լսվ ճամաշի ինքն իրեն, ուղիղ հասկանա իր հարազատ ազգայինը, և սրբությամբ պահի պահպանի ամբողջ ու աւաղարտ ու աննվագ այն, ինչ ստեղծվել ու հորինվել է դարերի ընթացքում մինչև մեր օրերը, և այդ ակունքների ավլունով հսկեցած, հոգու նոր թոփշքով ու թարմ ուժերով, համամարդկայինը պայծառակերպելով ազգային ձևերի մեջ, բեղմնավորի իր նոր կյանքը, և հարատացնի իր ազգային մշակույթի բազմադարյան գանձարանը նոր վակերական արժեքներով, նոր խույս ասելով մեր պատմությանը և համայն աշխարհին:

Մենք՝ հայերս, չպետք է մեզ շփոթենք այլ հին ժողովուրդների հետ, որնք իրենց հոգեւոր ու ազգային մշակույթի ուկերարը ստեղծել են մեզանց շատ դարեր առաջ, ինչպես օրինակ՝ հրեաները՝ Ծավիթ-Սողոմոնյան շրջանում Քրիստոսից հազար տարի առաջ, կամ հելլենները՝ Պերիքլեսյան դարում, Քրիստոսից հինգ հարյուր տարի առաջ: Սուրբ Էջմիածնին՝ մեր Սողոմոնի տաճարն է, մեր ուկյա հինգերորդ դարը մեր Պարթենոնն է, Ավարայրը՝ մեր Թերմովիթիւնն է»:

Ինչպես ժամանակին Բոխարեատում Կայձակին, իհաճ և որիշներին օգնեցիք կրթություն ստանալու, այնպէս էլ Զեր Հայրապետության ՅՅ տարիների ընթացքում Գևորգյան ճեմարանը նորից դարձել է Հայ Սուաքելական Եկեղեցու հոգեւոր ու մտավոր դարբնոցներից մեկը, որտեղ Զերդ Սրբության իմաստուն և նպատակավագ դեկավորության մերք աստվածանելու ու խոստումնայի երիտասարդներն ստանում են հոգևորական բազմակողմանի կրթություն: Նրանցից լավագույնները շարունակում են իրենց կրթությունը Խորհրդային Սիոնիթյան և աշխարհի տարբեր համալսարաններում:

Ընորհիվ Զերդ Սրբության ստեղծվել է հայ մտավորական հոգևորականություն, որը կկարողանա ժողովրդին ծառայել մեր Եկեղեցու և ազգի ավանդությունների ոգով:

Փիլիտփա, աստվածաբան, քաղաքագետ, հոեստոր, մամկավարժ, գրականագետ, արվեստագետ,— այսպէս է գնահատում Զերդ Սրբությանը ոչ միայն մեր ժողովուրդը, այլև օտարը:

Զերդ Սրբության կյանքի յորաքանչյուր օրը, հիրավի, բազմահատոր փառավոր պատմության մի լուսավոր էջ է:

Սոլորենք և խնդրենք Տիրոջը, որ Զեր կյանքի օրերը բազմանան, լինան որախայի ու երշանկաբեր՝ ի փառ Հայ Սուաքելական Եկեղեցու, հայ ժողովրդի ու պետականության:

Հ. Թ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական ինստիտուտի օտար և լատիներեն լեզուների և բժշկական տերմինաբանության ամբիոնի փարիչ, դոցենտ

Ամենամյա սովորությամբ, Վեհափառ Հայրապետին շնորհավորելու իր եկեղ հան Սրբաւայան հայրապետական թեմի Աերկայացուցիչները՝ բերելու իրենց որդիական հավատարմությունը ու երախտիքը Ամենայն Հայոց Հայրապետին:

ՎԵՀԱՓԱԾՈ ՏԵՐ

Թույլ տվեք Սրբաւայան հայրապետական թեմի համայն հավատացյալների անումից շնորհավորել Զերդ Ս. Օծությանը, Զեր Վեհափառության ծննդյան 83-րդ տարեդարձի առիթով:

Խճճ համար անգնահատելի պատիվ ևս համարում մեր բոլորին անվերապահ գգացումների քարգմանը լինել՝ հայտնելով Զերդ Ս. Օծության մեր բոլորին նվիրվածությունը և ծառայելու մշտական պատրաստակամությունը մեր դարավոր Ս. Եկեղեցուն և նրա արժանավոր գահակալին:

Վեհափառ Տեր, մեր ազգի վերջին այս մի քանի տարիների ճակատագրական շրջանում Զերդ Ս. Օծությունը հանդիսացավ Ավետարանի քաջ հովիվը, որ միշտ արթուր հսկում է իր իստին: Զերդ Վեհափառության հաւախակի երլութները, մամր ատուխները, քաղաքական առողջ և հեռատես գործունեությունը փարուս հանդիսացան մեր ժողովորի ճիշտ կողմնորոշման:

Շնորհիվ Զերդ Ս. Օծության շանքերին, վերածնունդ է ապրում Հայ Առաքելական Ս. Եկեղեցին՝ վերստանենելով իր պատմական դերը հայ ժողովորի կյանքի մեջ:

Իրականանում է Զերդ Ս. Օծության 1956 թ. Կանիքեռում խոսած մարդարեաշունչ այն քարոզը, որ նշում էիր, որ առաջնորդելու եր մեր ժողովորին, ինչպես Մովսես Մարգարեն, դեպի Երկիր Ավետյաց:

Երկար և բեղմնավոր կյանք, Վեհափառ Տեր, և տա Աստված, որ Զեր հայրապետության օրոք իրականանան մեր ազգի արդար երազները:

ԼԵՎՈՆ ԿԱՐԱՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱՊԱՐԳԵՎ ՎԵՀԱՓԱԾՈ ՀԱՅՐԻԿ

Թույլ տվեք Զեր Սույր ծննդյան 83-րդ երջանկարեր տարեդարձի այս սրբազն պահին Սրբաւայան թեմի Հայ Եկեղեցու Երիտասարդաց Միության բոլոր անդամների՝ պատանիների և երիտասարդների անումից պըրտանց շնորհավորել Զեզ և ասել. մենք մեր անմեղ հոգիներով ու շորթենով, բոլորս միակամ և միահոգի, խորին երկլուղածությամբ աղոթում ենք ու և եռանդ ու երկա՞ր, շատ երկա՞ր տարիների կյանք, որպեսզի Զեր օրինությամբ բացեք Երևանում կառուցվելիք նոր Մայր Եկեղեցին:

Վեհափառ Հայ,

Մենք՝ Միության Աերկայացուցիչներս, եկեղ ենք Զեր օրինությունը ստանալու, որպեսզի Զեր խորենը լույսի նման քափանցեն մեր հոգիներությամբ:

բից ներս, իմշայես առավոտյան թարմ ու մաքոր ցող իշխեմ մեր վրա, որպեսզի մեր հավատը մնա ամսասամ, մեր կյանքը՝ լուսավոր:

Չեր օրինությամբ Արարատյան թևմում հնարավոր եղանգ մեկ տարի ստաց կազմակերպել մեր Միությունը և մեզ համախմբելով: Սյուօր մեմբր Հայաստանի պառավիմենոյի մեջ ամենաերջամփենմերն ենք, այն առաջիմեները, որ աղոթել սովորեցիմք, մեր նոգիմերը վերանորոգեցիմք և ըմբռնեցիմք բրիսունեական կրոնի ողջ վեճությունը, բարձր բարդականությունը, մարդադրական ոգին, Հայ Եկեղեցու գործունեությունը, նրա դերն ու մշանակությունը: Վեմափառ Հայր, թոյլ տվեր ասելու, որ այսօր մեր բոլոր հասակակիցները սիրում են Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցին, նրա պետին Զեզ՝ Հայոց Հայրապետին, սիրում են ազատ ու անկախ դարձող մեր Հայրենիքը, մարդեմի լեզուն ու մշակույթը: Մենք մեզ հսկարտ ենք գգում նաև լինելու և բրիսունյա լինելու համար, Սուրբ Էջմիածին ու մենալու համար: Թոյլ տվեր մեր շնորհավորամբներին միացմել նաև մեր խորին շնորհակալությունները՝ Խրիստոսարդաց Միության համեմայ Չեր և Գարեգին Սրբազնան Հոր ցուցաբերած մոգատարության համար և ասել:

Կեցցե՞ Սուրբ Էջմիածինը, հավերժ ու ամսասամ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հարորդաց սիրելի Վազգեն Սուաչին Հայոց Հայրապետությունը:

Օրինեցի՞ք մեզ, Վեմափառ Տեր, և թոյլ տվեր մեր բոլոր հասակակիցների ամուսից մեկ անգամ ևս շնորհավորել Զեզ, Չեր ծմնդյան օրվա առթիվ, և համբորել Չեր սուրբ աջը:

ՆՈՒՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ

*

*

Հատկապես նուզից էր պատերազմի և աշխատանքի վետերանների այցելությունը: Նրանք նկել էին արևավիրքի և տառապանքների բոլով անցած կենսափորձով իրենց որդիական հավատարմությունը հայտնելու Հայոց Հայրապետին:

ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏ

Պատերազմի և աշխատանքի վետերանների համամայլական «Ավագանի» միության պատվիրակությունը պատիվ ունի այսօր, 1991 թվականի սեպտեմբերի 20-ին, Էջմիածնի Չեր սուրբ օշախում ուշումնելու Զեզ՝ ծմնդյան 88-րդ տարեդարձի առթիվ:

Սրբազն Հայրապետ, մեծ բաղաբացի, նայ ժողովրդի արժամի զավակ, մեզ բոլորին բաշ հայտնի են Չեր ծառայությունները, հայտնի է, որ Դուք Չեր ամրող գիտակից կամքն ու գործունեությունը նվիրել եք ժողովրդների բարեկամությամբ, Չեր արժամի ավանդն եք մատուցել այդ բարեկամությունը ավելի հշանակալից ու բովանդակալից դարձնելու համար: Չեր արած գործերը միշտ են յուրաքանչյուր բարի մարդու ուշադրությունը, արժամանում նայ ժողովրդի համակրանքին:


Բարի երթ Չեր բարի գործերին: Թող Աստված իրականություն դարձի Չեր բարի ցանկությունները:

Թող Աստված պարզեի Ձեզ, սիրելի Վեհափառ Հայրապետ, երկար կյանք, երջանկություն, ծննդյան բազմաթիվ տարիների տոմակատարություններ,—դա մեր և բոլոր բարի մարդկանց ցանկությունն է;

Վետերանների համամայկական միությունը նորից և նորից ոլքունում է Ձեզ, ծննդյան օրվա առթիվ, խոնարհվում Ձեր մեծության առաջ: Թող այդ մեծությունը ապրի ու տարածի աշխարհով մեկ:

ՍԱՐԳԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ





ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ԶԵՂՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմության համաձայն, բոլոր նոգեսր Բատտատություններում և դպրեվանքերում, Ս. Սուեփամոսի տոնի ոգեկոչման օրը, ավարտական լսարանի սաներն ու Եկեղեցամվեր այլ ծառայողներ սուսում են սարկավագական ձեռնադրություն՝ սպասավորելու մեր Մայր Եկեղեցու և սեղանին:


Սպազմ այս տարի, անհրաժեշտության թելադրամքով, ավելի վաղ կատարվեց այդ նվիրական ձեռնադրությունը:

Այսօր, սեպտեմբերի 15-ին, Խաչքերացի մեծ տոնին, Բավատացյալների խորանարած բազմությունը, Բավարված Մայր տաճարի դարավոր կամարների տակ, անհրաժերությամբ սպասում էր ա. պատարագի նոգեպարար արարությամբ:

Առավոտքան ժամը 10-ին Մայր տաճարի Ամվագ խորանի վրա սկսվեց տոնական և պատարագը: Օրվա մեծ տոնի առիթով և, պատարագ էր մատուցում Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպոս, Պողապալյանը:

Պատարագի սրբազն արարությունը շարունակվեց մինչև «Զի ողորմած և մարդասէր ես Աստուա» աղոթքը, որից հետո սկսվեց նոգեսր ձեմարանի տառը սաների սարկավագական ձեռնադրությունը՝ ձեռամք պատարագի սրբազն հոր և խարտավիրակությամբ ճեմարանի փոխտեսուչ Տ. Միքայել վրդ. Աջապահանի:

Նորմածաներն իրենց կիսասարկավագական կոչումը սուսել էին նախորդ օրը, սեպտեմբերի 14-ին: Նոյն օրը սեղի էր ունեցել նաև նոգեսր ճեմարանի 60 սաների դպրության շրջա աստիճանների տվյալները արարությունը:



ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ԶԵՂՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմության համաձայն, բոլոր նոգեսր հաստատություններում և դպրելամբերում, Ս. Սուեփամոսի տոնի ոգեկոչման օրը, ավարտական լսարանի սաներն ու Եկեղեցամվեր այլ ծառայողներ սուսում են սարկավագական ձեռնադրություն՝ սպասավորելու մեր Մայր Եկեղեցու և սեղանին:

Սպազմ այս տարի, անհրաժեշտության թելադրամքով, ավելի վաղ կատարվեց այդ նվիրական ձեռնադրությունը:

Այսօր, սեպտեմբերի 15-ին, Խաչքերացի մեծ տոնին, հավատացյալների խորանարած բազմությունը, հավարված Մայր տաճարի դարավոր կամարների տակ, անհրաժերությամբ սպասում էր ա. պատարագի նոգեպարար արարությամբ:

Առավոտքան ժամը 10-ին Մայր տաճարի Ամվագ խորանի վրա սկսվեց տոնական և պատարագը: Օրվա մեծ տոնի առիթով և, պատարագ էր մատուցում Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպոս, Պողապալյանը:

Պատարագի սրբազն արարությունը շարունակվեց մինչև «Զի ողորմած և մարդասէր ես Աստուա» աղոթքը, որից հետո սկսվեց նոգեսր ձեմարանի տառը սաների սարկավագական ձեռնադրությունը՝ ձեռամք պատարագի սրբազն հոր և խարտավիլակությամբ ճեմարանի փոխտեսուչ Տ. Միքայել վրդ. Աջապահանի:

Նորմածաներն իրենց կիսասարկավագական կոչումը սուսել էին նախորդ օրը, սեպտեմբերի 14-ին: Նոյն օրը սեղի էր ունեցել նաև նոգեսր ճեմարանի 60 սաների դպրության շրջա աստիճանների տվյալները արարությունը:

շատակին: Այսօր ևս, Խաչվերացի երեկոյան, համդիսավոր թափորով խաչախայտի մատուճքը կրող արծաթապատ արեգակնակերպ ճաճանչը Ս. Էջմիածնում պահված, ոենանով և ծաղիկներով պարութված, հատուկ շարականներով, աղոթքներով և Ս. Ավետարանի ընթերցմամբ դուրս է բերվում վաճռի շրջափակ, և դրանով օրինվում են աշխարհի չորս կողմերը: Քրիստոսի խաչախայտը կրող նշանով խաչակնքվում է արևելքը, արևմուտքը, հյուսիսը և հարավը՝ սեր և միարանոթյուն, առատություն և խաղաղությունը:

Միրելի հավատացյալ քոյրեր և եղբայրներ, խաչը հին աշխարհի համար պատժի և մահվան գործիք էր: Մահվան դատապարտվածներին խաչ էին բարձրացնում և սպանում: Քրիստոսի խաչելությամբ, նրա անմեղ արյան հեղումով խաչի վրա, այդ մահվան անարգ ու սարսափ ազդող գործիքը Գոդորթայի բարձունքին դարձավ փրկության և հաղթանակի, հավատի և հույսի խորհրդանշան, ինչպես Հին Կոտակարանում Նոյան փայտակերտ տապանը դարձել էր մարդկային ցեղի փրկության և հավետ ապրելու և գոյատելու խորհրդանշան:

Օրենքեղից մարդկությունը ազատվեց Արարատի բարձունքը հասած ու բազմած Նոյան տապանով: Փրկության այդ փայտակերտ լաստը, իր կառուցով և խորհրդով, նման է Քրիստոսի խաչախայտին՝ հորիզոնական և ուղղաձիգ փայտերից կազմված: Ուղղաձիգն Աստոծն շնորհն է երկնքից հավիտենապես և առատաբաշխ կերպով մեզ տրվող, իսկ հորիզոնականը՝ մարդկության գգուումը զԱստված ճանաչելու և փրկության միջոցները որունելու դարերի ընթացքում: Քրիստոսի զոհագործությամբ, նրա անմեղ արյան հեղումով է, որ ուղղաձիգը (աստվածայինը) և հորիզոնականը (մարդկայինը) իրար են համդիսում խաչափայտի վրա, և դրանից ծնվում է հաշոտությունը Աստոծն և մարդկության միջև: Այդ երկու բնեուները իրար են համդիպում խաչի ձևով: Քրիստոսի զոհողությամբ մարդկությունը գտնում է իր խկական Տերը և Աստվածը: Այսպիսով նոր ուժոտ է կնքվում և նոր ժողովորդ, որ հավատացյալների հուն է, որը ճանաչում է իր Տիրոջ ձայնը և լուս նրա հրավերը:

Եզրափակելով՝ խաչը մեզ համար դառնում է «ծառ կենաց», որ փոխանակ մահացու պտու տալու, պտղաբերում է Քրիստոսին՝ մահվան և աշխարհի սարրանքներին հաղողողին և մարդկության փրկչին: Այդ խաչով մենք խափանում ենք չարք, դեմ ենք դնում սատանայի որոգայթներին, մենք մեզ խաչակնքում և զորացնում ենք, նրանով զարդարում մեր եկեղեցիներն ու տները, նրանով կնքում մեր երեխաներին, նրանով պակլում, նրանով դրշմում և նրանով էլ գերեզման իշնում՝ հավիտենական կյանքի հույսով:

Այսօր դուք վկաները դարձաք հոգևոր ճեմարանի հարլի տակ աճած ու հասակ առած տապը երիտասարդների սարկավագական ձեռնադրության: Նրանք իրենց երիտասարդ կյանքերը բերին՝ իրեն ընծա նվիրելու Եկեղեցուն: Նրանց ուսերի վրա մենք ուրաք դրեցինք խաչի խորհրդանշիչով, իրեն պաշտոն և պարտականություն՝ ծառայելու համար Հայաստանյաց Եկեղեցուն և հայ ժողովրդին: Այն անհատը, որը իր խաչը կրելու գիտակցությունն ունի, նա իր պարտականությունը կյանքի պահանջների հանդեպ լիուդի կկատարի, իսկ այն անձը, որը չի գիտակցում այդ, նա օգուտ տալ չի կարող իր ազգին և իր շրջապատին: Մեր պրտագին մաղթանքն է, որ նոր ընծա այս սարկավագները հոգելին նվիրվեն իրենց ծառայությանը և արժանի լինեն ավելի բարձր աստիճանների և պաշտոնների:

Կա նաև ամեն մեկ ոչ հոգևորական անհատի համար իր խաչը կրելու գիտակցությունը: Կյանքում ամեն մեկ քրիստոնյա անհատ իր խաչը ունի իր ուսի վրա դրված: Դա ընսանիրի, ընկերների, ազգի և հայրենիքի համբեա ծառայության, նվիրումի գիտակցությունն է: Ամեն մեկ գիտակից հայի ուսին, այս օրերին հատկապես, դրված է մի խաչ՝ ծառայության, զոհողության, հայրենասիրության և մարդասիրության: Ամեն անհատի համար իր խաչի ծանրությունն այն չափով է, ինչ չափով որ նա անդրադառնում է իր վրա դրված պարտականությանը: Համարձակում եմ ասել այս սուրբ խորանի առաջ, որ այն երիտասարդները, որոնք այս օրերին սուրբ պարտականություն են ստանձնել պաշտպանելու Հայաստանի սահմանները, Արցախում հայ ժողովրդի զավակներին, նրանք անտարակույս գիտակցորեն իրենց ուսերի վրա կրում են պարտականության խաչը, խաչը Քրիստոսի: Որքա՞ն մենք պարտական ենք այլ երիտասարդներին:

Սիրելի հավատացյալներ, խաչակնքումը թող ձևական և մերենական մի շարժում չինի մեզ համար, այլ խաչակնքումը անդրադառնանք այն մեծ զոհողությանը, որ եղավ Քրիստոսինը, մեր մեղքերի քավության և թողովրդյան համար: Այսօր վերատին բարձրացնենք՝ երկար գերեվարությունից հետո պատագրված Ս. Խաչը մեր աշխարհում, և աղոթենք, որ այն լինի բոլորին ապավեն, պարտականության գիտակցության և զոհողության միջոց: Թող խաչի լուսաճանանց հշանք բաց անի նոր ուղիներ և նոր հորիզոններ մեր կյանքի շինոյ այս օրերին:

«Սուրբ Խաչն օգնական համատացելոց, ախոյեան և կնիք լաղթող ընդդեմ թշնամոյն, եկայք ժողովուրդը երկրպագեցնուր»: ամեն:

Հաջորդ օրը, սեպտեմբերի 16-ին, նորընծա սարկավագները, գլխավորությամբ Շեմարանի վերատեսուց գերշ. S. Ներսես արքեպիս. Պողապալյանի և Մայր տաճարի լուսարարապետ գերշ. S. Հովհան արքեպիս. Սահմուլյանի, առաջնորդվեցին Ամենայն Հայոց Հայրապետի մոտ: Նորին Սրբությունն ուրախությամբ ընդունեց իր հոգևոր զավակներին, շնորհավորանքի ու բարեմաղթության խոր ասաց, օրինեց նրանց հոգևոր ծառայության ուսուր և մաղթեց, որ Ս. Ստեփանոս Նախավկայի օրինակով հաստատ մնան իրենց հավատքի մեջ և լինեն Հայ Եկեղեցու արժանի սպասավորները:

ԱՐԹՈՒՐ ՍԱՐԿԱՎԱԳ ՊՈՂՈՍՅԱՆ

Ծնվել է 1968 թ. հոկտեմբերի 2-ին Երևան քաղաքում:

1975—1985 թթ. սովորել և ավարտել է Արքվանի շրջանի Գեղադիր գյուղի միջնակարգ դպրոցը:

1985—1986 ուս. տարրում ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր Շեմարան:

ՀԱՄԼԵՏ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԵՀՐԱԲՅԱՆ

Ծնվել է 1967 թ. հունիսի 27-ին Թեհրանում (Իրան):

Մեկ տարի տեղի հայկական դպրոցի նախակրթարանում սովորելուց հետո, 1974 թ. ընտանիքով ներգաղթել են Մայր Հայրենիք և բնակություն հաստատել Էջմիածնի քաղաքում:

1974—1984 թթ. սովորել և ավարտել է Եջմիածնի հիմ. 10 միջնակարգ դպրոցը:

1985—1986 ուս. տարում ընդունվել է Ս. Եջմիածնի հոգևոր ճեմարան:

1986—1988 թթ. ծառայել է Խորհրդային բանակում, որից հետո շարունակել ուսումը հոգևոր ճեմարանում:

ԱՀԱՐՈՒՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԽԱՇԱՏՐՅԱՆ

Ծնվել է 1968 թ. մարտի 25-ին Մարտունու շրջանի Ծովինար գյուղում:

1975—1985 թթ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1985—1986 ուս. տարում ընդունվել է Ս. Եջմիածնի հոգևոր ճեմարան:

1986—1988 թթ. ծառայել է Խորհրդային բանակում, որից հետո շարունակել ուսումը հոգևոր ճեմարանում:

ՎԱՐՈՒԺԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Ծնվել է 1968 թ. հունիսի 22-ին Իրանում: Նոյն թվականին ընտանիքով ներգաղթել են Մայր Հայրենիք և բնակվել Արարատի շրջանի Լուսառա գյուղում:

1975—1985 թթ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1985—1986 ուս. տարում ընդունվել է Ս. Եջմիածնի հոգևոր ճեմարան:

1986—1988 թթ. ծառայել է Խորհրդային բանակում, որից հետո շարունակել ուսումը հոգևոր ճեմարանում:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՍԱՐԳԻՍՅԱՆ

Ծնվել է 1968 թ. օգոստոսի 15-ին Դամասկոսում (Սիրիա):

Նախնական կրթությունը ստացել է տեղի Ս. Թարգմանչաց վարժարանում:

1980—1987 թթ. աշխատել է իբրև ոսկերիչ:

1987 թ. հովարին ընդունվել է Ս. Եջմիածնի հոգևոր ճեմարան:

ՀԱԿՈԲ ՍԱՐԿԱՎԱԳ ՆԱԼՊԱՆՅԱՆ

Ծնվել է 1973 թ. հունվարի 29-ին Հալեպում (Սիրիա):

Նախնական կրթությունը ստացել է տեղի հայկական Կիլիկիա վարժարանում: Ուժամբ ուսումնառությունից հետո, 1987 թ. հովարին ընդունվել է Մայր Աթոռ Ս. Եջմիածնի հոգևոր ճեմարան:

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՏԵՐՏԵՐՅԱՆ

Ծնվել է 1962 թ. մայիսի 25-ին Իրանում (գ. Հազարջրիք):

1969 թ. ընտանիքով ներգաղթել են Մայր Հայրենիք և բնակություն հաստատել Արարատի շրջանի Լուսառա գյուղում:

1970—1980 թթ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը:

1981—1983 թթ. ծառայել է Խորհրդային բանակում:

1985 թվականից ընդմիջումներով սովորել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում և միաժամանակ ծառայել եկեղեցում:

ԱՐՄԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԵԼԻՔՅԱՆ

Ծնվել է 1961 թ. դեկտեմբերի 20-ին Էջմիածնի քաղաքում:

1969—1979 թթ. սովորել և ավարտել է Էջմիածնի հմր. 2 միջնակարգ դպրոցը:

1979—1981 թթ. սովորել և ավարտել է Երևանի հմր. 8 գեղարվեստա- տեխնիկական ուսումնարանը:

1981—1983 թթ. ծառայել է Խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո աշխատանքի է անցել Էջմիածնի Գյուղ. շին. կոմիտենատում՝ որպես ար- տադրամասի վարպետ:

1990—1991 ուս. տարում ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի քահանայից լսարան:

ՄԻՔԱՅԵԼ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԻՐԱՔՅԱՆ

Ծնվել է 1959 թ. դեկտեմբերի 13-ին Երևան քաղաքում:

1967—1977 թթ. սովորել և ավարտել է Երևանի հմր. 71 միջնակարգ դպրոցը:

1978—1980 թթ. ծառայել է Խորհրդային բանակում:

1980—1986 թթ. սովորել և ավարտել է ԵրՊի-ի Լեռնա-մետաղուրդիա- կան ֆակուլտետը:

1986—1989 թթ. աշխատել է Արարատ քաղաքի ոսկու կորզման ֆաբ- րիկայում որպես ինժեներ:

1989—1990 թթ. աշխատել է Երևանում:

1990—1991 ուս. տարում ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի քահանայից լսարան:

ԽՈՐԵՆ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՐՈՒՔՅԱՆ

Ծնվել է 1965 թ. մարտի 8-ին Էջմիածնի քաղաքում:


1972—1982 թթ. սովորել և ավարտել է Էջմիածնի № 1 միջնակարգ դպրոցը:


1982—1987 թթ. սովորել և ավարտել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի հիմնումելիորացիայի ֆակուլտետը:

1987—1990 թթ. աշխատել է Էջմիածնի շարժական մեքենայական շա- րապունում որպես ինժեներ:

1990—1991 ուս. տարում ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի քահանայից լսարան:

«Էջմիածն» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորմածա սարկավագներին՝ մաղթելով նրանց անմնացորդ նվիրում ու զոհողության ոգի մեր Մայր Եկեղեցու ծառայության սրբազն ուխտին:





ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ

Սույն թվականի սեպտեմբերի 10-ին, երեքշաբթի օրը, առավոտան ժամը 11-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ 1991—1992 թթ. ոստիմնական տարվա վերաբացման հանդիսությունը:

Նախագահական պատվո սեղանին Վեհափառ Հայրապետի կողքին տեղ էին գրավել Մայր տաճարի լուսարարական գերշ. Տ. Հովհկ արքեպոս. Սահմանադրությանը, Մայր Աթոռի դիվանապետ, հոգևոր ճեմարանի վերատեսուչ գերշ. Տ. Ներսես արքեպոս. Պողապալյանը, Սյունյաց թեմի առաջնորդ գերշ. Տ. Ասողիկ եպոս. Արհանտակեայանը և Ս. Հոփիսիմե վանքի վանահայր գերշ. Տ. Անանիա եպոս. Արարաչյանը:

Հոգևոր ճեմարանի նոր ոստիմնական տարեշրջանի բացման հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը, Մայրավանքի պաշտոններությունը, մեծաթիվ հյուրեր և ուսանողների ծնողներ:

Հանդիսությունն սկսվեց Տերումնական աղոթքով: Այնուհետև հոգևոր ճեմարանի սաների կատարմամբ հնչեց Հայաստանի Հանրապետության նիմնը և ճեմարանի քայլերգը: Ապա հոգևոր ճեմարանի երգչախոսմբը, դեկապարությամբ եկեղեցական երաժշտության դասախոս Խորեն Պալյանի, կատարեց Ս. Գրիգոր Նարեկացու «Աստուած յախենական», Ս. Ներսես Շնորհական «Ախօր երկնայինքն» և Կարդան Սրբելցու «Որք զարդարեցին» ոգեշոնչ և հոգեպարար շարականները: Հույս հետո հոգևոր ճեմարանի վերակացու Տ. Տիրապար քնն. Գրլըճյանը Ս. Ավետարանից ընթերցեց «Մերմացանի առաջիկը» (Մտթ. ԺԳ 4—9): Ընթերցումից հետո ճեմարանի սաները ոգևորությամբ երգեցին Ս. Սահակ Զորափորեցու «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը:

Հոգևոր ճեմարանի նոր ոստիմնական տարվա բացման առթիվ հան-

դեմ եկավ վերատեսուշ Տ. Ներսես արքեպիսկոպոսը: Պողապալյանը: Սրբազն հայրը իր բովանդակալից խոսքում ի մասնավորի ասաց.

«Վեհափառ Տեր,

Աստոծօն օգնականությամբ և Զերդ Սրբության օրինությամբ, այսօր, սկսում ենք 10-ի առավոտյան, հոգեւոր ճեմարանի դռները դարձյալ բացվում են՝ սկսելու համար 1991—1992 ուսումնական տարին:

Պատմության հանձնվեցին հոգեւոր ճեմարանի կյանքի անցյալ տարիները: Ակում ենք ուսումնական մի նոր տարի: Համոզված ենք, որ այս տարին կրտսեն բոլորին համար նոր իդեալների իրականացման մի տարի: Աշխատենք համերաշխորեն և միասնաբար՝ դարձնելու համար այս կրթօջախը նպատակապաց, կազմակերպված և հետևաբար արդյունավետ:

Սուրբ Էջմիածնի այս դպրոցը գրեթե նոյնքան հին է, որքան Հպատականաց Եկեղեցին: Դարեւ շարունակ այս հաստատությունը լուս է սրբության սերունդներ է դաստիարակել և այդպիսով ուսման շահը միշտ վստ է պահել մեր ժողովորդի մեջ: Որքան մեծ է թիվը երանելի վարդապետների, եռամեծ սրբերի և պարզ ժողովորդի մեջ ծառայող հոգեւոր հովվածների, որոնք անել ու դաստիարակվել են այս սրբազն հաստատության հովանունները:

Ուսումնական տարեմուտի այս օրը մեզ և հատկապես մեր ուսանողության համար սրբազն օր է: Ամսավիճակ արձակուրդի կազդուրից հետո, հոգեւոր և մարմնապես վերանորոգված, բոլոր ծարակն ունենք ուսումնական աշխատանքի և նոր հովզերով ու նոր ակնկալություններով պատրաստ ենք մեր ուժերը լիովին ի սպաս դնելու այս սուրբ գործին:

Հատկապես հոգեւոր զարթոնքի այս նոր ժամանակաշրջանում, մեր վստ բարդական պարտը է դրվում աշխատելու առավելագույն լարվածությամբ և նվիրումով՝ պատրաստելու համար մեծ թվով հոգեւոր սպասավորներ, որոնց այնքան կարիք ունի ներկայումն մեր Եկեղեցին՝ բավարարելու համար մեր ժողովորդի զավակների հոգեւոր պահանջմունքները:

Հոգեւոր ճեմարանը այս ուսումնական տարին ակում է 110 ուսանողներով՝ բաշխված մեկ նախապատրաստական և 5 լարանների վրա: Ունենք նաև քահանայից մի դասարան՝ քահանացության 15 թեկնածուներով: Տա Աստված, որ առաջիկա տարի կարտահաններ փոխադրվել Գևորգյան ճեմարանի նախկին շենքը և այնտեղ ավելի ընդարձակենք մեր կրթական և դաստիարակչական գործունեությունը:

Այս առթիվ ողջունում եմ մեր դասախտական կազմին, որոնց թվի վրա, Վեհափառ Հայրապետի օրինությամբ, այս տարի ավելացել է հայտնի հոգեւոր դոկտ., պրոֆ. Հովհանն Թուքունջյանը: Մաղթում եմ մեր դասախտներին լիակատար հաջողություն իրենց ազնիվ աշխատանքում:

Այս տարի ևս հոգեւոր ճեմարանի տեսուշն է լինելու գերշ. Տ. Անանիա եպու. Արքաքաջանը, իսկ դաստիարակի պատախանատու աշխատանք են կատարելու արժ. Տ. Տիրապ քահանան, բրշն. Արմեն արկ. Մելիքյանը և բրշն. Արթուր արկ. Պողոսյանը:

Հանույցն ունեմ հայտնելու, որ այս ուսումնական տարում, իբրև դասախուներ, հոգեւոր ճեմարան ենք հրավիրել Մայր Աթոռին միաբաններ հոգ. Տ. Միքայել վարդապետին և հոգ. Տ. Վազգեն արքային՝ մի շարք կրոնական առարկաներ դասավանդելու համար:

Միքայելի ուսանողներ, բարի վերադարձ և բարի գալուստ եմ մաղթում այսօր ձեզ բոլորին՝ մեր հաստատության նախկին սաներին և նոր ընդուն-

վաճառերիդ: Հայաստանյաց Եկեղեցին հավիտնական մի կառուց է՝ հոգևոր և հյութական: Դուք այդ կառուցի վրա ավելացվելու եք որպես նոր Ծիկլող սրբատաշ քարեր: Ուսման այս տարիներին գիտության զրահով զինվեցեք, որպեսզի վասն Հիսոսի և վասն հայրենյաց մղվող հավիտնական մարտում լինեք հաղթող: Թող Աստված այդ ճանապարհին զորավիգ և մարտակից դառնա բոլորիդ:

Այժմ հրավիրում եմ Ամենայն Հայոց Հայրապետին՝ իր պատգամն որ օրինությունը բաշխելու մեր բոլորին և հայտարարելու հոգևոր ճեմարանի ուսումնական նոր տերաշրջանի բացումը»:

Այնուհետև վերատեսուց սրբազն հայրը հրավիրեց Հայոց Հայրապետին՝ բաշխելու իր օրինությունը ճեմարանի ուսանողությանը և բոլոր ներկաներին: Այս որախ առիթով Նորին Սրբությունն իր հայրապետական օրինությունն ու պատգամը հղեց ներկաներին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՆՈՐ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՐԻԹՈՎ

Ինչպէս ամեն տարի, նաև այսօր ես հոգեկան բացառիկ բավարարություն ունեմ ներկա գտնվելու մեր հոգևոր ճեմարանի նոր ուսումնական տարվա բացման հանդիսությանը:

Ինչպէս ինձ համար ոչ միայն հոգեկան գոհունակություն է, այլ նաև հոգեկան մխիթարություն և նոր ոգեշնչումի առիթ, քանի որ գտնվում եմ բազմաթիվ երիտասարդների առաջ, մեր սաների առաջ, որոնք վերանորոգում են մեզ իրենց ներկայությամբ, վերանորոգում են իրենց ոլխոց՝ շարունակելու սովորել հոգևոր ճեմարանում մեկ նապատակով՝ ապագային ծառայելու Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն և մեր հավատավոր ժողովրդին:

Ինձ համար հոգեկան ներշնչանքի աղբյուր է այն, որ հետզհետև մեծանում է թիվը հայաստանցի երիտասարդների, որոնք այսքան վճռականությամբ գալիս են հոգևոր կրթություն ստանալու:

Այս առիթի ես ողջունում եմ դասախոսական կազմը, որ բաղկացած է ճեննիսա և հմուտ մասնագետներից: Մաղթում եմ բոլորին քաջառողջություն, նորանոր ներշնչանքներ, որպեսզի դասախոսները ոչ միայն դասավանդեն, այլ գիտության հետ մեկտեղ նաև ներշնչանք տարածեն մեր ուսանողների հոգիներում, սրտերում, որպեսզի նրանք ոչ միայն իրենց իմացական կարողություններով, այլ նաև իրենց հոգևոր զարթոնքով պատրաստ լինեն դառնալու մեր Սուրբ Եկեղեցու քաջ զինվորները:

Անցյալ տարի ստեղծված կացության հետևանքով հոգևոր ճեմարանը չտնեցավ իր մնացուն վերատեսուչը, և Ներսէս արքեպոս. Պողապալյանը ինքնարոխ կերպով, առանց իմ թեկադրանքի, հանձն առաջ կատարել այդ պարտականությունը, որ և կատարեց իրավես բարեխնդորեն և հեղինակությամբ: Այժմ նույն է կացությունը, և ես դիմեցի սրբազնին, որ հանձն առնի, այս տարեշրջանում շարունակի դեկավարել մեր հոգևոր ճեմարանը: Նրա կողքին փոխառեսուչ պարտականությունները որոշեցինք դնել մեր միաբաններից հոգեշնչորհ Տ. Միքայել վրդ. Աջապահանի ուերի վրա: Ես ու-

բախ եմ այս առիթով, որ հայր Միքայէլը կոչվում է նոր պատասխանատու պաշտոնի՝ իրեն փոխտեսուչ հոգեոր ճեմարանի:

Ես իմ խոսքը պիտի շարունակեմ ուսանողներին ուղղված:

Միքայէլ սաներ, ես քիչ առաջ արտահայտվեցի, որ ես շատ ուրախ եմ, որ այսքան մեծ թվով դուք երիտասարդներդ, երևի միջնակարգ դպրոցներ ավարտած բոլորդ են, եկեղ եք այստեղ կյանքի նոր ճանապարհ գտնելու և ապրելու:

Անձուշտ նախ սպասում ենք ձեզանից, որ ջանահրությամբ աշխատեք ուսումնական տարվա ընթացքին և լավ սփորեք, ոչ միայն իրեն պարտականություն, այս ձեր սրտից բխած վճռականությամբ և սիրով դեպի այն առարկաները, որոնք պահենվում են այստեղ: Բոլոր առարկաներն են խիստ կարեոր են, չի կարելի ասել որն է ավելի առաջնային, որն է ոչ, բայց այնուամենայնիվ ես ուզում եմ հաստատել, որ բոլոր առարկաների խագուհի առարկան մեր Մայրենի լեզուն է՝ գրաբարը և աշխարհաբարը, որ հիմքն է կազմելու ձեր ուսման: Դուք պետք է լավ տիրապետեք մեր Մայրենի լեզվին, հապատությամբ խոսեք և գրեք հայերեն:

Երկրորդ, ձեզանից սպասում եմ, որ կարգապահ կյանք ապրեք այստեղ, հարգեք այն կարգ ու կանոնը, որ կա և պարտադրվում է ձեզ տեսչության կողմից՝ հոգեոր ճեմարանի հարկի տակ: Նաև Մայր տաճարում, որտեղ դուք ջանահրությամբ պետք է հետևեք և ծիսական արարողություններին, երգեցողություններին, որովհետև դա շատ կարեոր է:

Մեզ համար գրաբարը մեռյալ լեզու չէ, կենդանի լեզու է, խոպող լեզու է, ապրվող լեզու է, որ ամեն օր հնչում է Մայր տաճարում:

Վերջացնելեք առաջ ուզում եմ ձեզ ասել նաև, որ հոգեորական լինելը արենաս չէ, ոչ է արվեստ է, այլ ծառայություն: Այս ծառայության հոգերանությունը հետզհետև պետք է ձեր մեջ կազմավորեք, որպեսզի լինեք իսկապես արժանավոր հոգեորականներ:

Մենք ուզում ենք, ցանկանում ենք, պահանջում ենք, որ ապագա հոգեորականը հիմակվանից, ձեր տարիքից սկսայ, մտածի ոչ թե ունեցվածքի մասին, իր հանգստի մասին, իր հանգստի մասին, իր հանույթների մասին, այլ ուրիշներին ծառայելու մասին՝ հանձն առնելով դժվարություններ, նեղույթներ, նույնիկ աղքատություն և զոհաբերության ոգի: Ահա այսպիսի գաղափարապաշտ հոգեորականների կարիք ունի Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին: Մեր Եկեղեցին, այս, այսպիսի բարոյական, հերոսական գգացմունք ունեցող երիտասարդների կարիք ունի: Որովհետև մեր առջև դրված են մեծ գործեր և կրոնական դաստիարակության իմաստով մեր ժողովրդի, և ազգային-հայրենասիրական իմաստով, և որպեսզի մենքը կարողանա իսկապես ծառայել, պետք է հրաժարվի սովորական մարդկանց հաճույքներից, եսակենտրոն գգացումներից: Մեծ գաղափարները պահանջում են զոհաբերություն, ծառայություն, նվիրում: Եվ այստեղ մենք ուզում ենք ձեզ մեծ գաղափար ներշնչել:

Մեր պատմությունը լեցուն է այնպիսի դրվագներով, երբ հայ հոգեռականներ ծառայության ոգով, նույնիկ անձնազնությամբ նվիրվել են մեր ժողովրդի նվիրական իդեալների իրականացման:

Ահա այս գաղափարական կազմավորումը ուզում ենք, որ խմբովի ձեր մեջ և դուք դառնաք իսկապես մեր Եկեղեցու քաջ գինվորները: Եվ այսօր կ, երբ մեր ժողովուրդը, մեր երկիրը գտնվում է կարծես մի նավի մեջ՝ ալեկոծ ծովի վրա, փնտրելու համար իր խաղաղության և արդարության

նավահանգիստը, և մեր ժողովորի լավագույն զավակները՝ առաջնորդությամբ մեր այսօրվա պետական անձնազնի երիտասարդ դեկապարների, մեր Եկեղեցին էլ պետք չէ հեռու մնա այդ մարտնչումներից: Հայատանյաց Եկեղեցի նշանակում է հայտանցիների Եկեղեցի, բուն իմաստն այդ է, Հայ Եկեղեցի ասում են կրաստայ, բայց իրականության մեջ մեր Եկեղեցին կոչվում է հայատանցիների Եկեղեցի: Մենք ամեն բանից առաջ հայատանցի ենք, այս հայրենիքի զավակներն ենք և այդ ոգով հոգևոր կոչում ենք ստանում՝ հոգևոր դաստիարակության ճանապարհով, հայտրի ճանաւրաբիով, Աստուծո խորքով՝ ծառայելու համար մեր ազգին, մեր ծոլովորդին և մեր ազգային իդեալների իրականացման:

Ահավասիկ մեր ժողովորդը տասը օր հետո հանրաքվեով իր վճռական խոսքը պիտի ասի մեր անկախության գործընթացին: Անկախության գաղափարը նոր գաղափար չէ, այսօր վերափոխված նոր կյանք է ապրում, բայց նոր գաղափար չէ, կարող ենք առանց սխալվելու ասել, որ անկախության գաղափարը փայլում է մեր ամբողջ պատմության ճանապարհի վրա, մանավանդ սկսալ Վարդանանց պատերազմից: Եվ Հայ Եկեղեցին ամբողջ պատմության ընթացքին հակառակ քաղաքական մեր դժվար և դժբախտ կացորչյան, հակառակ քաղաքական անկախության բացակայության շրջանների, Հայ Եկեղեցին անկախության գաղափարը գոնե հոգևոր մակարդակի վրա պահպանել է, որպեսզի հայ մարդը գոնե իր Եկեղեցու հարկի տակ իմքն իրեն զգա ազատ և անկախ: Եվ մեր Եկեղեցին իրականացրել է դա երբեմն հոգևորականների զոհաբերությունով նույնիսկ: Եվ ահա այս պայմաններում մենք պետք է կանգնած մնանք մեր ժողովորի կողքին, հանրաքվեին այս պիտի ասենք, որպեսզի Հայաստանի ազատության գործընթացը նոր փոփի մեջ մտնի: Ես չեմ ասի, որ հանրաքվեի «այդ»-ի վճիռով անկախության գործընթացն իր լուսնին հասավ: Ոչ: Ավելին, իմ կարծիքով անկախության գործընթացի բուն ընթացքը հենց նոր պիտի սկսի՝ դրանից հետո: Եվ տարբեր փոփերից պիտի անցնի: Խողովածքը պետք է ճշտված լինի և պիտի լինի միշտ ի մտի ունենալով ապահովությ մեր հայրենիքի քաղաքական անվտանգության և տնտեսական զարգացման հնարաբորությունների:

Սիրելի սաներ, կարծում եմ, որ իմ այս խոսքերը և հոգումները փոխանցվում են ձեզ և դուք անտարբեր չեք լինելու, որպեսզի դուք էլ դառնաք իսկապես ապագա նվիրյալ, անբասիր, բարոյական նկարագիր ունեցող, հավատքով լեցուն սպասավորները մեր Եկեղեցին: Ձեզ մեր օրինությունը, և իմ սրտից բխած հայրական բոլոր բարի մաղթանքները:

Աստված օրինի Ամենայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Աստված օրինի մեր սուրբ երկիրը՝ Մայր Հայաստան, և Մայր ազգը այժմ հավիտյան, ամեն:

«Ողջ լեռուք զօրացեալ Ս. Հոգով, յաւէտ օրինեալ ի Տեառնէ և ի մենց. ամեն»:

Հոգևոր ճեմարանի վերաբացման հոգիշ ու գեղեցիկ հանդիսությունն ավարտվեց «Հայր մեր»-ի խմբովին երգեցողությամբ և Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով:



ՄՈՒՐԵ ԷՇՄՐԱՋԻՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Սեպտեմբերի 1-ին, կիրակի.—Տօն գիւտի գօտոյ Սրբությ Աստուածածնի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և. պատարագ մատուցեց S. Միքայել վրդ. Աջապահյանը:

* * *

*

Սեպտեմբերի 8-ին, կիրակի.—Տօն Ծննդեան Սրբությ Կուսին Մարիամու յԱննայի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և. պատարագ մատուցեց S. Վազգեն արդ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ հավոր պատշաճի քարոզ խոսեց:

* * *

*

Սեպտեմբերի 16-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և. պատարագ մատուցեց S. Եղիշեն ավ. բնի. Բաղրամյանը: Հավարտ և. պատարագի կատարվեց Բոգենիանգիստ «վասն համօրէն ննջեցելոց»:

* * *

*

Սեպտեմբերի 22-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և. պատարագ մատուցեց Մայր տաճարի լուսարարակեան գերշ. S. Հովհիկ արքեպս. Սահմանյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

* * *

*

Հոկտեմբերի 6-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և. պատարագ մատուցեց Կ. Պոլսից ոխտավորաբար Մայր Ալոռում գտնվող գերշ. S. Ծահան արքեպս. Սվաճյանը և «Հայր մեր»-ից առաջ հավոր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* *

*

Հոկտեմբերի 18-ին, Կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց ԱՄՆ-ից ովառավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Վարդան ավ. քհն. Դյուլգերյանը և «Հայր-մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

* *

*

Հոկտեմբերի 20-ին, Կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ հավոր պատշաճի քարոզ խոսեց:

* *

*

Հոկտեմբերի 23-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* *

*

Հոկտեմբերի 27-ին, Կիրակի.—Գիւտ Խաչի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Կիլիկյան Աթոռից ովառավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Սեպոն ծ. վրդ. Սարգիսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* *

*

Հոկտեմբերի 80-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:





ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԷՇՄԻԱԾԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ
Վազգեն Առաջինին
սուրբ Խոնարհումով

Ամեն շաբաթ կամ կիրակի
Ես ոխտի եմ գալիս քեզ,
Սրբագրում ես դու հոգիս
Հաղորդումով մի անտես:

Մայր տաճարի սուրբ գավիթում
Խոնարհում եմ Մեծերիդ,
Խրիմյանի օրհնանքն առած
Վառում մոմերն հավատիս:

Քո մյուսոնի և քո խնկի
Անուշ բույրից արթեցած
Սուրբ աղոթքով իշած ծունկի
Աղերսում եմ քեզ, Աստված:

Զորություն տուր հայկյան ցեղիս,
Միաբանում մի վերին,
Բավ է չարը շեղի ուղիս,
Սղորեցնի հոտը իմ:

Տե՛ր, խաչվածիս էլ մի խաչիր,
Մի՛ խլիր լուսն իմ աշաց,


Գարդիելի սուր տուր քաջին
Եվ թերը հրեշտակաց:

Մաշտոցապաշտ, անմեղ հոգին
Թող շարսկան, տաղեր հյուսի,
Աստվածամոր պատկերն աչքին
Քրիստոսի խաղը տեսնի...

Խաչ, գալազան և թագ լուսե,
Զարդարեք միշտ Վեհափառին,
Էջմիածի՞ն, ովստդ վսեմ
Զորավիդ Է՝ «Եկայք առ իս...»:

19.5.1990

Ս. Էջմիածին





ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՀԱՄԱՇԽԱՌԱՅԻՆ ԿՈՉ ԿԸՆՀ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՆՎԱՆԳՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀՈԳԵՒՐՈՐ ՊԵՏԵՐ ԻՐԵՆՑ ԿԱՐԵԿՑՈՒԹԻՒՆԸ
Կ'ԱՐՏԱՅԱՅՏԵՆ

Երուսաղէմ.— Այսօր, Երուսաղէմի Պատրիարք Ամեն. Տ. Թորգոն Արքապատրիարք Ամեն. Ս. Թորգոն Արքապատրիարք Ամեն. Մանուկեան կոչ ըրա աշխարհի բարի կամեցողովեան տէր մարդկանց, կասեցնելու համար Հայ Ժողովուրդի դէմ ուղղուած ջարդ:

Նոյն ժամանակ, Սուրբ Երկրի Քրիստոնէական հոգեւոր Պետերը կառեւոր հեռագիր մը դրկեցին Սովետական Միութեան Նախագահ Միքայէլ Կորպաշովին, յայտնելով իրենց մտահոգութիւնը և յուսպով որ Ղարաբաղի հարցը կը գտնէ իր արդար և խաղաղ լուծումը:

Ամեն. Տ. Թորգոն Արքապատրիարք Ամեն. Մանուկեան հաղորդագրութիւն մը տուա մամուլին, տեղական և օտար թերթերու զանազան թղթակիցներու: Սոյն հաղորդագրութիւնը առաջինն է որ տեղի կ'ունենայ Երուսաղէմի Պատրիարքութեան պատմութեան ընթացքին:

Սրբազն Հայոր ըսաւ որ Երուսաղէմի Հայ համայնքը լուր ստացած է թէ Ղարաբաղի Հայերուն դէմ նոր զինուորական պայքար մը սկսած է: Ան ամբաստանած է Սովետական իշխանութիւնը որ լուր կեցած է ընդդէմ այս ահաբեկումներուն, որոնց Հայերը ենթակայ են Աստրականի իշխանութեան կողմէ: Ան շնչառ որ Աստրականի բանակը բնաշնչման բաղաբականութեան պատերազմ է որ կը փարէ Հայերուն դէմ, որոնք արդարօրէն կը պաշտպանեն իրենց պատմական իրաւունքները:

Սրբազն Հայոր Սովետական իշխանութեան կոչ ըրաւ, որ հետապնդէ և երաշխաւորէ կանքերն ու կալուածները իր բոլոր քաղաքացիներուն:

Ան առաջարկեց Սովետական կառավարութեան, որ համրաքուն մը կատարուի որոշելու համար Ղարաբաղի ապագան, և կոչ ըրաւ քաղաքակիրթ աշխարհի բոլոր պետերուն և բարի կամեցողովեան տէր մարդկանց, վերջ մը դնելու համար Ղարաբաղի սպանդին:

Ան գգուշացուց որ աշխարհի պէտք չէ լուր մնայ, երբ անդին քաղաքակիրթ ժողովուրդ մը աստիճանաբար կը գրկուի իր մարդկային իրաւունքներն: Միեւնոյն ժամանակ կոչ ըրաւ համաշխարհային մամուլին, արթնցնելու համար աշխարհի խիճը անպաշտպան Ղարաբաղի Հայութեան Ակատմամբ, որոնք ներկայիս դժուարին կացութեան մէջ են:

Երեկոյեան, Պատրիարքը նախագահեց հոգեւորանութեան պաշտօնին, որ Ս. Յակոբեանց Միաբանութիւնը մասնաւոր աղօթք ըրաւ Ղարաբաղի մէջ անմեղօրէն ինկած Հայերու հոգիներուն: Այս արարողութեան հրամրուած էին Քրիստոնէական Եկեղեցիներու ներկայացուցիչներ և Երուսաղէմի օտար հրապառուներ:



ՀՈՒՐԵՐ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

ՌՈՒՍ ԵԿԵՂԵՅՈՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Սույն թվականի մարտի 28-ին, հինգշաբթի օրը, երեկոյան ժամը 18.30-ին, Մոսկվայի և համայն Ռուսաստանի Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսակ Բ-ը պաշտոնական այցելություն տվեց Երուսաղեմի հայոց Ամենապատիկ Տ. Թորգոն արքեպիսկոպոս Մանոկյանին: Նորին Սրբություն Ռուսաց Պատրիարքին ողեկցում էր Երուսաղեմի ուղղափառ Եկեղեցու Նորին Սրբություն Դիտորոս Պատրիարքի Աերկայացուցիչ Տիմոթեոս Արքազանը:

Պատրիարքական շքախմբին Երուսաղեմի հայոց վանքի մուտքի մոտ հանդիսավորապես դիմավորեց Սրբոց Հակոբյանց միաբանությունը՝ գլխավորությամբ Ս. Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Դավիթ Եպիսկոպոս Սահակյանի և Աերկայությամբ խուններամ բազմության:

Այնուհետև, Պատրիարքական շքախումբը առաջնորդվեց Ս. Հակոբի գավիրի, որտեղ Ամենապատիկ Տ. Թորգոն Պատրիարքը դիմավորեց Ռուս Եկեղեցու բարձրաստիճան հյուրին և ողջագործվեց նրա հետ:

Ս. Հակոբյանց Մայր տաճարը լեցուն էր հավատացյալ բազմությամբ: Աերկան էր նաև Ս. Թարգմանչաց երկրորդական վարժարանի երկուն աշակերտությունը:

Ս. Հակոբյանց Մայր տաճարում հանդիսավոր արարողությանը Աերկան էր նաև հյուրախաղերով Երուսաղեմում գտնվող Հայաստանի ուղիղոյի և հեռուստատեսության 40 հոգուց բաղկացած երգչախումբը, որը կատարեց հայկական Եկեղեցական և ուսական երգեր:

Կարճ աղոթքից հետո երկու Պատրիարքները առաջնորդվեցին Պատրիարքանի դամբիճ, որտեղ հակիրճ ճառով հանդես եկավ և Ռուս Պատրիարքին բարի գալուստ մաղթեց Երուսաղեմի հայոց Ամենապատիկ Տ. Թորգոն Պատրիարքը: Նա ի միջի այլոց նշեց.

«Այս երկիրը սրբավայր մըն է քրիստոնյաներու, հրեաներու և մահմետականներու համար, բայց մեզի քրիստոնյաներու համար այս երկրի մեջ ապրիլը օրինություն և մեծ ուրախություն մըն է: Ս. Երկրի մեջ է, որ Հիսուս Քրիստոսը ծնած, ապրած, քարոզած, մեռած և Հարություն առած է:»

Այնուհետև S. Թորգոմ Պատրիարքի շերտ խոսքից հետո, շնորհակալութան և գոհունակության խոր ասաց Ռուսաց Ալեքսեյ Բ Պատրիարքը և շեշտեց.

«Մենք կաղոթենք քրիստոնեական Եկեղեցվու և Ս. Երկրի ժողովուրդի բարգավաճման համար: Կաղոթենք ևս, որ խաղաղություն տիրե Ս. Երկրին մեջ և այս երկրի բնակիչները սիրով ապրին միմյանց հետ»:

Ալեքսեյ Բ Պատրիարքը շեշտեց նաև, որ Ռուս Եկեղեցին միշտ էլ լավ հարգերությունների մեջ է եղել Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու հետ՝ հանձին իր հոգևոր պետք՝ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Իր խոսքի ավարտին Նորին Սրբություն Ալեքսեյ Բ Պատրիարքը ուկեցիլ մի հավկիթ նվիրեց Ամենապատիլ Տ. Թորգոմ Պատրիարքին (Ռուս Եկեղեցին հավկիթը ընդունում է որպես կյանքի խորհրդանիշ):

Ի պատասխան, Ամենապատիլ Տ. Թորգոմ Պատրիարքը Ռուս Եկեղեցու Պատրիարքին նվիրեց «Երրուսաղեմի Հայոց Պատրիարքութեան Գանձերը» գիրը և «Վերջին Ընթրիքը» սաղափել մի քանդակ:

ԱԲԵՂԱՅԱԿԱՆ ԶԵՐՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ Ս. ՀԱԿՈԲՅԱՆՑ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ

Երրուսաղետում բոլոր տոները կատարվում են հիմ տոմարով: Այս իսկ պատճառով Սրբոց Վարդանանց տոնակատարությունը հցվեց սույն թվականի փետրվարի 14-ին, հինգշաբթի օրը: Այս հիշարժան տոնական օրը Սրբոց Հակոբյանց Մայր տաճարում կատարվեց կուսակրուն քահանայական ձեռնադրություն: Արեղայական կոչում շնորհվեց Ս. Հակոբյանց ընծայարանի երկու շրջանավարտ սարկավագների՝ Մատթեոս Խիրաճյանին և Վարդան Պուրճեցյանին:

Փետրվարի 13-ին, Ս. Վարդանանց նախատոնակից հետո, տեղի ունեցավ քահանայական կոչման արարողությունը: Նորընծաները, առաջնորդությամբ լուսարարավետ գերաշնորհ Տ. Դավիթ Եւսիկոսոս Սահակյանի և առընթերակա երկու վարդապետների, ծնկաչոր առաջնորդվեցին և. խորան և համբուրեցին ձեռնադրիչ Պատրիարք Սրբազն Հոր աշը: Պատրիարք Սրբազն Հոր վկայության պահանջով նորընծաները նպալեցին քրիստոնեական Եկեղեցու բոլոր երեստիկուներին և երդվեցին անշենորեն հետևել ողղափառ Հայրապետներին: Որից հետո համատեղ արտասանեցին Հայաստանյաց Եկեղեցու «Հաւատոյ Հանգանակ»-ը:

Սովոր հոգիշ եր պահը հինգշաբթի օրը, երբ պատարագիչ Պատրիարք Սրբազն Հայոք, բազմած Ս. Հակոբյանց Ավագ խորանի թեմին, «Հնարիօք Ս. Հոգույն» հրավիրում է նորընծաներին, որոնք ծնկաչոր մոտենում են պատարագիչ Պատրիարք Սրբազն Հորը, շրջվում դեպի ժողովուրդը և հանդիսավորապես հրաժարվում աշխարհիկ կյանքից: Երգախումբը կատարում էր «Աստուածային եւ երկնաւոր շնորհ» շարականը: Ապա ձեռնադրիչ Պատրիարք Սրբազն Հայոք ձեռքը դնում է նորընծաների գրլիին՝ ի նշան օրհնության:

Ձեռնադրության արարողությունը շարունակվում է մինչև «Ողջույն»: Ապա Պատրիարք Սրբազն Հայոք Սրբալուս Մյուսոնկ օծում է նորընծաների ճակատները՝ վերանվանելով նրանց՝ Մատթեոս սարկավագ Խիրաճյա-

Այս Տ. Ավետիս արեղա, իսկ Վարդան Պուրճեցյանին՝ Տ. Բագրատ արեղա: Այնուհետև նորընծաներին իրավունք է շնորհվում պատարագելու: Այդ իսկ պահին նորընծաները տալիս են իրենց առաջին «օրինարիթիմ»-ը ժողովրդին:

Վերջում պատարագին Պատրիարք Սրբազն Հայրը տալիս է իր քառ-խրատականը նորընծաներին՝ հավատարիմ մնալ Տիրոջը և նրա Ավետարանի ուսուցումներին և Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու կարգին ու կանոնին:

Նոյն օրը, երեկոյան ժամերգությունից հետո, նորընծաները կրկին բարձրացան խորան, որտեղ Պատրիարք Սրբազն Հայրը, ի նշան կուսակրոն արեղացրույան, նորընծաների գլուխ վեղարներ դրեց:

Այնուհետև վաճրի սեղանատանը, ի պատիվ նորընծաների, տրվեց ընթացք:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՈՒՍԱՂԵՄ ՔԱԶԱԼԵՐՎՈՒՄ Է

Երուսաղեմի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոն արքեպիսկոպոս Մանուկյանը կոչ է անում աշխարհի բոլոր հայերին՝ ովհագնացության գալ Երուսաղեմ և այցելել Սուրբ բաղար, որ ծննդավայրն է քրիստոնության և Մովսիսական կրոնի: Պատրիարք Սրբազն Հոր Կոչը ովհված էր Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու մի շարք թեմերի, թեմակալ առաջնորդների, սիյուռքահայ գաղութների ղեկավարների, որպեսզի նրանք քաջակերեն և գործոն կերպով աշակցեն ովհագնացությանը և զրուցիչկությանը դեպի Երուսաղեմ:

Զբոսաշրջիկների և աշխարհաշրջիկների շրջանում տարածված մի ասցվածք կա. «Վեճետիկ այցելեցեք և հետո մետեք»: Ի հեճուկս դրա, սակայն, Պատրիարք Սրբազն Հոր մոտ խոսում է այլ նշանարան. «Երուսաղեմ այցելեցեք և ապրեցեք»:

Երուսաղեմի հայոց կյանքը Էլ ավելի բարգավաճ տեսնելու համար Պատրիարք Սրբազն Հայրը Երուսաղեմ աշխատելու է հրավիրում երիտասարդ նվիրված մասնագետների: Իսկ որպես աջակցություն Հայաստանյաց Եկեղեցու կրթական գործի, Երուսաղեմ է հրավիրում հայ ուսանողների, աշխարհի տարբեր ծագերից:

«Մեր հիմնական հարցը,—ասում է Պատրիարք Սրբազն Հայրը,—այս ուսանողներուն, դասաւումներուն և ովհագնացության վայր հայքայթելն է»: Իսկ այս հարցի լուծման համար Պատրիարք Սրբազն Հայրը ունի իր գործնական ծրագրերը, որոնք այժմ իրականացման ընթացքի մեջ են: Ներկայումս իրականացվում է Պատրիարքարանի Վարդապետանոցի շինարարությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈՅԻ ԵՎ ՃԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ ԵՐՈՒՍԱՂԵՄՈՒՄ

Սույն թվականի մարտի 27-ից մինչև ապրիլի 3-ը Խարայելում հյուրախաղների էր գտնվում Հայաստանի Հանրապետության ուսդիոյի և հեռուստատեսության 40 հոգուց բաղկացած կամերային երգչախումբ՝ գլխավո-

բոլոյամբ խմբավար Տիգրան Հեքելյանի: Երգչախումբը Խորայել էր ժամանել Աքքաջի քաղաքապետարանի հրավերով: Ծուրջ մեկ շաբաթ Խորայելում գտնվելու ընթացքում երգչախումբը տվեց քազմաթիվ համերգներ, տարբեր քաղաքներում՝ արժանանալով բարձր գնահատանքի:

Սովորից օգտվելով, Երուսաղեմի հայոց Պատրիարքությունը մարտի 28-ին, հինգշաբթի օրը, Հայաստանից ժամանած երգչախմբին հրավիրեց մասնակցելու Ս. Հակոբյանց Մայր տաճարում կատարվող առավոտյան և պատարագին:

Վաղ առավոտից Մայր տաճարն արդեն իսկ լեցուն էր հավատացյալների հոծ քազմությամբ: Ժամը 11-ին Հովապեկի Դրան մոտ երգչախմբին դիմավորեցին Երուսաղեմի հայոց Պատրիարքության քարտողարը և Սաղիմահայ Միությունների Աերկայացուցիչները: Այնուհետև Ս. Աթոռի լուսարարապես գերաշնորհ Տ. Դավիթ Եպիսկոպոս Սահակյանը երգչախմբին առաջնորդեց Մայր տաճար, որտեղ նրանք կատարեցին մեր ս. պատարագից զանազան կտորներ, իսկ ս. պատարագի ավարտին՝ Հայրապետական առինքնող «Ամեն հայի սրտից բիած...» մաղթերգը:

Ս. պատարագից հետո, մինչև ուշ երեկո, ի պատիվ կամերային երգչախմբի, զանազան մշակութային, բարեսիրական, հայրենակցական, երիտասարդաց, մարզական և այլ Միությունների կողմից կազմակերպվեցին համելիպումներ և ճաշկերպույթներ:

Այս բոլոր միջոցառումներին իր մասնակցությունը բերեց և օրինանքի խոսք ասաց Երուսաղեմի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոն արքեպիսկոպոս Մանուկյանը:

ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ





«ԶՐՈՂՆԵՔԻ ԱՐԱՌՈՂՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԼՈՅՍ ՆՈՐ ՄԻՒՌՈՆԻ ԲԵՐՄԱՆ ԱՌԻԹՈՎ, ԻՐԱՔԱՀԱՅ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ»

Սոյն թուականի Հոկտեմբերի 18ը —ուրբաթ— յոյժ ուրախալի եւ միսիթարանքի օր մըն է իրաքահայութեան համար:

Այսօր թեմիս Բարեխանամ Սոաշնորդ՝ Գերաշնորհ Տ. Աւագ Եպս. Ասատուրեան կը մատոցէ Սուրբ և անմահ պատարագ, որու ընթացքին կը կատարովի ջրօնմերի արարողութիւն «Առաօրին» Սրբալոյս Միտոնի բերման առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն:

Առաօտեան ժամը 9.30ին սկիզբ կ'առնէ Սուրբ պատարագը: Պաղտատի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Սոաշնորդանիսն եկեղեցին բերնէ բերան լի է հաւատառ և հարազատ հարիւրառ զաւակներով:

Յընթաց սրբոյ պատարագի՝ «Հայր Մեր»էն առաջ, եկեղեցոյ Աւագ դուռնէն, մեծաշուր թափօրուք կը բերոմի սրբալոյս նոր Միտոնը, Մայր Ալոռնէն բերուած գեղեցիկ սրուակով: Հաւատացեալ մեր ժողովորդը յունկայս եւ մեծաւ երկիրդի կը դիմաւորէ զայն, Անոր մէշ տեսնելով, ո՛չ միայն Սուրբ Հոգոյ խորհրդանիշը, այլև մեր Հայրենեաց անկախութեան Աստուածական յաղթութեան ճառագայթները, որն արդէն Հայոց Հայրապետը յայտարարած էր, իբրև «Անկախութեան Միտոն»...

Ահա խորհրդայի այս պահուն, սրբազան հայրը, ի տես բոլոր ժողովրդեան, նախ Սուրբ Խաչի ընկրմամբ եւ ապա Սրբալոյս Միտոնի հեղումով կ'օրինէ ջուրով լի կաթսաները:

Ցես ջրօրհռնեքին, Սոաշնորդ Սրբազանը կ'ընթերցէ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա. Աստուածքնտիր Հայրապետին քարոզը, որը Վեհափառ Հայրապետը խօսած էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ Սեպտեմբեր 29ին Սրբալոյս Միտոնի օրինութեան առիթով:

Հայոց Հայրապետին խօսը մեծ խանդավառութեամբ կ'ունենդրի իրաքահայ ժողովորդին կողմէ: Ապա Սրբազան Հայրն ալ իր եերթին խօսը կը լիէ հարազատ զաւակներուն և բոլոր ժիւտենական հաստատութեանց, որ կը շեշտէ, որ մեր հաւատացեալ ժողովորդը պարտի լետ այսու ա՛լ ան-լի պատասխանառուն և հսկողը ըլլայ իր երկանարամեայ Մայր և Սուրբ Սուրբեական եկեղեցոյ, թոյլ չտալով որեւէ օտար և մեր ժողովորդին համար վտանգառ, խորթ և անհարազատ ներմուծումներու գայթակղութիւնն, կու գայ ջլատելու մեր ժողովորդի միասնութիւնը, Աստուածապարգեա հաւատը ու չորսհագարամեայ հոգին հայկական: Սրբազան հայրը յատկապէս



Զօրօհնաց արարողությունից մի պահ

և բայց իր խօսքին մէջ. «...Եւ ինչպէս Վեհափառ Հայրապետը բնորոշեց, մենք որպէս եկեղեցի և ժողովորդ, պիտի չհանդորժենք, եթզ այլ եկեղեցիներ, մեծ թէ փոքր, արևմոտքն եկած մեր եկեղեցոյ ծոցին մէջ մարդուսութեամբ կըքաղին ... երբեք պիտի չհանդորժենք ո՞չ քրիստոնէական այս գործը: Եթէ այդ քարոզիչները այնքան կարեւորութիւն կուտան քրիստոնէական հաւատքին և արևմոտքն դէպի Հայաստան Կ'արշակն մարդուսութեան նպատական և եթէ անոնք ինքիններին այդքան բժախսնդիր կը նկատեն քրիստոնէութիւնը տարածելու, թող եթքան և քրիստոնէութիւնը քարոզեն ո՞չ քրիստոնէայ ազգերու մէջ, նեթանուներու մէջ...»

Մենք կարիքը չունինք, մեր հաւատքը պակասաւոր հաւատք չէ, որ պէսզի ուրիշներ գան լրացնելու զայն: Եւ քրիստոնէութիւնը պետական սպասոնական կրօն ճանշած առաջին ազգին քրիստոնէութիւն քարոզելը, եւ կը նկատեմ ո՞չ քրիստոնէական արարք մը, արարք ընդդեմ «Եքումենիք» ոգիին, որը կը տիրէ այսօր քրիստոնէայ մեծ ընտանիքին մէջ:

Հետևաբար պարուր կը համարեմ խօսք ուղղելու մեր ժողովորդին, այլև մեր միութենական հաստատութիւններուն գգուշ ըլլալու և միամտորքն չվերաբերելու վերոիշեալ կացութեան նկատմամբ. թող առիթը չորոյի օտար եկեղեցիներու՝ մեր ժողովորդի ծոցին մէջ քարոզութեամբ գրադելու: Եւ ձեզի ալ կը դիմեմ սիրելի հաւատացեալներ, որ այս հոծ բազմութեամբ կը գտնուիք այստեղ՝ Շերկայ եղաք «Զօրօհնէքի» արարողութեան նոր օրինակ Սբ. Միտունով, դո՞ւք ալ ի հարկէ գիտակից եք և հարազատ զայկաներն եք և կը մնաք ու պիտի մնաք Հայաստանեաց Առաքելական մեր Մայր Եկեղեցոյ..., կը դիմեմ Ձեզի, որպէսզի բոլորս ալ՝ քահանայք եւ ժողովորդ գիտակցուած նախանձախմբութեամբ տէրը ըլլանք մեր դարաւոր սրբութիւններուն և ժառանգած սովորութիւններուն»:


Սրբազն հօր խօսքեն ետք պատարագը կը շարունակովի: Սուրբ պատարագեն ետք, խորհներամ ժողովորդը կ'ըմպէ օրինուած չուրը, Դպրոց Դասին կողմէ կատարուող հոգեւարար շարականներու երգակցութեան ներքոյ, եւ ապա կը մեկնի ի խաղաղոթիւն...

Նոյն օրը Կէսօրուայ ժամը 1ին, Սրբազն հօր գլխաւորութեամբ եւ հոգեւոր դասին ներկայութեամբ, տեղի կունենայ առաջին մկրտութեան սուրբ խորհուրդը Հոր Միտոնով: Սրբազն հայրը, այս որախ առիթով, Հոր մկրտեալին կը կնքէ Լեռն անուամբ, նորապսակ եւ անկախ մեր Հայութիքի նորընտիր՝ վսեմաշուր նախագահ Տիար Լեռն Տէր Պետրոսեան անունով:

ՄԱԿԱՐ ԱԲԴ. ՅՈՎՃԱՆՆԵՍԵԱՆ

Պատաստ,
18 Հոկտ. 1991





ԼՈՒՐԵՐ ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՑ

1990 թվականի մարտի 26-ին, երկուշաբթի օրը, սրտի կաթովածից լվաճանվեց Կանադայի հայոց թեմի անդրամիկ առաջնորդ գերաշնորհ S. Վազգեն արքապիսկոպոս Քեշիշյանը: Խակ նոյն թվականի ապրիլի 3-ին տեղի ունեցավ թեմական խորհրդի բացառիկ հիստոր, որի ընթացքում Կանադայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ ընտրվեց Մայր Աթոռի երիտասարդ միաբան Ռոգեշնորհ S. Հովհանն ծ. վարդապետ Տերտերյանը: Հոգեշնորհ հայր Սուրբ Ալեքսանդր, մայիսի 26-ին, շաբաթ օրը, թեմական պատգամավորական 7-րդ ժողովում, փակ քվեարկությամբ, ընտրվեց Կանադայի հայոց թեմի առաջնորդ:

Հնորդության ավարտին իր անդրամիկ պատգամում նորընտիր առաջնորդ հայր Սուրբ Վերանորդեց իր ոխտը և ասաց. «Ծառայութիւնը՝ կենացք գործնականորեն հարատացնող լաւագոյն մեջուն է... ինձ համար, ծառայութիւնը, որպէս Ս. Էջմիածնի միաբան իմաստ կ'ունենայ, երբ այդ շատախուած է Սուրբ Էջմիածնի հանելէալ հաւատարմութեամբ, հայրենիքի գերագոյն շամերու գիտակից գաղափարականով և իմ ժողովուրդի Ակատնամք ամբողջական ու անսակարկ նորիումով»: Անդրամիկ իր պատգամում նորընտիր առաջնորդ հայր Սուրբ իր երախտագիտությունը հայտնեց թեմական պատգամավորական ժողովին և համառոտակի Աերկայացրեց ծրագրված իր աշխատանքային պատկերը:

Նոյն թվականի հոկտեմբերի 7-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, ձեռամք Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ս. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, Տ. Հովհանն ծ. վարդապետը ձեռնադրվեց եպիսկոպոս:

Այսուհետու երիտասարդ թեմակալ առաջնորդը մեծ ոգևորությամբ և նվիրումով լծվեց եկեղեցանվեր ու հայրենանվեր ծառայությանը: Նորընտիր առաջնորդ սրբազն հոր առաջին գործը եղավ հայերեն և անգլերեն լեզուներով հաղորդագրությունների հրապարակումը, որտեղ ամփոփ կերպով Աերկայացվում են թեմում կատարված բոլոր ձեռնարկումները՝ լինեն դրանք ազգային-եկեղեցական, մշակութային, կրթական թե այլ բնույթի:

Տ. Հովհան եպիսկոպոսը հաճախ է այցելում թեմի ծովական, և պատրագ մատուցում, քարոզներ խոսում: Ծորջ մեկ տարվա առաջնորդական ծառայության ընթացքում սրբազն հայրը կատարել է մի շարք ձեռնադրություններ (դափիր, կիսասարկավագ, սարկավագ):

Կազմակերպված են ընթանում Տիկնանց և Երիտասարդաց Կենտրոնական Մարմինների աշխատանքները, ինչպես նաև շաբաթօրյա և կիրակօրյա վարժարանների գործունեությունը:

Կանադայի հայոց թեմից ներս իրենց բեղմնավոր գործունեություննեն ծավալել մի խումբ կուսակրոն և ամուսնացյալ քահանա հայրեր, ինչպես նաև սարկավագաց և դպրաց դասերը՝ աճձեռիր նվիրումով ծառայելով Հայաստանյաց Սոութելական Սուրբ Եկեղեցուն և մեր ժողովրդին: Պարբերաբար գումարվում են հոգևորականց հավաքներ, որոնց ընթացքում թեմարկվում են թեմի ներքին կյանքին (և ոչ միայն ներքին) առնչվող հրատապ հարցեր:

Կանադայի հայոց թեմը, իր անսպառ եռանդով լի թեմակալ առաջնորդով, լծված է նաև մի սրբազն առաքելության՝ որքան հնարավոր է սատար կանգնել հայ ժողովրդին հայրենիքում՝ Մայր Հայաստանում, օգնել նրան ուրի կանգնելու և թոթափելու ներկային ծանր կացությունը: Աղեսի գոտուն և հատկապես Հայաստանի մատադ սերնդին հյութական օգնություն հասցնելու զաղախարը մեծ ոգերդություն առաջացրեց և ընդունելություն գտավ Կանադայի հայության շշանում: Նրանք իրենց գործնական օժանդակությունն են բերում այս գործում: Այս առթիվ Կանադայից արդեն բարերարների և մասնագետների մի շարք խմբեր այցելել են Մայր Հայաստան, հատկապես աղեսի գոտի, և իրենց գործնական աշակցությունը բերել աղեսի գոտու կարիքներին: Աղեսի գոտու որք և ծնողագորկ երեխանների համար հաստատված է կայուն դրամական օժանդակություն: Մասնագետներ են հրամիրվել Կանադա՝ համապատասխան վերապատրաստում անցնելու համար: Կանադայի հայոց բարերարների միջոցներով աղեսի գոտում կառուցվում են բուժարաններ:

Կարեր և գնահատելի աշխատանք է նաև Կանադայի հայոց թեմի կատարած հրատարակչական աշխատանքները՝ հրատարակվում են բազմաթիվ կրոնական-եկեղեցական գրքեր, մեծաքանակ գումարվոր սրբանրկարներ, որոնց մեծ մասը առաքվում է Մայր Հայաստան՝ բավարարելու համար հայրենի ժողովրդի հոգևոր կարիքները:

Կանադայի հայոց թեմը ապրում է իր բուն վերելքը:

ՎՈԼՈԴՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀՈՐՍ ՀՈՒՇԵՐԻՑ

Համիդյան դաժան ուժիմը՝ հայատյաց քաղաքականությունը, սոցիալ-տնտեսական հետամնաց և հատկապես անկայուն վիճակը, աշխատավոր երիտասարդությանը երկրից մղում էր դեպի օտար ափեր, աշխատանք-վաստակ որոնելու: Նման բայս էր վիճակվել նաև իմ հորը՝ 19-ամյա Ներսես Սիմոնի Գարուզյանին: Մանկության իր շորս ընկերների հետ որոշում են մեկնել Բաքու, նավթահանքերում աշխատելու:

Պայմանագրովում են հայերի կողմից ճանաչված ու վատահելի բուրդ փորձված ուղեկցի, այսպես ասած՝ «վաղադի» հետ, ինչ խոսք նախօրոք «ուղեկարձու» վճարելով, և 1907 թ. նոյեմբերի սկզբին, այսինքն ձմռան սկզբին, ճանապարհ են բռնում դեպի Ռուսականաստանի սահմանը:

Ճանապարհը լի է լինում անակնկալմերով ու վտանգներով: Գնում էին ուրբով, ‘կիմայական խիստ աննպաստ պայմաններում’ միշտ վախ ունենալով նաև շրջապատի թուրք և բուրդ բնակչությունից: Քայլում էին միայն գիշերները, իսկ լուսաբացին թաքնվում էին, ինչպես որ կարող էին: Վալադր խոստացել էր, որ ճանապարհի երրորդ օրը իր տունը կտանի՝ հանգստանալու և մի տաք ապոր ուտելու: Դեռ չեն հասցել նրանց տուն եւրո մտնել, երբ տնեցիները ահարեկված հայտնում են, որ մատնել են: Տան տերը մեծ արագությամբ հասցնում է և՛ հյուրերին թաքցնել, և՛ ինքը թաքնվել: Խշանանությունները շրջապատում են նրանց տունն ու բակը և սկսում որոնել անկոչ հյուրերին: Հորս թաքստոցը լինում է նրանց անկողնաշարը, որը արագությամբ քանդում են ու տասնյակ վերմակ ու ներքնակ լցնում նրա վրա: Այսուել հայրս պատմում էր, որ մահը երկու անգամ է տեսնում, մեկ՝ որ հնարավոր էր շնչահեղ լինել, մյուս՝ որ զինված քրդերը կարող էին անկողնային «քրորգը» քանդել և ...

Սկսում են հարցաքննել վաղադի մորը,— դադե, ո՞ւր է տղադ,— ասում են, որ նա ձեր տուն ֆլա (հայ) է եւրել, մայրը պատում է իր հագուստը, կործքը դուրս գցում և երդվում, որ իրեն հավատան, որ ինքը նույնիսկ իր որդուն քանի ամիս է, չի տեսել:

Փնտրում են ու ոչ մեկին չեն հայտնաբերում: Վաղադն շտապում էր, կադ ուրբով, անթացուաք առաջ գցելով, ճանապարհը գրեթե թոշելով էր անցնում, մենք շահելներս հազիվ էինք նրան հասնում, պատմում էր նայրս: Վտանգն անցած էր:



— սպասութիւն համբեց եռասմբարան կ զօտ մանաւ ։ Եւաց օրովհայք, Հ. Բագժան

Սահմանն անցնելու հետո, այլև դժվարության չեն հանդիպում: Հասնելով Սուրբ Էջմիածին, ուզում են կատարել իրենց առաջին ոխտը՝ լինել Մայր տաճարում, համբորել Ամենայն Հայոց Կաթողիկոսի աջը, ստանալ հրա օրինությունը, ապա շարունակել հանապարհը: Դժբախտաբար այդպես չի լինում. պարզվում է, որ Ամենայն Հայոց Հայրիկը ծանր հիվանդ է... Դիմում են, ում պետք է, խնդրում են թուլլություն՝ Հայրիկի աջը համբորելու, մերժվում են... Երեքօրյա համար դիմումներից հետո, վերջապես, ստանում են թուլլություն: Սրտի դրոյվ ու վշտով համակված Վանից եկած հինգ երիտասարդները մոտենում են իրենց մեծ հայրենակցի Անջանելյակի դռանը... Դուք բաց էք. հենց դունից հինգն էլ իշնում են ծնկի և ծնրադիր առաջանում դեպի հիվանդի մահճակալը: Հայրիկը ձյունափայլ սպիտակեղենով պարուրված էք, աչ ձեռքը վերմակից դուրս, որը և վասպորականցի երիտասարդները ներթականությամբ համբուրում են ու գրիսանակ մնում ծնկի: Հայրիկը երկու բառ է արտասանում «նորեն պահճիւտություն—նորեն»... Եվ արցոնքի երկու կաթիլ ցայտում են հրա խամրած աչքերից ու մնում սառած մագաղաթյա դեմքի վրա: Երիտասարդները նոյնական արցունքու աչքերով հեռանում են մեծ հայրենակցի Անջանելյակից: Վեհափառը, թեպետն մահվան մահճում, բայց դեռ գիտակից, կարգադրել էք. երիտասարդներին ապահովել կացարանով, սննդով և հանապարհածախով:

Երեք օր անց, հրա մահվան բոյթը տարածվեց ի սփյուռու: Նորից դիմեցինք տնօրինապետին՝ այս անգամ խնդրելով, որ թույլ տան մեծ հայրենակցի գերեզմանն իրենք փորեն: Փորում են շատ խորություն ու պատերը շարում թրծված աղյուսվ: Թաղման ծեար կատարում են լոթ օր հետո: «Արտասահմանց շատ հուղարկավորներ էին եկել, ամբողջ վանքի տարածքը լեցուն էք հոծ բազմությամբ, ասեղ գեելու տեղ չկար», պատմում էք հայրս: Վերջին հրամեցու տեսնելու համար շատերի նման մենք էլ էինք բարձրացել բակի ծառերի վրա:

1990 թ. ապրիլի 5-ին «Վասպորականի» Հայրենակցական Միության նախաձեռնությամբ վանեցիների մի մեծ խմբի հետ այցելեցինք Էջմիածին՝ մեծարելու Վեհափառ Հայրիկի (Մկրտիչ Ս. Վանեցու) ծննդյան 170-ամյակը: Անհամար թարմ ծաղկիներով ծածկվեց սպիտակ մարմարե գերեզմանը, որը գտնվում է Մայր տաճարի գանգակատան ձախակողմյան մասում: Տաճարի դողանշներն ազդարարում էին Հայոց Հայրիկի հանդիսավոր հոգեհանգիստը: Հոգեւոր արարողությունից հետո, ճարտարապետության դոկտոր, պրֆեսոր Վարագիան Մարտիրոսի Հարությունյանի ելույթից հետո, ես կարդացի «Խոր հուշերը»:

Հանդիսությունից հետո մասնակիցներին հրավիրեցին Վեհափառ, որտեղ մեզ ընդունեց Վեհափառ Հայրապետը՝ Վազգեն Ս. Կաթողիկոսը: Ներկաների հետ շատ սրտանց ու շերմ զրուցեց Վեհափառ Հայրապետը՝ բարձր գնահատելով իր ժամանակի մեծ գործին՝ Ամենայն Հայոց Հայրիկին:

Վերջում բոյորը մոտեցան ու համբուրեցին մեր օրերի շինարար և մեր հոգեւոր տունը շեն պահող Կաթողիկոսի աջը... Ես նոյնական մոտեցա և նախքան աջը համբուրելը ասացի. «1907 թ. նոյեմբերի 9-ին հայրս համբուրել է Հայոց մահամերձ Հայրիկի աջը, իսկ այսօր, այս հիշարժան օրը, ինձ է բախտ վիճակից համբուրելու մեր օրերի Ծայրագույն Պատրիարք-Կաթողիկոսի՝ Նորին Սրբության աջը»:



ԴՈԿՏ. Տ. ՆԵՐՍԵՍ ՔՀՆ. ՆԵՐՍԵՍՅԱՆ

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆՍԻԱԼԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Որո՞նք են Տիեզերական (Օւստուպիալ) ճանանշում ստացած եկեղեցական ժողովների հեղինակության, առավել ևս, անսփառականության աղբյուրները: Հիմք ընդունելով միմայն պատմական փաստերը, այս հարցի պատասխանը ուղղակի փնտրենք «Քրիստոս», «Ս. Հոգի», և «Ս. Եկեղեցի» հասկացով նեների մեջ:

Նախ, Քրիստոս «Աստուծն Բանն» մեզ հայտնում է երկնավոր Հոր Էւորժունը և կամքը (Մատթ. ԺԱ. 27), որը հավատացյալի համար դառնում է «Ճանապարհի», «ճշմարտություն» և «կյանք» (Հովի. ԺԴ. 16): Աստված վկայեց. «Դա է որդի իմ սիրելի... ոմա լուսորդ» (Մատթ. ԺԸ. 5): Ավետարանը շեշտում է, որ Հիսուս ամբոխներին քարոզեց «իշխանությամբ» (Մատթ. Է. 29), ընդ որում, նախքան համբանալը, առ խոստացավ զրավիդ կանգնել աշակերտներին: «Ես ընդ ձեզ եմ զամենայն առուս մինչև ի կատարած աշխարհի» (Մատթ. ԺԸ. 20): Հիսուս, որպես «գլուխ», իր մարմնի՝ այսինքն «Եկեղեցու» միշտ ներկա է այնտեղ՝ շնորհիվ «սուրբ հոգով» ներկայության, որին հոր կողմից ստարեց մեկնումից հետո՝ մարդկությունը ստաջնորդելու դեպի «ճշմարտութեան», որովհետև նա ինքն է «զհոգին ճշմարտութեան» (Հովի. ԺԴ. 17): «Յորժամ եկեղեց նա, հոգին ճշմարտութեան, առաջնորդեսց ձեզ ամենայն ճշմարտութեամբ» (Հովի. ԺԶ. 13): Հայր Աստուծն և Ս. Հոգու առնչակցությունը կարևոր է քննվող խնդրի խամար պատմական և աստվածաբանական լուսաբանության համար:

Համառոտ այս ակնարկից արդեն ակնհայտ է, որ Եկեղեցին որպես հավատացյալների հավաք, որի գրոխն է Հիսուս, քանի որ նաև տաճարն է Ս. Հոգու, չի կարող սփառվել: Ուղղափառ եկեղեցու բոլոր դավանաբանական որոշումները պայմանավորված են այս սկզբունքով: Այսուղեւ բերված և չբերված քաղմաքիվ փաստերը, միաբերան վկայում են, որ ժողովներին վերագրված անսարքելի հեղինակությունը հավաստվում է այն հրահանգով, որ Քրիստոս «սիրեց» և «սրբագործեց» Եկեղեցին: «զի կացուցէ ինքն իր յանդիման փառաւոր գեկեղեցի, զի մի ունիցի ինչ արատ կամ

աղտեղութիւն կամ այլ ինչ յայսպիսեաց այլ զի իցէ սուրբ և անարտ» (Եփս. Ե 25—27):

Քրիստոս ավելի որոշակի արտահայտությամբ հաստատեց ժողովական սովորույթի դերը կրոնադավանաբանական վեճերում ասելով. «զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անը ես եմ ի մէջ նոցա» (Մատթ. ԺՀ 20): Իսկ Պետրոսին տված խոստումի մեջ «ի վերայ այդր վիմի շինեցից գեկեղեցի իմ, և դրունք դժոխց զնա մի յաղթահարեսցին» (Մատթ. ԺՀ 18) կա իշխանությունը «կապելու» և «արձակելու»: Մինույն իշխանությունը նա տպիս է բոլոր առաքյալներին՝ «զոր կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս» (Մատթ. ԺՀ 18): Սուարելական Կանոնների մեջ ուշագրավ են երկու հոդվածներ՝

«Կարգեցին առաքեալքն և եղին հաստատութեամբ, թէ որպէս Տէր հրաման ես և պարգևեաց մեզ, թէ «Զոր արձակիցէք յերկրի, արձակեալ լիցի յերկինս, և զոր կապիցէք յերկրի կապեալ եղիցի յերկինս» նոյնպէս և հրաման տուեալ քահանապութեան և երիցոնց կարգի զարժանիս արինութեամն՝ միաբան արինել եւ զանարժանմ՝ միաբան կապել և ըմբերանել: Եւ զոր կապեսցենն՝ կապեալ կացցէ, մինչև հնագանդեսից առաջնորդին»

«Եւ արդ զայս ամենայն զոր ինչ կարգեցին և եղին առաքեալքն, ոչ եթէ անձանց իրեանց միայն կարգեցին, այլ և այնոցիկ՝ որ զենի իրեանց լինելոց իցեն... Քանզի ոչ եթէ նոցա պէտք ինչ են կարգաց և արինաց, որ ինքեանք իսկ են արենալիք, զի խրատեալք և վարժեալք էին ի ճշմարիտ վարդապետէն, և միսիթարիչ հոգին սուրբ քնակէր ի նոսա: Զի զոր արինակ ես կարգել նոցա հոգին սուրբ զկարգ և զարդենս զայնոսիկ, առաւել ես առաջնորդեսց նոցա ըստ կամաց իրոց, զի որք ընկալան ի Տեառնէ զզարդութիւն և իշխանութիւն»¹:

Սուարյալներին տրված ներելու և պատմելու իշխանությունը ընգըշվում է Հիսուսի հետևյալ հրահանգով. «իսկ եթէ նոցա ոչ լուիցէ, ասասցիր յեկեղեցոց ապա թէ և եկեղեցոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զիեթանոսն և մաքատը» (Մատթ. ԺՀ 17)²: Ավետարանների մեջ կամ նաև զուգամեռ հրահանգներ, որոնք բացի սուարյալների հրավասությունները սահմանելուց, շեշտում են նաև հնագանդության անհրաժեշտությունը ոչ միայն սուարյալներին, այլև նրանց հաջորդներին՝ «այնոցիկ որ զենի իրեանց լինելոց իցեն». «որ ձեզ լսէ, և որ զենեզ անարգէ զիս անարգէ, և որ զիս անարգէ՝ զառարիշն իմ անարգէ» (Ղոկ. Ժ 16): Հիսուս այս և նման որիշ ասացվածքներով մատնանշում է սուարյալների իշխանության, կովանները՝ «առջիք օգործիւն ի հասանել հոգույն սրբոյ ի վերայ ձեր» (ԳԱ. Ա. 8) և հանձնարարում սուարյալներին լինել՝ «վկայք յերուսաղէմ... մինչև ի ծագս երկրի» (ԳԱ. Ա. 8):

Հոգեգալստյան դեպքից հետո, սուարյալները որպէս ներկայացուցիչները Քրիստոնյա համայնքի, անհրաժեշտության դեպքում ժողովներ էին գումարում, ինչպես Երուսաղեմի սուազին ժողովի, որը գումարվեց 51 թվայանը համայնքային խնդիրներ լուծելու համար³: Այդ ժողովում սուարյալները որպէս Քրիստոնեության անմրցակից ու անհողողդ պաշտպաններ, հայտարարում են՝ «զի հանոյ թուեցաւ հոգույն սրբոյ և մեզ մի ինչ աւելի քեզն դնել ձեզ» (ԳԱ. ԺԵ 28):

Սուրբ հայրերի վկայությունների քննությունը ցուց է տպիս, որ տիե-

զերական ժողովների հեղինակության և անսխալականության սկզբունքները արտացոլվում են եկեղեցու* հեղինակության և անսխալականության մեջ վեց դրանք երկուսն ել առկա են Նոր Կոտակարանում:

Մի Տիեզերական ժողովներին բնորոշ հատկանիշները

Կա Եթե մանրությները զանց առնելով մոտենանք խնդրին՝ հասկանալի միդանան այս խնդրի պարզաբանության համար ստեղծված հսկայական գրականության պատճառները: Եկեղեցական պատմության հսկայածավալ հույթերի մեջ հնարավոր է գտնել պատասխան, թե ինչո՞ւ որոշ ժողովներ կոչվել են տիեզերական: Որևէ ժողով տիեզերական կոչելու ի՞նչ նախապայմաններ պետք է աչքի առաջ ունենալ:

Ա. Նախ, այն պետք է ներկայացնի և արտացոլի ամբողջ եկեղեցին, իսկ տարակուս չի կարող լինել, որ ամբողջ ասելով, ինչպես ժողովների պատմությունը ցուց է տպիս, լոկ աշխարհագրական կամ թվային առումով շպետք է հասկանալ: Եկեղեցական պատմությունից պարզվում է, որ տիեզերական կոչված ժողովներին մասնակցող ներկայացուցիչների թիվը համեմատարար փոքր է եղել և ոչ լրիվ ներկայացուցական: Առաջին տիեզերական ժողովին (Նիկիա 325) մասնակցել են եկեղեցիների երկրորդ տիեզերական ժողովին (Կ. Պոլիս 381): Հոռվմեական եկեղեցին և ամբողջ արևմտաքը ոչ մի ներկայացուցիչ չուներ, պանուհանդերձ այդ ժողովների դպաւանական որոշումները եկեղեցին իր լրտվյան մեջ ընդունել է:

Բ. Երկրորդ առանձնահատկություննը, որով զատորոշվում էին այս կարգի ժողովները մյուս տեղական կոչված ժողովներից, այն էր, որ դրանց դավանաբանական որոշումները վավերացվում էին կայսրի կամ Պապի կողմից, որը շատ կարևոր հանգամանք լինելով հանդերձ, համեմայնեապս, տիեզերականության հավակնության միակ և վճռական կովան լինել չէր կարող, հատկապես 431 թվականից հետո, եթե եկեղեցին կորցրեց իր միանականությունը:

Բնականորեն, եթե մի ժողով գումարվում էր կայսրի հովանավորությամբ կամ այդ ժողովի որոշումները վավերացվում էին կայսրի կողմից, ապա այդ պարագան վկայում է, որ ժողովը ունի քաղաքական նշանակություն, ինչպես հինգերորդ դարում գումարված ժողովները միաբնակ ենթավածողների դեմ և 754 թվականի ժողովը, որ կոչվեց ընդդեմ Պատկերամարտության, որոնք թեև ծամանականից կայսրի կողմից նկատվեցին իրը տիեզերական, բայց եկեղեցական հայրերը մերժեցին այդ ժողովների նման որակավորումը: Գրեթե առանց բացառության, Հոռմի Պապի կողմից ճանաչվելը նկատվում էր վավերականության կարևոր գործոն, թեև երկրորդ Տիեզերական ժողովի պարագային, Պապի վերաբերմունքը նկատվեց ավելորդ բարեմանություն: Պատմական հիշատակություններից կարելի է հետևել, որ եկեղեցու կողմից ճանաչումն ու հավատումը բավական էր ժողովին տիեզերական որակում և պատիվ շնորհելու, թեկուզ առանց Պապի կամ կայսրի հովանավորության: Այս եզակի սկզբունքն է, որի հիման վրա առաջին երեք ժողովները համարվում են տիեզերական, որոնք քրիստոնյա եկեղեցին իր լրտվյան մեջ է ընդունել և պաշտպանել: Այս վերաբերմունքի մեջ կարևոր է նկատել երկու վճռական հանգամանքներ ժողովների տիեզերական ճանաչողության համար:

1. ժողովականների ունեցած ինքնագիտակցությունը, որ իրենց ընդունած դավանական որոշումները Ս. Հոգու առաջնորդությամբ են կատարվել և կարող են ընդունվել բոլորի կողմից:

2. Հետագա ժողովների վերաբերմունքը՝ ընդունված որոշումների պատմամամբ:

Քաղկեդոնի չորրորդ տիեզերական ժողովը ժամանութեասութեասութեան 449 թվականի ժողովի տիեզերական կոչվելու հավակնությունը: Ժողովի ձեռնարկման և գործընթացի մեջ կիրառած թերի և ոչ կանոնական միջոցները՝ ինչպես բոլի ուժ և շեղու դավանական սկզբունքներից, բավական լուրջ դերդաստաններ էին, մերժելու սույն ժողովի հեղինակությունը և որոշումների վավերականությունը: Հավատացյալների հավաքական կարծիքն էլ իր դերը ունեն որևէ ժողովի ընդունման գործում: Ազատես, քրիստոնեական համայնքները մերժեցին Կեղծ-Ֆերենցյան 1438—45 ժողովը, որը Կ. Պոլսի (680 թ.) ժողովին շնորհեց տիեզերական տիտղոս, հակառակ որ, այս վերջինը տեղական բնույթ էր կրում: Դժվար է նման հասարակական միջամտությանը կանոնական բանաձևում տալ, միայն կարելի է կրկնել, որ թեև ժողովների տիեզերական համբավը կապված է Ս. Հոգու «Աերշնչանքի» սկզբունքի հետ, այնուհանդերձ չի կարելի այն բնութագրել և արժեքավորել կանոնական տեսանկյունից: Բոլոր ժողովների հեղինակության հիմքում, ինչպես ասացինք, կա եկեղեցու հեղինակությունը, որպես առաքելահիմն հաստատություն, որը ունի շնորհ «ճշմարտության»:

Որոշ ծանոթագրություններ տիեզերական կոչված ժողովների հեղինակության շուրջ

Սուածին հերթին պետք է նկատի առնել այն կարևոր փաստը, որ այս խմբի ժողովները վայելում էին բարձր հեղինակություն և հատակորեն բաժանվում էին տեղական եպիսկոպոսական սինոդներից: Սուրբ Կանոնների համաձայն, եպիսկոպոսական ժողովներ պետք է գումարվեին հերթականութեն. հետևյալ հաճախականությամբ.

«Ժողով լիցի եպիսկոպոսաց իրաքանչիր իշխանութեան երկից անգամ յամին, մին յերրորդ շաբաթու տանից Զատկին... և գերկրորդն անգամ ժողով լիցել յես հոկտեմբերի»

«Թէ ի տարուն երիս ժողովս արացեն՝ մի յաշնան ժամու և մի զոր մատունն կոչեն և մի յատաշ քան զրատանորդսն, վասն ամենայն իրիք եկեղեցու բնութիւն արացեն»⁴:

Հաճախականությունը հետագայում փոխվեց տարեկան մեկ ժողովի**

Տիեզերական ժողովների դավանական և կանոնական որոշումները մնում են անհերքելի և ունեն կայուն վավերականություն, որը չի կարելի անտեսել, քանի որ Սուրբ Հոգին, որի Աերշնչանքով են հարցեր վճռվել, չի սխալվել: Ավանդության շարունակականությունը և հարատևումը եկեղեցու կյանքի ինքնատիպ հատկանիշներից մեկն է: Հայաստանյաց եկեղեցին, և մյուս արևելյան քոյլը եկեղեցիները, առանձնահատուկ տեղ և պատիվ են վերապահում առաջին երեք տիեզերական ժողովներին, իսկ Ուղարկան Քաղկեդոնական եկեղեցիների ավելի մեծ ընտանիքը՝ առաջին յոթ ժողովներին⁵:

Ո՞վ իրավասություն ունի տիեզերական ժողով գումարելու: Այս կենսական և միմնական հարցի վերաբերյալ կանոնական սահմանումներ չկան: Ե-

** Կանոնագիրը:

կելեցական պատմությունից գիտենք, որ նման ժողովներ գումարվել են հազվադեպ պարագաներում, երբ եկեղեցու միասնականությունը վտանգի տակ էր: Սա հասկանալի է, որովհետև սկզբնական եկեղեցին, առաքելական շրջանից հետո, հաստատում ներկայացուցչական մարմին չուներ [ինչպես 12 առաջալները], որ կարողանար հերթական ժողովներ գումարել՝ դավանական հարցերի շորջ վճիռներ ընդունելու. առավելապես պատգամավորական բնույթ ուներ, որը հազվագյուտ դեպքերում, հավաքվում էր Ս. Հոգու թելադրությամբ, որի համար ողջ եկեղեցին գգում էր դրա պահանջը⁶:

Գալով ժողովական որոշումների «անխաղականության» հարցին, պետք է ընդունել, որ քիչառումներում մեջ լատինները, արևելյան եկեղեցները և բողոքականները տարբեր ըմբռնում ունեն եկեղեցու իշխանության բնույթի մասին: Նախ անխաղականության սկզբունքը չպետք է հասկանալ և վերցնել տառացիորեն: Անխաղականության հասկացողությունը վերաբերում է միայն դավանական որոշումներին և բանաձևումներին և ոչ թե բանակցությունների գործընթացին: Պիտի նկատել, որ տիեզերական որոշ ժողովների տեսակետները սրբագրվել, ամբողջացվել և հարմարեցվել են նոր պայմաններին, իսկ ոմանք նոյնիսկ չենյալ համարվել հետագա ժողովների կողմից:

Այս առումով ուշագրավ օրինակ է երկրորդ տիեզերական ժողովի որոշում՝ Նիկիական Հավատող Հանգանակից դուրս թողնել «նոյն ինքն ի բնութենէ հօր» և «Աստուած Աստուծոյ» բանաձևումները: «Աստուած Աստուծոյ» բանաձևում դուրս թողնվեց, որովհետև այն կրկնում էր «Աստուած ճշշմարիս յԱստուծոյ ճշմարտէ» արտահայտությունը, իսկ «նոյն ինք ի բնութենէ հօր» բանաձևը զեղչվեց, որովհետև այն կրկնում էր «համագոյակից հօր» բացատրությունը⁷:

Մյուս կողմից, երկրորդ տիեզերական ժողովը Նիկիական Հանգանակին ավելացրեց նոր և ընդարձակ բացատրություններ Ս. Հոգու և Ս. Եկեղեցու վերաբերյալ: Նոյն երրորդ կատարեց նաև չորրորդ տիեզերական ժողովը, որը ավելի ընդարձակեց նախորդ ժողովների Քրիստոսաբանական բանաձևումները: Հայտնի է, որ Քաղկեդոնի ժողովի այս վեսարքեր դավանական մեկնություններն մերժվեցին հակաքաղկեդոնական խմբակցության կողմից՝ որովհետև այդ տեսություններով խախտվում և եղծվում էր 318 հայրապետների կողմից ընդունված Նիկիոյ-Կ. Պոլոյ «Հավատոյ Հանգանակը»: Ինչպես արդեն մատնանշել ենք, երրորդ տիեզերական ժողովի 7-րդ կանոնը արգելում է որևէ բան փոխել կամ ավելացնել հաստատված դավանական բնագրերի վրա: Կասկածից վեր է, որ տիեզերական ժողովները ունեին հեղինակություն ոչ միայն հավելումներ կատարելու, այլև արգելելու դավանական բանաձևումների փոփոխություն, որոնք ընդհանրական էին համարվել:

Սա հաստատվում է լրացուիչ այն ասացուցաներով. վեցերորդ տիեզերական ժողովի 8-րդ կանոնը և յոթերորդ ժողովի 6-րդ կանոնը, որոնք վերաբերում են տեղական ժողովների գումարման հաճախականության հարցին, թելադրում են, որ տարին երկու ժողով գումարելու փոխարեն հրավիրել տարին մեկ ժողով: Յոթերորդ ժողովը կիրառում է հշամակալից մի արտահայտություն, բացատրելու համար փոփոխություններ մտցնելու ստիրույթը. «Տուտուն ուն սու կանոնա կաի իմենս անանեօումնեն», այսինքն՝ «Այս կանոնը մենք նորոգում ենք»: Ասուց է, որ Յոթերորդ ժողովին մասնակցող հայրապետների նպատակը չէր արհամարին նախկին ժողովների որոշումները, այլ նորոգել:

754 թ. Կ. Պոլսում գումարված «պատկերահարգության դեմ» կոչված ժողովի մեջ 388 եպիսկոպոսներ որոշում են «Ով որ պատուիտ համարձակի պատկերներ հորինել կամ պատվել կամ դնել եկեղեցուն կամ մասնակոր տառ մեջ, կամ ով որ համարձակի ծածուկ ունենալ այդպիսի պատկերներ, կիարգալուծվի և կրանադրվի»: 787 թվականին, սակայն, իրինե կայսրություն նիկիայում գումարված ժողովին մասնակցող 367 եպիսկոպոսները հրավերով նիկիայում գումարված ժողովին մասնակցող 367 եպիսկոպոսները որոշում են. «Սուրբ և անարատ պատկերների նոյն երկրագությունը մատուցել, ինչ որ սուրբ և կենարար խաչի նշանին, թե՛ դեղով ներկված, թե՛ մոզաքից և թե՛ որևէ այլ հոյութից շինված»: Հետաքրքրական է նշել, որ թեև Հայ եկեղեցին այս ժողովին շմասնակցեց և ոչ էլ պաշտոնապես ընդունեց այս ժողովի անցկացքած որոշումները, այնուամենամեծիվ, ընդհանուր առմամբ համամիտ է ընդունված բանաձևին: Հայ եկեղեցին, որ որոշ չափով կողմնակից է եղել պատկերհարգության, բայց պես է նշել, ինչպես Քրիստոսաբանական հարցի կապակցությամբ, պատկերների հարցի մեջ էլ, խոսափել է կուտակումից, պահելով չափի գգացողությունը: Հայաստանում պատկերամարտների շարժումը տարածվել է հիմնապես աղանդավորների, այդ թվում մըծ ծրդնեականների, պավլիկյանների մոտ:

Կամակած չի կարող լինել, որ անսխալականության վերաբերյալ Ռուղափառ եկեղեցների վերաբերմուճքը ճիշտ է: Հավատարմություն որոշումների ոգուն և ոչ թե տաղին: Այս փաստարկը միայն տեսական նշանակություն չունի, այլև ունի գործնական կարևորություն նոր ժմամանակների համար, եթե զամազան եկեղեցներին սկսել են աստվածաբանական բանակցություններ արևմտյան հարանվանությունների և, մասնավորապես, Ոչ-Քաղկեդոնական եկեղեցների հետ: Հասուկ ուշադրության է արժանացել այն հարցը, թե ո՞ւ ինչ ժողովներին մասնակցող հայրերը ներկայացնում տեղական ազգային, թե՝ ընդհանրական եկեղեցուն: Այս հարցումը ավելի հուեորսական, քան լուրջ պատմական արժեք ունի, որովհետև եկեղեցին մինչև 431 թվականը ակրն-հայտորեն և ճշմարտորեն «մեկ» էր:

Այնուամենայնիվ, այս դեպքում կարևոր է հաստատել, որ թեև առաջին երեք տիեզերական ժողովների որոշումները մնում են ուղղափառ և քրիստոնեական հավատքի հիմն ու էպիստոնը, հետագայի ձգտումները՝ սրբացնել յոթ թիվը և դրանով անհերքելիություն վերագրել յոթ ժողովներին, վճարաբեր է: Նման մոտեցման հանդիպում ենք արդեն հիմնգերորդ դարում, եթե Քաղկեդոնի ժողովը ընդունել տաղու համար ձգտում կար չորս թիվը սրբացնել, այն առնչելով չորս ավետարաններին, պաշտպանելու համար չորրորդ տիեզերական ժողովի հետինակությունը հակա-քաղկեդոնականների հարձակման դեմ:

Տիեզերական ժողովների Ս. Հայրերը

Գրականության մեջ գիտմականները բազմիցս անդրադակ են տիեզերական ժողովներին մասնակցող հայրերի իրավունքների հարցին: Այն հայրապետները, որ մասնակցեցին տիեզերական ժողովներին, համոզված էին, որ իրենք որոշումներ էին ընդունում որպես Առաքյալների հետնորդներ՝ նըրանցից ժառանգած «արձակելու» և «կապելու» իրավունքով օժտված: Տիեզերական ժողովներին մասնակցող հայրապետների իրավասությունները ավելի ընդարձակ էին, նաև որպես առաջալների հաջորդներ, որ եպիսկոպոսական ձեռնադրությամբ ու օծումով փոխանցվել էր եպիսկոպոսական դա-

սին, և ապա Ս. Հոգու շնորհմերի կրող վերակացումներ եկեղեցիների: Միաժամանակ, տեղական եկեղեցին համարվում էր ընդհանրական եկեղեցու անքածանելի մասը և երբ հավաքվում էին մեկտեղ, իշխանութուն ունեին խոսելու «անսխալականորեն», «Մեկ», «Սուրբ», «Ընդհանրական» և «Սուպերեկան» եկեղեցու անունից: Նրանք որոշումներ են ընդունում ոչ որպես անհատներ, այլ որպես դեսպանը Քրիստոսի և Ս. Հոգու: Նրանք արտահայտում են ոչ միայն ժամանակակիցների մտահոգությունները, այլև միտքը եկեղեցու սկզբից մինչև երկրորդ Գալուստ:

Սույն եկակեսոր հիմք ընդունելով Սուրբ Աթանաս հայրապետը (296—373) գրում է. «Նիկիոյ ժողովը խօսեց Աստծոյ միտքը, և ժողովների որոշումները միայն դավանական հրահանգներ չեն և ոչ ել դաստիարակչական կարգադրություններ, այլ Աստծո պատվերներն էին», որովհետև «Աստված ինքն է գտուիշն այնպիսի իշխանութեան մարդկան» (Մատթ. Թ:8):

Եկեղեցու կանոնադրությամբ գրադլու մասնագետները համամիտ են, որ եթե օրենքները հաստատելու իրավունքը վերապահված է մի օրենսդրի, դա արդեն պարտադրում է իր հաստակներին հնազանդվել, որովհետև երկու իրավունքները անբաժանելիորեն շաղկապված են «սահմանելու և հպատակվելու» բանաձևի մեջ: Ինչպես գիտենք, ավետարանը առաքյալներին և նրանց հաջորդներին տալիս էր իշխանություն՝ «ուսուցէք նոցա պահել զամենայն որ ինչ պատուիրեցի զեեզ. և ահաւափկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւորս, մինչև ի կատարած աշխարհի» (Մատթ. Իլ. 20): Հետո ուղարկվեց նրանց Ս. Հոգին՝ «զի ընդ ձեզ բնակեսցէ ի յախտեան ... ուսուցէ ձեզ զամենայն, և յիշեցուցէ զամենայն զոր ինչ ասացի ձեզ» (Հովհ. ԺԴ 14—26): Սուպերյալների Աստծոց ստացած իրավունքը վերաբերում է թե՝ «ուսուցանելու» և թե՝ «յիշեցուցանելու»: Եթե առաքյալներին վստահված էր օրենքներ սահմանելու, ուսուցանելու, պատճելու և ներկու իրավունքը, ապա տրամադրանական և բնական է, որ նրանք հավատացյալներից համա պիտի պահանջեն հնազանդություն (Ս. Տիմ. Ե:22, Զ:2, ԳԱ. Ա:24, Ի 28): Հասկանապի է, որ առաքյալներին տրված հետինակությունը փոխանցվում էր իրենց հաջորդներին և հետևաբար, հավատացյալները պատճառ չունեին հակառակվելու: Սուպերյալների հետինակության սկզբնաղբյուրը մնում է Ս. Հոգին, իսկ անհնազանդության կողմնակիցները համարվում էին՝ «իբրև զինթանուն և զմաքաւոր» (Մատթ. ԺԸ 17):

Առկա սկզբնաղբյուրների ուշադիր հետազոտությունը մեզ բերել է այն եկրակացության, որ առաքյալներն են այդպես էին մտածում: Պետքու առաքյալը գրում է Գաղատացիներին, գգուշացնում նրանց չարսել անուղղական ուսուցմունքների մեջ, ասելով՝ «այլ թէ մեր կամ հրեշտակ յերկնից աւետարանեցէ ձեզ ավելի քան զոր աւետարանեցաք ձեզ, նզովեալ լիցի» (Գաղ. Ա: 8—9): Նրանք, ովքեր չեն ընդունում եկեղեցու ուսուցումը, նրանք եկեղեցու մաս չեն կազմում, որովհետև ինչպես տերը ասում է՝ «Որ ձեզ լսէ՛ ինձ լսէ, և որ զեեզ անարգէ՛ զիս անարգէ. և որ զիս անարգէ՛ զառաքին իմ անարգէ» (Ղոկ. Ժ 16):

Երուսաղեմի 51 թվականի ժողովի որոշումների յուրահատուկ կողմերից մեկն էլ այն էր, որ նշանակեց պատգամավորներ, որոնց պարտականությունն էր պերճախոսորեն տարածել ժողովի որոշումները՝ «Ընտրեալս ի նոցանէ առաքել ընդ Պողոսի և ընդ Բատնարայ զՅուրա զկոչեցեալն Բարսարա և զԾիդրա այս գլխաւորս. գրեալ առ եղբարս... և նորա արձակեալք իշին յԱնտիոք և ժողովեալ զժողովուրդն՝ եսուն զթուղթ. և ընթերցեալ որախ եղեն ի վե-

րայ միսիթարութեանն» (ԳԱ ԺԵ 22—23): Վկացություն կա եկեղեցական պատմության մեջ, որ մի խումբ հրեաներ, որ նոր էին քրիստոնյա դարձել, մերժեցին Եթուաղեամ ծողովի որոշումները, և եկեղեցին նրանց վտարեց:

Պատմիչների վկացություններից երևում է, որ Արևելյան Ռողափառ եկեղեցները սկառագ չեն զգացել իրավական որովն դիրքորոշում ճշտել անսահմանության վետ արերգալ, որ վետու այս հարցը չի ընկալվել այն առողջով, որ հասկացվում էր արևմտություն: Եթե կարողիկ եկեղեցին շեշտում է Պապի անսահմանությունը, եթե նա «յաթոռոյ խօսի», ուղղափառ եկեղեցին միշտ շեշտել է հեղինակությունը ընդհանրական եկեղեցու: Այս առողջով մեծ արժեք է ներկայացնում 1848 թվականի Ռողափառ եկեղեցու պատրիարքների համակը Պիոս 9-րդ Պապի՝ «մեր եկեղեցու ոչ պատրիարքները և ոչ էլ ժողովները կարող են նոր որոշումներ մտցնել, որովհետև հավատքի պահպանը ողջ ընդհանրական եկեղեցին է, այսինքն՝ հավատացյալների հավաքը» (ԳԱ ԺԵ: 22, 23, 25 և 28): Ռոպ հայտնի աստվածաբան Ալեքսի Կոմյակովը Պապի իրավունքների հարցին անդրադառնալիս, գրում է՝ «Պապը շատ սխալվում է, եթադրելով, որ մենք՝ ուղղափառ եկեղեցիներս նվիրագետական կարգը համարում ենք պահպանիշները դավանանքի: Այդպես չէ: Եկեղեցու դավանանքի անփոփոխելիականությունը և հարատևությունը կապված չէ նվիրագետական կարգերի հետ. այլ այն պահպանվում է Աստուծո ժողովրդի ամբողջականության կամքով, որը հենց կազմում է Քրիստոսի մարմինը՝ եկեղեցին»:

Ոչ մի ժողովի տիեզերականությունը չի երաշխավորված «յառաջագութ» (արցու): Առաջին տիեզերական ժողովի որոշումների լայնատարած ընդունելությունը վճռական նշանակություն ունեցավ: Այս առնչությամբ հարկավոր է հիշել, որ քրիստոնեության կազմավորման ու ծավալման արշալուսին, գումարվել են ժողովներ, որոնք հավակնություն չունեն տիեզերական կոչվելու, թեև ճանաչվեցին որպես այդպիսներ. ինչպես Կ. Պոլս 2-րդ (381 թ.) և 5-րդ (553 թ.) ժողովները: Խնկ ավելի փոքր տեղական համարվող ժողովների որոշումները, ինչպես Անկորապի (314 թ.), Նիո-Կեսարիոյ (320 թ.), Անտիոքի (329 թ.), Գանգոս (342 թ.), Լատիկիա (350 թ.), ժամանակի ընթացքին ձևոր են քերել լայն ճանաչողականություն: Ծիծու է նաև հակառակը. ժողովներ, որոնք գումարվել էին որպես տիեզերական, չարձանացան լայն ընդունելության. ինչպիսիք էին՝ Սարդիկայի 2-րդ, Եփեսոսի 2-րդ, Հռոմի 341 թ. և այլն: Պատմագետ Լ. Զեդիինի կարծիքով՝ «առաջին հազար տարվա ընթացքին, ժողովներ գումարողների հայտակը և կամքը բավական չեր ժողովներին օժտելու տիեզերական մակդիրով, ոչ էլ որոշումների ընդունելությունը Պապի կողմից: Կարողիկ եկեղեցու ընդունած բան տիեզերական ժողովները [այժմ 22] ոչ մի կանոնական հիմք չունեն, և արձակած որոշումները ունեն անհատական բնույթ»:

Որեւէն, եթե մի ժողովի տիեզերական լինելը «յառաջագութ» որոշ չէ, առավել ևս սխալ է որոշումներին «անսահմանություն» վերագրելը: Որոշ ժողովներ հաճախ իրար ճշտել են: Ի դեպ, ինչպես կարելի է դատել փաստերից, Քաղկեդոնի 451 թվականի ժողովը դիտավորյալ փոխուսեց Եփեսոսի 431 թ. ժողովի որոշումը, որը ինչպես գիտենք, Կյորեղ Ալեքսանդրացի հայրագետի առաջնորդությամբ բանադրեց և նզովեց Նեառորին և ընդունեց «Մի է բնութիւն Բանին մարմնացելոյն Աստուծոյ» բանակը: Կ. Պոլս 754 թվականի ժողովը ժխտեց պատկերների պաշտամունքի դավանաբանական առանցքը հանդիսացող որոշումները, որը Նիկողյ 2-րդ ժողովը 787

թվականին վերահստատեց: Սակայն այս ժողովի որոշումները եւ չմնացին վերջնական: Երկու ժողովներ ևս գումարվեցին, 815 և 842 թվականներին, դարձյալ պատկերհարգության առիթով՝ մեկն ընդդեմ, մյուսն ի նպաստ:

Տեղերական ժողովների ընդունման հարցը Հայաստանեաց եկեղեցու մեջ

Հայաստանեաց եկեղեցին Արևելյան ուղածում քոյլ եկեղեցիների հետ [Ասորի, Հաբեշ, Ղպտի] ճանանչում և ընդունում է առաջին երեք տիեզերական կոչված ժողովների դավանական որոշումները, որպես ամենահին և հարազատ հավատքը: Դրանք են.

Ա. Նիկիոյ Առաջին 325 թ.: Այս ժողովը գումարվեց Կոստանդիանոս կայսրի կողմից, որին մասնակցեց Հայոց կաթողիկոս Ս. Արիստակես հայրապետը: Ժողովը նորվեց Արիստին, որ ուրանում էր Քրիստոսի աստվածությունը և հրա Աստծուն համագոյակից լինելը: Ժողովը խմբագրեց հավատ այն բանաձևը, որ ծանրություն է եկեղեցական պատմության մեջ «Նիկիական Համագոյակ» անունվ, և որը ներկային ընդունվում է քրիստոնյա բոլոր եկեղեցիների կողմից:

Բ. Կ. Պղտոյ Առաջին 381 թ.: Այս ժողովը գումարվեց Թեոդոսիոս կայսրի հրավերով, որը նորվեց Մակեդոնին, որ մերժում էր ընդունել Ս. Հոգու Հոր և Որդուն համագոյակից լինելը:

Գ. Եփեսոսի Առաջին 431 թ.: Այս ժողովին նախագահեց Կյուրեղ Աղեքսանդրացի Հայրապետը: Ժողովը դատապարտեց Նեստորին, որ մերժում էր Ս. Կույսին «Աստվածածին» կոչել, որովհետև հրանից ծննածը Աստված չէր, այլ մարդ և, հետևաբար, Ս. Կույսին պետք է ճանաչել որպես «Քրիստոսածին»: Ժողովը նորվեց Նեստորին և ընդունեց դավանական բանաձևը. «Մի է բնութին Բանին մարմնացելոյն Աստուծոյ»:

ՅՈՒ թվականին երբ Հայաստանը քրիստոնեությունը ընդունեց պետական կրոն, եկեղեցին դեռևս բաժանված չէր: Քրիստոսի Աստվածության ու մարդեղության խնդիրների շորջ ծագած վիճարանությունները սկսեցին 325 թվականին և ընդմիջումներով շարունակվեցին մինչև 451 թվական: Հայուր տարվա ընթացքում վերոնիշյալ երեք ժողովները գումարվեցին, որոնք վճռեցին և հաստատեցին Ս. Երրորդության, Մարդեղության և Քրիստոսի Մարդկային և Աստվածային բնությունների վարդապետության հիմնական և կարևոր կետերը: Առաջին երեք ժողովների վճռների հեղինակության և անսիսականության ընդունման գործում նպաստեց և այն հանգամանքը, որ «առանց երկպատակության, առանց իշխության հավակնության, առանց առաջականության գգացմանց, առանց որևէ արտաքին և անողջակի դիտմանց. այլ լոկ հավատքի և եկեղեցու համար»⁹, այսինքն, քաղաքական և այլ ակրնեալիքներից գերծ: Այս գնահատականը ճիշտ է հիմնականում, բայց մի հաճախանք պետք է շեշտել: Հոռմեսական կայսրության մեջ երկպատակությունը կանխվելու համար էր, որ Կոստանդիանոս կայսրը հրավիրեց Նիկիոյ առաջին ժողովը, որտեղ խիստ դատապարտվեց վեճի պատճառ դարձած Արիոս Լիբեացին: Այն օրից, որ Քրիստոնեությունը դարձավ կայսրության պետական կրոնը՝ կայսրության քաղաքական միասնությունը պահանջում էր հավատի միասնություն: Հայ գրականության մեջ այս երեք ժողովների մասին որոշակի հիշատակության ենք հանդիպում Յանձնապատում ճառերում: «Վասն մարտիրոսացն վարդապետութին ուսմանց» վերնագրով ճառում հե-

դիմակը ողղափառների տարած հալլուսիոնը համարելով հավատացյալ-ների մեջ հաշուության ու խաղաղության վերականգնում, գրում է՝ «Զի այս պէտք է ժողովս սրբոց հաղորդեցուք և տօնեցուք ի փառ ամենակալին Սատուծոյ, որ ես նոցա զայլությունն առ չար բռնաւոր»։ Նույն տեղում նեղինակը անդրադառնում է ողղափառ հավատի համար սահմանված կանոններին ասելով. «Նաև ամենայն ողղափառ ժողովը եպիսկոպոսաց, որ զուղարքամ հավատը հաստատեցին և կանոն սահմանեցին եկեղեցոյ, և զայս սահմանեցին եզովիք»¹⁰: «Ամենայն ողղափառ ժողովը» բացատրությունը, ցոյց է տալիս, որ Յաճախապատում ճառերը գրվել կամ խմբագրվել են 431 թվականից, երրորդ տիեզերական ժողովի գումարումից հետո, եթե Սահմակ և Մեսրոպ հայրապետների Հունատան ուղարկած աշակերտները, որոնց մեջ էր նաև Կորյունը, վերադարձան և իրենց հետ քերեցին Նիկիոյ և Եփեսոսի ժողովների կանոնները։ Նիկիոյ ժողովին մասնակցել էր հորից կաթողիկոսական աթոռը ժամանգած Ս. Արքատակես հայրապետը՝ «արդեն Նիկիոյ ժողովի ժամանակ ամենայն հավանականությամբ ոչ Լուսավորիչը և ոչ Տրդատը կենդանի չէին։ Նորագոյն ուսումնասիրությունների հիմնան վրա Տրդատի մահը ունաճ դնում են 317 թ.։ Եթե Լուսավորիչը նրանից առաջ է վախճանվել, որեւն Ս. Արքատակեսը Նիկիոյ ժողովում մասնակցել է ոչ իբրև նորա փոխանորդը, այլ իբրև Հայոց իսկական կաթողիկոս...»¹¹: Հիմքեր կան այդ ճառերի հեղինակ համարելու Մեսրոպ Մաշտոցիկ¹²:

Մեսրոպ Մաշտոցը Քրիստոսարանական խնդիրներում թեկադրում է փնտել և հետևել հետազոտության չափավոր ճանապարհին և զգուշանալ Քրիստոսի էպոթյունը տարրալուծելուց։ Հայ եկեղեցին իր պաշտոնական գոյության առաջին օրից իսկ ընդգրկեց ընդուն մի քաղաքականություն։ մի կողմից չմեղանչեց եկեղեցու ընդհանրականության և միասնականության դեմ և մյուս կողմից, չթուացրեց հավատի Սատվածային հայտնությունը՝ «Դադարեցուք ի դատարկ և ի վայրակար քննութենէ և զիւն երթիցուք զիրատուց գրոց սրբոց հնոյն և նորոյն։ Զի ես եմ ասէ Սատուած և չիք այլ ոք ոք պատմէ զիրատուն, զի նովա կեամք և շարժիմք և եմք»¹³: Դավանանքը հավատի խնդիր է, այսինքն ճանաչելու և զգալու ճանաչելու հավատալ չէ, հավատալը զգալ չէ. «քաշիմաց լեր, մաճք քննեա, սրատես լեր մտօք առաւել քան աչօք»։ Այս նոյն վերաբերմունքը Հովհաննես Մանդակունի հայրապետը քնութագրում է հետևյալ կերպ՝ «Բայց ճշմարիտ քրիստոնէին ոչ է պարտ ընդ այնպիսի խոներս դեգերելով թաւալիլ, քանզի մահ գործէ, և որք ժարինեցան քննել զինորս Աստուծոյ իսկապէս շահեցան զատակումն։ այլ հաւատալ մարմնացելումն Բանին Սատուծոյ և յաւէտ զարմացմաք փառատրել՝ որ զծուայի զկերպարան առնելով երեւեցաւ և է ի վեր քան զիրեշտակս խոնարհութիւնն։ Անտառը պարգևացն և մարգարեւուանցն յայտնիս զիւն երթիցուք»¹⁴:

Հայ եկեղեցին չորրորդ և հինգերորդ դարերում արծարծված քրիստոսարանական վեճերի ընթացքում համախոհ գտնվեց Նիկիական-Կապադովիկյան-Աղեքսանդրյան ողղափառության, այսինքն Կյուրելյան միաբնակության հետ։ Պարզորոշ է, թէ Հայ եկեղեցին մի քնություն բանաձևով հասկանում է ոչ թէ միակ քնություն ի Քրիստոս, այլ Սատվածային և մարդկային քնությունների հրաշալի միավորություն։ Հայ աստվածաբան Հովհաննես Օձնեցին այսպէս է քացատրում հայոց եկեղեցու դիրքը. «Է ըստ քնութեան երկուց՝ աստուածային և մարդկային, իսկ ըստ միատրութեան՝ մի»¹⁵, որը համապատասխանում է Բարսեղ Կեսարացու «երկուց գոյացութեանց

կատարելոց միաւորութիւն» բանաձևումն: Պեսր է հեռանալ այն պարզա-
միտ տեսությունից, ըստ որի, միաքնակությունից և երկքանակությունից դուրս,
մի երրորդ տեսակի դավանություն չկա կամ չի կարող լինել:

Հայ եկեղեցին 506 թվականին մերժեց Քաղկեդոնի ժողովի դավանա-
կան վճիռները երկու պատճառով: Սուաշին՝ սահմանված դավանությունը
ևսոց Պապի Տոմարի միջոցով նկատվեց նեստորականությունը «արտաքին
կերպարանափոխությամբ նորոգել ուզող» ժողով, որը հակառակ Քաղկե-
դոնի ժողովականների մեծամասնության համոզումներին, պարտադրվեց
մեծամասնության վրա¹⁶: Հայոց Գագիկ թագավորը իր Տոմանու կայսրին
գրած համակի մեջ, ընդունելով միայն առաջին երեք տիեզերական ժողով-
ների հեղինակությունը, Քաղկեդոնի վարդապետությունը մերժում է, որով-
հետև. «Նեստորաքար իմացմամբ սահման եղեալ յետ անձառ միաւորու-
թեան Բանին և մարմնյան երկու բնութիւնն բաժանաքար ի մի Տէր Յիսուս
Քրիստոս խոստվանեցին»¹⁷: Երկրորդ 506 թվականին, երբ հայ եկեղեցին
որոշում էր իր պաշտոնական դիրքը Քաղկեդոնի ժողովի նկատմամբ, հարկա-
դրված էր ուշադրություն առնել այն հանգամանքը, որ այլև դավանական
միասնականություն չկար ընդհանրական եկեղեցու մեջ: 431 թվականից հետո,
գումարված ժողովների գործելու կերպը փոխվել էր: Խշանության և առաջա-
գահության խնդիրները, վարչական դիտումները, քաղաքական սուրյա
հարցերը առիթ տվին ժողովների, որոնք չեն կարող վայելել ամբողջական
եկեղեցու ընդունելությունը: Դավանարանական շարքի տակ կատարի
պայքար էր մղվում ավանդական երեք աթոռների՝ Հռոմի, Անտիոքի և
Աղեքանդրիո, ընդեմ նորահաստան Կ. Պոլս աթոռի, որին 381
թվականի ժողովը իր Գ կանոնվ հոչակում էր. «Կոստանդնուպոլիս է Նոր
Հռովմը», իսկ Քաղկեդոնի ժողովի, ին կանոնը հաստատում էր. «Ս. Եկե-
ղեցին Կ. Պոլսոյ, որ է Նոր Հռովմ»¹⁸: Իսկ Քաղկեդոնի ժողովը, որ դաս-
վեց տիեզերական ժողովների շարքին, նույնիսկ Բյուզանդական կայսրու-
թյան սահմաններից ներս չուներ և չունեցավ երեք այն պատիվը և հեղինակությունը, որ վայելում էին առաջին երեք ժողովները:

Փոտ Պատրիարքը (878–886) իր, հայոց հետ ունեցած համակագրու-
թյան մեջ, Քաղկեդոնի ժողովի ընդունելության ի նպաստ, հիշում է, որ այն
ընդունվում է Հռոմի, Աղեքանդրիո և Երուսաղեմի կղղմից: Մրան ի պա-
տասխան, Սահմակը գրում է, թե բացի այն հանգամանքից, որ Քաղկեդոնի
ժողովի որոշումները նեստորականության են հարում, նաև ավելացնում է.
«Արդ, զի՞ն աստանար իմացուր, որ ստիպիս ի քոյ սրբութենել դ ընդունի
զժողովն Քաղկեդոնի: Տեսան մերոյ ուսուցեալ Ե՝ որ սիրէ զիայր և զմայր
առաւել քան զիս չէ ինձ արժանի: Արդ, ոչ կարեմք զՔաղկեդոն սիրել, զքա-
ժանողն յերկոս զմի Քրիստոս, եւ զՔրիստոս ասել, որ իրովն փրկեաց
զմեզ պատուական արեամբ»¹⁹: Հայ եկեղեցու ըմբռնումով ընդհանրական
եկեղեցու ընդունած առաջին երեք տիեզերական ժողովների որոշումները,
որոնք իր համար համարվում են հավատքի հիմնաքարերը, մի որիշ ժո-
ղով չէր կարող շնօել: Տիրան Արք. Ներսոյանը իր նորվածներից մեկում
գրում է. «ուղղափառության դրոշակը մղել մեկ ժողովի հեղինակության և
անցկացրած վճիռների անսխալականության վրա կամ մի եկեղեցու ող-
դափառությունը դատել այս կամ այն ժողովում ընդունված կամ մերժած
տեսակետների հիման վրա ոչ միայն չի ատեհծի ցանկացած միությունը եկե-
ղեցիների միջև, այլ ընդհակառակը, կարի պայքարը: Այն կապը, որ շամե-
նայն մարմինն յօդիք և խաղալեալ տարաքերեալ և խանեալ աճէ զա-

ճամբ Աստուծո» (Կող. Բ 19) Քրիստոնեական կյանքը է՝ կենտրոնացված սրբազն Պատարագի արարողության մեջ... ժողովների նպատակը և պաշտոնը պետք է ինչի պաշտպանել այդ միասնականությունը եթե այն փոստի գի տակ է»²⁰:

Հայ եկեղեցու նման դիրքորոշումը ժողովների նկատմամբ կրկնվում է նաև Սով 1307 թ. և Աղանայի 1317 թ. եկեղեցական ժողովներում, որտեղ կասկածելի իրավական ուժ ունեցող որոշումներ են ընդունվում: Կիլիկյան Հայաստանի քարձրաստիճան հոգևորականության ամենաազդեցիկ ներկայացուցչները՝ հանձին Գրիգոր Անապարզեցի (1293—1307) և Կոստանդին Կեսարացի (1307—1322) կաթողիկոսների, կաթողիկ եկեղեցու գերիշխանությունն ընդունելը հայապահման էին համարում հայկական քաջարականության գոյությունը պահպանելու համար, ամենամեծ հայությունը պահպան իշխանության հետ, որը ամենահզոր ուժն էր եկուուական քաղաքականության մեջ տվյալ ժամանակաշրջանում, սույ քաղաքական ու ուզմական դաշինքի և աջակցության շարժադիմերով էին թեարդրված, իսկ կրոնա-դավանականը՝ առաջարի նպատակին հասնելու համար՝ դիվանագիտական բանակցությունների իրք եղակեռ և սակագին: Մինչդեռ պապական իշխանության համար, ընդհակառակը, առաջնայինն ու վճռականը դավանականն էր՝ հայ եկեղեցու քացարակ հապատակեցումը Հոռմին՝ կաթողիկության ընդունումով, որպեսզի ամենամեծը, բայց և խարդախ ճանապարհով իր գերիշխանությունը հաստատեր Կիլիկյան հայկական քաջապարության սահմաններում²¹: Մեծ Հայքում կազմակերպված հոմլու դիմադրությունը մի կողմից՝ պապականության դեմ, մյուս կողմից՝ հայկական արքունիքի և հոգևոր վերնախավի դեմ, որ դարերով սրբագրծված ազգային պահանջությունները ունեալու էին անում, դավանաբանական միասնություն ստեղծելու համար: Սրելցան Հայաստանի ներկայացուցիչները, Եսայի Նչեցու առաջնորդությամբ շարունակելով Ներտես Շնորհալի Կաթողիկոսի լայնախոն ու հասուն միտքը, պահում էին, որ քրիստոնեական եկեղեցիների միաբանությունը իրոք աստվածահան գործ է և սատանան է, որ «ատելութեամբ զմեզ առ իրեար գրգու և քածանէ, զի դիրաս յաղթեսցէ»: Բայց իրատես լինելով, գտնում էին, որ քանի դեռ չեն ստեղծվել եկեղեցիների միավորման համար անհրաժեշտ պայմաններ, ամեն մի եկեղեցի, առաջնորդվելով «հին սովորութիւն քաղցը է իրաքանչիր ումեր» սկզբունքով, պարտավոր է հավատարիմ մնալ անցյալից ժառանգած և ազգային երանգ ստացած ավանդություններին, միաժամանակ հարգելով մյուսների օրենքներն ու սովորույթները: Որով Եսայի Նչեցին Կիլիկեցիների կողմից «սուրբ» հոչակիած Սով և Աղանայի ժողովները «սուս ժողով», «իշխանս-ժողով», «հինքնահան կամօր» բառերով է ներկայացնում, եկեղելով այն իրավանությունից, որ՝ նախ, ժողովին մասնակցել են սակավաթիվ պատգամավորներ, այն էլ միայն Կիլիկյայի ներքին թեմերից, և ապա, շատերը հենց տեղում հակառակել են ու «դեռ տակաւին ևս հակառակին» մերժելով ժողովի վճարակար որոշումները: Իմաստաեր, նախանձախնդիր վարդապետը իր միտքը եզրափակում է այսպես. «իբր, որ ի սահմանելն իրում հակառակութիւն կրէ յայտ է թէ ոչ է ճշմարիտ, այ սուս»²²: Իսկ Ստեփանոս Օրբելցանը մերժելով

մասնակցել կաթողիկոսական ընտրական ժողովին գրում է. «մեք ոչ եմք հասու կամ խորհրդակից եղծման զի եւ նորոգմանն հաղորդեսցոր. ո որ ինքնահաճ կամօր եղծումն արար, նոյն եւ զնորդ ընտրութիւնն հոգացէ»²³:

Եսայի Նշեցին, խոսք ուղղելով նրանց, որոնք օտարաբար խորհին, բացատրում է, որ դավանարանական տարաձայնությունները հայ եկեղեցուն միայն չի կարելի վերագործ՝ առանց պատմական տվյալների ու փաստերի քննության: Բանն այն է, որ հայ եկեղեցու դավանանքը ոչ թե անշան մարդկանց կողմից ներմուծված «եկամուտ» և «խորթ» դրույցունների վրա է հիմնված, այլ «առաքյալների» կողմից և հնագույն ժամանակներից, որպիսին ընդհանուր էր քրիստոնեական բոլոր եկեղեցիներին, այդ թվում և Հռոմի, և Բյուզանդիոնի, և Սուրբի համար: «Եւ զայս մի անգիտանայթ, եղբարք, զի Հայաստանեացս կրօնք և աւանդութիւն ոչ խորթ է և կամ եկամուտ որ յանշանից բերեալ, այլ՝ յԱռքելոցն և ի Հարցն սրբոց ի մեզ եկեալ»²⁴: Այս միտքը Հայոց Պատրիարք Մաղաքիս Օրմանյանը լրացնում է այսպես:

«Մեր եկեղեցին մեղ եւ անձուկ կապերով սեղմուած չէ: Ներողամիտ ակնարկներով ոգեւորուած է: հնաւանդ կանոնաց հաստարիմ է, նորութեանց եւ կամայականութեանց բարեկամ չէ: Քրիստոսի աստուածային վարդապետութեան աշակերտ է: Աւետարանի շինչ բարոյականին հետևուող ինչ որ Լուսառորիչը սորվեցուց այն մեր հաւատըն է, ինչ որ Սահակ և Մեսրոպ օրինադրեցին, այն մեր կանոնն է, ինչ որ ասոնց հետևող հայրապետներ ու վարդապետներ սորվեցուցին, մեր ուսումն է: Չեմք սիրեր անոնցմէ պակսեցնել, չեմք սիրեր անոնց վրայ յաւելու: Ահա մեր ուղղութիւնը»²⁵:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Վազգեն Հակոբյան, Կանոնագիրը Հայոց: Ա հատոր: Երևան: ՀՍՍՌ ԳԱ., 1964: Կանոնը Սուպերվականը ԺԴ, ԺԵ, և ԽԲ, էջ. 37, 41—42:
- Դերեմիկ և փակուպոս, Թուղթ ներքման: Պատահան կարդինալ Աղամանեանի. «Հովուական բուղություն»-ի: Անրիիլա: Կայ. Հայոց Կիլիկիոյ, 1952. 2-րդ տպագր. Հռոմի Արքուն առաջապահութան սկզբունքի [Tū es Petrus «զի դու ես Վէմ»] միակ կովանը Մատթեոս ԺԶ: 19—19 համարներն են, որը հայտնի աստվածաբան Շառովի Բուղման փաստէ է, որ բնագրի եղծում է: Մարկոսի և Ղուկասի վկայությունների մեջ Մատթեոսի պահպետութերը չկան: Բացի այդ ինչպէս հասկանալ Ա Կորնթ. Գ: 11 համարը. «զի հիմն այլ» որ ոչ կարէ դնել քան զեղեալն, որ է Ցիսուս Քրիստոս» R. Bultmann, 'Die Frage nach der Echtheit von Mt. XVI, 17—19. Theologische Blätter XX(1941), 265—79; Maurice Goguel, The Primitive Church. London: George Allen and Unwin, 1964, pp. 185—187. Սուպերվակի համապատվության թեզը պաշտպանելով, Հայոց եկեղեցու ներկավարները կաթողիկ եկեղեցու հիմնադիր հոչակված Պետրոս և Պողոս առաքյալների դիմաց պարզուն էին երկու այլ առաքյալների՝ Բարթողիմոսին և Թաղեսուին: Ուշագրավ է, որ Կոստանդին Բարձրքրդին իր պատշաճական գրությունների մեջ, կաթողիկոսական իր տիտղոսից անմիջապես նետս «ծառայ Քրիստոս և Հնորհն նորին կաթողիկոս հայոց» շեշտում էր հայոց եկեղեցու «ընդ իշխանութեամբ գաւազանի սրբոց առաքելոցն Թաղեսուի և Բարթողիմոսի» լինելու պարագան:
- Ընորմը Արք. Գալուստեան, Համասու ակնարկ Հայց. Եկեղեցու ընդհանուր ժողով. Անրուն կազմութեան վրայ: Խաթանպով, 1986, էջ 3:
- Վազգեն Հակոբյան, Կանոնագիրը Հայոց, «Կանոնը Նիկիական», ԺՄէ, էջ 120:
- Սուպերվ յոթ տիեզերական կոչված ժողովների թվականները — ա. Նիկիա 325, թ. Կ,

- Պոլիս 381, գ. Եփեսոս 431, դ. Քաղկեդոն 451, և. Կ. Պոլիս 553, զ. Կ. Պոլիս 680—81, է. Նիկիփ 787: Հայ եկեղեցին, Աստիրի և Աղեքանդրի աշոռների մեջ մարդացին Քաղկեդոնի վարդապետության վճիռը, իսկ Բյուզանդական եկեղեցու վերջնական բաժանումը Հռովմեական եկեղեցու սկզբ 1045 թ. «Բխումն ի հօրէ և յորդու» վարդապետության պատճառով: Այս բաժանումը կոչվեց «Արևմտյան ներձակած», որովհետև Հռովմեական եկեղեցին էր, որ «և Որդոյ» բանաձևով մեռանում էր ինն ավանդական դավանություննեց: Տես: J. M. Hussey, *The Orthodox Church in the Byzantine Empire*. Oxford, 1986; T. Waré, *The Orthodox Church*. London, 1972; F. Dvornik, *The Ecumenical Councils*. New York, 1961.
6. Արշակ Տեր Միքելան, Հայաստանաց սուրբ եկեղեցու քրիստոնեականը: Զետնարկ դաւանաբանութեան: Տփիսիս, 1900. էջ 272—273:
7. Հ. Ցովսէփ վ. Գարեգինան, Հանգանակ Հայատոյ որով վարի Հայաստանաց եկեղեցի: Վիեննա: Միսիոնարեան տպ. 1891. էջ 10:
8. Արքսանկու Եպկ. Սեղբական, Հայաստանաց եկեղեցու պատկերագործիներ: Ս. Պետքրուրոց, 1904, էջ 38—39, Երվանդ Մելքոնյան, «Վրքանես Քերթողը և պատկերաբանությունը», Էջմիածն, 6—7 (1970) 86—97, Հ. Հ. Քյուէյան, «Վրքանես Քերթողի Յաղագ Պատկերամարտից երկը», ՊԲՀ 2 (1981), 178—189:
9. Շամի վարդապետ, Խնդիր մի բնութեան և երկու բնութեանց Լոյս Բ տարի 1906: էջ 1090:
10. Սրբը Խօն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսաւորիչ Յաճախապատում ճառը լուսաւորը: Էջմիածն, 1894, 189—190, 256:
11. Կ. Տեր-Մկրտչյան, Հայոց եկեղեցն պատմություն: Վաղարշապատ, 1908, էջ 80:
12. Ա. Ն. Սրապյան, «Յաճախապատում» ճառերի հեղինակի հարցը, ՊԲՀ, 5 (1962), էջ 38:
13. Յաճախապատում ճառը, ճառ Բ.
14. Կմիթ Հայատոյ: Էջմիածն, 1914, էջ 131—132, Մեսրոպ Վրդ. Աշճեան, «Տիեզերական ժողովներու բնութեան հարցը Հայ եկեղեցու կողմէ», Հասկ, 11—12 (1969), էջ 522—26, 1—2 (1970):
15. Շամի վարդապետ, Խնդիր մի բնութեան... էջ 1089—91:
16. Կ. Տեր-Մկրտչյան, Հայոց եկեղեցին պատմություն, էջ 189:
17. Գիրը Թղթոց: Թիֆլիս, 1901, էջ 296, Մեսրոպ Եպկ. Գրիգորյան, «Գագիկ Արծրունի Բագրատունի թագավորների թղթերը բյուզանդական արքունիքին», ՊԲՀ 3 (1989), էջ 94—101: Ասոնի Տոմարի պատ համտարարությունն էր, նայ եկեղեցու հայրերը մկանում էին Անտոռականությունն նորոգել ուղղ միջամտություն: «Կարասցէ մեռանել ըստ միջի և ոչ կարասցէ մեռանել ըստ միտոյ» և թէ «Բանն Անդրդրէ զոր Բամին է և Սարմին կատարէ զոր մարմնոց է»:
18. Դերենիկ Եպիկոպոս, Թուրք Հերքման, էջ 33—34, John Meyendorff, *The Council of 381 and the Primacy of Constantinople' in Catholicity and the Church*. New York, SVS press, 1983, pp. 121—142.
19. Գիրը Թղթոց, էջ 185, Հ. Պոլոս Անանեան, «Փոստ պատրիարքին ճառակը Աշոտ իշխանին», Բազմավեպ, 1—4 (1989), 1—2 (1990):
20. Tiran Nersoyan, 'Problems of Consensus in Christology: The Function of Councils' in Christ in East and West, ed. by Paul R. Fries անդ Tiran Nersoyan. Mercer University press, 1987 p. 51.
21. Գ. Խաչերյան, Գլածորի համալսարանը Հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ 13—14 դդ.: Երևան: Լոյս, 1973, էջ 205—206:
22. Մաշտոցի Մատենադարան ձեռ. № 9622 «Թուրք Եսայեայ վարդապետին, պատահանի թղթոց Սայ կարտովիկոսին և բագաւորին»: Ասոն Խաչիկյան, «Արտազի հայկական իշխանությունն և Ռոբորի դպրոցը», Բանքեր Մատենադարանի, 11 (1973), էջ 152—153:
23. Պատմութիւն Յաճախանց Սիսական, էջ 440:
24. Գ. Խաչերյան, Գլածորի համալսարանը, էջ 216—217:
25. Խաչերյան բանքար մը Օրմանեան Ս.Էն. Հայ Խոսեակ տարեգիրը, 1941, Ա. տարի, էջ 103:



«ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ Ի ՊԵՏՍ ՔԱՐՈՉՈՒԹԵԱՆՑ»* (իմաստուն ասույթներ քարոզների համար)

96. **Գրիգորի ասացեալ.** Ո՞վ ոք իցէ ի հաւատացելոցն յերկրայս ի ժամ զենման անարատ գաղինն, բանալ երկնից և դասուց հրեշտակաց իշանել ի խորհուրդ Տեսն Յիսուսի Քրիստոսի, որ խառնին ստորևայինք ընդ վերնոյն և երկրաւորս երկնայնոցն:

97. Խոնարհումն և զղջումն մեղաւորին է կերակոր Աստուծոյ, իսկ հպարտութիւն է տաղտկացումն:

98. Ոչ ինչ զոհ այնպէս հաճոյ է Աստուծոյ որպէս փրկութիւն մարդոյ:

99. Ամենայն գլխաւոր մեղք վերընծիուին ի թիւնալից արմատոյ հպարտութեան:

100. Ոլ, ցանկայ նախագահ լինել մարդկան, ցանկայ լառաջանալ քան զՏէր իր, որ է Քրիստոս:

101. Մի յամօթ արացեն գործք քո զբան շրթանց քոց, զի մի յորժամ խօսեցես, ասացեն՝ Ընդէ՞ր զոր ասես ոչ առնես:

102. Ով մարդ ընդէ՞ր փրանս, ով շարաֆ գարշահոս ընդէ՞ր ոտնուս, ով մեռեալ մորթ զմէ՝ տարածիս. Քրիստոս՝ իշխանն քո խոնարհեալ և դու հպարտացեալ, գլուխն խոնարհեալ և անդան հպարտացեալ:

103. Զայս ունի խրատն և իմաստութիւն, զի կեանս տայ ստացողին իրոյ:

104. Բարկութեամբն կորուսանի իմաստութիւն, քանզի թէ զինչ և որպիսի պարտ իցէ առնել ոչ գիտէ, քանզի ի բաց խլէ զլոյս իմացմանն և շփորէ զմիտոս:

105. Հեղութիւն պահէ ի մեզ զպատկերն Աստուծոյ, որ է միշտ հանդարտ, այլ բարկութիւն՝ ցրուէ:

106. Մեղք որ ոչ չնշի յստսովանութեամբ առժամայն ծանրութեամբն իրով քարշէ լայլ մելս:

107. Յայնժամ անարդին երկրաւորքն, յորժամ նկատին երկնաւորքն:

108. Որերամոլութիւն է որոգայք՝ եղեալ ի ճանապարհին, ընդ որ հարկ է գննալ. ի յանցն այն դարանակալ լինի որոգայք ցանկութեան, յորմ զայ բանակ. Աստուծոյ, զի որոգայթիս այս ըմբռնեաց սատանայ զնախահարսն:

* Ծարտակալված «Էջմիածին» ամսագրի 1990 թ. № № Ը—Թ-ից և 1991 թ. № № Ա—Բ—Գ-ից:

96. Գրիգորի կողմից ասված. Հավատացյալներից ո՞վ է կասկածի մեջ ընկնում անարատ Գառնուկի զոհաբերման պահին, եթե բացվում է երկինքը և հրեշտակների դասերը իշխում են Տեր Հիսոս Քրիստոսի խորհուրդին, որտեղ ստորինները միանում են վերիններին, և երկրավորները՝ երկնավորներին:

97. Խոնարհումն ու զղումը մեղավորի համար Աստծու կերակոր է, իսկ հպարտությունը՝ տաղտուկ:

98. Ոչ մի զո՞ն այնպես հաճելի չէ Աստծուն, ինչպես մարդու փրկությունը:

99. Բոլոր գլխավոր մեղքերը վերածաղկում են հպարտության թունալից արմատից:

100. Ով ցանկանում է նախագահ լինել մարդկանց, ցանկանում է իր Տիրոջից՝ Քրիստոսից առաջ անցնել:

101. Քո գործերը թող ամոթի շմատնեն քո շրթների խոսքերը, որպեսզի, եթե խոսես, չասեն «ինչո՞ւ չեն անում, ինչ որ ասում են»:

102. Ով մարդ, ինչո՞ւ ես փրկում, ո՞վ գարշահու թարախ, ինչո՞ւ ես ուղչում, ո՞վ մեռած մորթ, ինչո՞ւ ես տարածվում: Քրիստոս՝ քո իշխանը խոնարհվեց, իսկ դու հպարտացել ես, գլուխը խոնարհված իսկ անդամը՝ հպարտացած:

103. Խրատն ու իմաստությունը այն [հատկությունը], որ կյանք է տալիս այն ընդունողին:

104. Բարկությունից կորչում է իմաստությունը, որովհետև ինչ և ինչպես պետք է անել, չգիտի, քանի որ խորում է իմացության լույսն ու շփոթեցնում է միտքը:

105. Հեզությունը մեր մեջ պահում է պատկերն Աստծու, որ միշտ հանդարտ է, իսկ բարկությունը ցրում է [այն]:

106. Այն մեղքը, որ անմիջապես չի օնչվում խոստովանությամբ, [իր] ծանրությամբ քաշում է այլ մեղքերի մեջ:

107. Երկրավորները անարգվում են այն ժամանակ, եթե ուշադրության են առնվում երկնավորները:

108. Որկրամոլությունը մի որդայթ է՝ դրված այն ճանապարհին, որով պետք է գնա: Դրանով անցնելիս՝ դարանակալ սպասում է ցանկության որոգայթը, որից գալիս է Աստծու բարկությունը, քանի որ սպասանա այս որոգայթով բռնեց մեր նախահայրերին:

109. Ով որ սուրբ կարգը առնելուց հետո ընկնի բղշախոհական մեղքը մեջ, այդպիսին պետք է լուծարվի իր կարգից:

110. Ներկան ցանկասիրությունը չի հագեցնում, ապառնին չարչարում է, իսկ անցյալը ցանկություն չի առաջացնում:

111. Մեծ կատարելությունը մեր անկատարությունը ճանաչելն է:

112. Ով որ չի կարող տանել որիշի անկատարությունը, վկայում է հենց ի՞ր անկատարությունը:

113. Ով որ տարված լինի ներկայի քաղցրությամբ, կմատնվի հավիտենականի սպասության:

114. Եթե հիշենք սուրբ հայրերի գործերը, մեզ ծանր չեր թվա, ինչ որ տանում ենք, սպավել ևս [եթե հիշեք] Քրիստոսի վարքը:

115. Ում որ վարքն է խոտելի, [խոտելի է] նաև քարոզությունը:

116. Արտասուրքները անմիջապես հանգնում են աշխարհիկ ցանկությունների բոցը:

109. Որ յետ առնելոյ զուրբ կարգն սահեսցի ի բղախտիական մեղս, այնպիսին լուծեալ եղիցի ի սուրբ կարգէն:

110. Ներկա հեշտութիւն ոչ յագեցուցանէ, ապառնին շարշարէ և անցեալն ոչ հեշտացուցանէ:

111. Մեծ կատարելութիւն է ճանաչել զանկատարութիւն մեր:

112. Որ ոչ կարէ տանել զանկատարելութիւն այլոց, ինքն վկայէ անկատարելութեան իմքեան:

113. Որ ըմբռնեալ լինի քաղցրութեամբ ներկայիս, ածի ի սպանումն յախտենից:

114. Եթէ ի միտ ածէաք գգործս սուրբ հարանցն, ոչ թուր մեզ ծանր, զոր ինչ տեսնք, ևս առաել՝ զվարս Քրիստոսի:

115. Որոյ վարքն է խոտելի, նաև՝ քարոզութիւն:

116. Զբոց աշխարհական ցանկութեանց փութով շիշուցանեն արտասուրք:

117. Արդարութիւն մեր առաջի քննութեան Սատուծոյ անհրատութիւն է, և աղտեղանայ առ նրահայեցութիւն նորա:

118. Գործ արդութեան է յաղթել զմարտինն և ընդդիմանալ յատոկ կամաց իւրոց:

119. Յորժամ միտքն է անհոգ դարանակալութեամբ քանսարկութիւն յանկարծակի նետիք մեղացն խոցեալ լինի:

120. Համբերութիւն է օտար չարին համբերել և ընդդէմ չարչարողին ոչ ինչ կերպի ոխակալ լինել:

121. Սուանց սրոյ և հրոյ կարեմք մարտիրոս լինել, եթէ այլոց չարեացն համբերեմք:

122. Որ յաղթէ զինքն, զօրաւոր է քան զամենայն:

123. Զառաքինութիւն համբերութեան մեծ համարիմ, քան զնշան և զարուստ:

124. Նախ հայեաց ի նեղութիւն Քրիստոսի և դիւրագոյն կրեսցես զքյոն:

125. Որպէս կամնասայլն ցորենոյն և խարսոցն երկաթոյն, այսպէս և նեղութիւն արդարոց:

126. Յամախ յաջողմունք ժամանակատրացս է ստոյգ նշան ապառնի թշուառութեանցն:

127. Սղօթք սրտին է և ոչ շրթանց և ոչ հայի Սատուած ի քանս աղա-չողին, այլ՝ ի սիրտն, թէ որպէս պատրաստէ լընդունելն:

128. Էն ոմանք յեկեղեցին, որ ունին զարօսն երկարս, այլ ոչ ունին զվարս աղօթողաց, և զի՞ն զարմանք, եթէ այնպիսն աղօթքն ոչ լինի լսելի:

129. Յատրոս միաշաբաթուցն պարտ է ի քաց կալ յամենայն մարմնաւոր աշխատութեանց, և միայն աղօթից և գոհութեանց պարապիլ:

130. Լարծուկ է թշնամին հին, այսինքն՝ Սատանայ, և թէ ոչ ըմբռնեսցի գլուխն, փութով, բոլորն ի ներք սողայ:

131. Ի դրախտին որպախտենէն փափուկ կերակրովն անկաք, պարտիմք շանալ որչափ կարեմք պարկեշտանալ ի խորտկաց և յագեցմանց, զի դարձեալ կանգնեսցոր:

132. Աւքն ցուցանի քաղցր քանի և առաս տրօք, զի սէրն հաստատի գործով:

133. Զինուրը Քրիստոսի ի պատերազմ ընդդէմ թշնամեացն զվարիանն

117. Մեր արդարությունը Աստծո քննության առաջ անիրավություն էին, և լավատանում է նրա հրահանցության առաջ:

118. Քաջագործություն է հայթել մարմնին և ընդդիմանալ իր հասուկ ցանկություններին:

119. Եթք միտքը անհոգ է, բանապես դարանակալությամբ հաճկարծակի խոցվում է մեղքի նետերից:

120. Համբերություն է դիմանալ որիշի չարին և չարչարողի դեմ ոչ մի ոյն չպամել:

121. Առանց սրի և հորի կարող ենք մարտիրոսանալ, եթե համբերենք պլոց չարության:

122. Նա, ով հայթում է ինքնիրեն, բռնորից ավելի զորավոր է:

123. Համբերության առաքինությունը ավելի մեծ եմ համարում, բան նշաններն ու արվեստները:

124. Նախ նայիր Քրիստոսի նեղություններին, և ավելի դյուրին կրես քոնք:

125. Ինչպես կամնասայն է ցորենի համար և խարտոցը՝ երկաթի, այսպես է նաև նեղությունը արդարների համար:

126. Հաճախ մեր ժամանակավոր հաջողությունը առուց նշան է ապագա թշվառությանց:

127. Աղոթքը սրտի գործ է և ոչ թե շրջունքների, և Աստված չի հայտ աղաչողի խոսքերին, այլ՝ սրտին, թե ինչպես պատրաստվի ընդունելու:

128. Եկեղեցում կան մարդիկ, որոնք երկար են աղոյում, բայց աղոյուի վարք չունեն, և ի՞նչ զարմանալու բան կան, եթե այդպիսի մարդու աղոթքը լսեի չփենի:

129. Կիրակի օրը պետք է հեռու մնալ ամեն մարմնական աշխատանքից և միայն աղոյքով և գոհություն տալով զբաղվել:

130. Հին թշնամին, այսինքն Սատանան, լարծուն է, և եթե գորիսը չըռնվի, շոտով բոլորը ներս կսողովիի:

131. Դրախտի ուրախությունից ընկանք փափուկ կերակրով, պետք է շանանք, որքան կարող ենք, պարկեցն մնալ խորտիկներից ու հագեցուներից, որպեսզի նորից վերականգնվենք:

132. Մերը ցուցաբերվում է քաղցր խոսքով և առատատրությամբ, որով նետու սերը գործով է հաստատվում:

133. Քրիստոսի զինվորը թշնամու դեմ պատերազմում համբերության վահանք առաջ է երկարում, որպեսզի կորուսի չմատնվի, իսկ պատերազմի պատրաստվելիս սիրո նետեր է արձակում, որպեսզի հայթի:

134. Բենաբարտոսի կողմից ապած. Սուպարհությունը փնտրվում է աշխատանքով, սովորեցվում է խոնարհությամբ և ստացվում է սիրով:

135. Եթե Աստծո ծառան չկարդա, հաճախակի չաղոթի և կամ առանց տատանվելու այլ բարի գործերով չըբաղվի, մեղսագործության ոգի կմտնի նրա մեջ:

136. Անգործությունը մայրն է բոլոր մոլությունների և խորթ մայրը բոլոր առաքինությունների, բանի որ պարապությունից է գալիս հետաքրքրասիրությունն ու շատախտությունը, նա հավաքատելին է բոլոր չարությանց:

137. Ինձ ես պահեցի մաից ո զինուց, որպեսզի մարմինս առավել սնուցանելով նրա հետ ցանկություններ ևս չսնուցեմ, հացը չափավոր եմ ուսում, որպեսզի հագեցած որովայնով չձանձրանամ աղոթելուց:

համբերութեան յառաջկոյս դմէ, զի մի կորիցէ և պատրաստէալ ի պատերազմ արձակէ ցնեսու սիրոյն, զի յաղթեսցէ:

134. Բենարտոսի ասացեալ. Սուարինութիւն աշխատութեամբ խնդրի, խնարհութեամբ ուսուցանի, և սիրով ստացեալ լինի:

135. Զի եթէ ծառայն Աստուծոյ ոչ ընթեռնուցու կամ ստէա աղօթեսցէ և կամ զքաղեսցի յայլ ինչ գործ բարիս առանց կարծեաց, մտանի ի նա հոգի պոռնկութեան:

136. Դատարկութիւն է մայր ամենայն մոլութեանց և մօրու ամենայն առաքինութեանց, քանզի դատարկութեանէն յառաջ գայ հետաքրքրութիւն և շատախօսութիւն. նաև է ժողովարան ամենայն շարեա:

137. Պարկենշտացայ ի մսոյ և ի գինոյ, զի մի ի յառաւել սննդանելոյ զմարմինս սնուցից ընդ նմին և զցանկութիւնս. հաց չափով առնում, զի մի յագեալ լորովայնի ձանձրացայց յաղօթ:

138. Եթէ շրջեցայ ընդ երկինս և ընդ երկիր, ընդ ծով և յամենայն, որ ի նոսա՝ ոչ որեք գտանեն զՏէր Յիսուս, եթէ ոչ ի խաչին:

139. Պարկենշտ կերակրոյն հետևի պարկենշտ քոն և հանդարտութիւն:

140. Տոր միշտ նեղութիւն ինձ Տէր, զի իցես հանապա ընդ իս:

141. Որպէս ջոր և հոր ոչ կարեն լինել ի միասին, նոյնպէս սէրն Աստուծոյ և սէր աշխարհին ոչ բնակին ի միում պրտի:

142. Յորժամ մտանես յեկեղեցին աղօթել կամ սաղմուել, զամենայն ամրիխումն մտաց քոց արտաք թողցես, զի կարացես միայն պարապել յԱստուած:

143. Մեծ գարշութիւն է, զի անարգ որքն կամեսցի լինել մեծատուն, վասն որոյ Աստուածն փառաց և Տէրն Սարաւօվին կամեցայ ալքատանալ:

144. Ով մարդ, տես, թէ ուստի գաս՝ զամօթի հար, և թէ որ ես՝ բոցոց հան, և թէ յո երթաս՝ դդղայ:

145. Յամենայն գործ քո յիշեա զվախճան քո, այսինքն՝ զահագնութիւն մահուն, զնրահանցութիւն դատաւորին և զերկիող բորբքեալ գեհենոյն և լախտեան ոչ մեղանչիցիս:

146. Հեշտութիւն հրեշտակաց են արտասուր մեղաւորաց և հոր դիւցան արտասուր զջացելոցն:

147. Մեղայ մեղս մեծամեծս, խիղճ մտաց իմոց ամբոխեալ է, այլ ոչ յուսահատեալ, քանզի ոչ մեղայ այնքան առ ի մահ, որ ոչ քանեսցի մահումըն Քրիստոսի:

148. Բազումք բազում գիտեն և զինքեանս ոչ գիտեն, զայլ տեսանն և զինքեանն՝ ոչ, զԱստուած խնդրեն երեսեկօքս և զինքեանս թողուն ի ներքուստ: Ես վասն այն թողուն զարտաքինսն և դատնամ ի ներքինսն, և ի ներքնոցն երանեն ի վերինսն, զի ճանաչեցից, թէ ուստի գամ և յո երթամ, ինչ եմ և ուստի: Ես այսպէս ճանաչելովն զիս՝ կարացից ճանաչել զԱստուած, զի որչափ յառաջանամ ի ճանաչումն իմ այնչափ մերձենամ ի ճանաչումն Աստուծոյ:

149. Որ պարծի զգեստիք ճնանէ նա գողոյ, որ պարծեսցի ի ճշաճէն, որ դրոշմեալ է զանթի ի ճակատն նորա վասն մեղացն ի լորս ըմբռնեցաւ:

150. Որչափ էաք մեք աշխարհի, պարտական էաք ծնօղացն մերոց, այլ յետ որդանալոյն զմէզ ևս ստաւել ազատեալ եմք ի հոգոց և ի զքաղմանց նոցաւ:

138. Եթե շրջեմ երկնքում և երկրում, ծովում և ամեն ինչում, որ նրանց սեղ է, ոչ մի տեղ չեմ գտնի Տեր Հիսուսին, բացի խաչից:

139. Համեսան կերակրին կինուսի հաճելիք քոն և հանդարտություն:

140. Տեր, միշտ նեղություն տոր ինձ, որ հանապազ ինձ նետ լինեմ:

141. Ինչպես շուրը և հուրը չեն կարող միասին լինել, այնպես է Աստծու սերն ու աշխարհի սերը չեն բնակվում մեկ սրտում:

142. Եթր եկեղեցի մտնես աղոթելու կամ սաղմոս ասելու, քո խճողված մտքերը դրսում քող, որպեսզի կարողանամ միայն Աստծու շուրջ կենտրոնանալ:

143. Մեծ շարիք է, եթե անարգ որթատունկը կամենում է մեծահարուստ լինել, բանի որ փառաց Աստվածն ու զորությանց Տերը ուզեց աղբատանալ:

144. Ով մարդ, տես, թե որտեղից ես գալիս, և ամաչիր, [տե՛ս], թե որ ես, և հոգոց հանիր, [տե՛ս], թե ո՞որ ես գնում, և դողա՛:

145. Քո բոլոր գործերում հիշիր քո վախճանը, այսինքն մահվան սարսափը, դատավորի նրբահայեցությունն ու դժոխիքի բորբոքված կրակը, և հավիտյան մեղք չես գործի:

146. Մեղավորների արցունքը նրեշտակների հաճույքն է, իսկ դների կրակը՝ զոշացողների արտասուրը:

147. Մեծ մեղքեր գործեցի, իմ խիղճը ծանրաբեռնված է, բայց ոչ հուսահատ, բանի որ այնքան մեղք չգործեցի մինչև մահ, որ Քրիստոսի մահով բավկություն չստանա:

148. Չատերը շատերին ճանաչում են, բայց իրենք իրե՛նց չեն ճանաչում, որիշներին տեսնում են, բայց իրենց՝ ոչ, Աստծուն փնտրում են արտաքին ձևերով, բայց իրենք մնում են ներսում: Ես այդ պատճառով թողնում եմ արտաքին բաներն ու դատնում եմ ներքիններին, և ներքիններից բարձրանում եմ դեպի վերինները, որպեսզի իմանամ, թե որտեղից եմ գալիս և որ եմ գնում, ինչ եմ և որտեղից: Եվ այսպէս, ինձ ճանաչելով կարո՞ն ճանաչել Աստծոն, որովհետև ինչքան որ առաջանամ ինձ ճանաչելու գործում, այնքան կմոտենամ Աստծո ճանաշման:

149. Ով որ պարծենում է զգեստներով, նման է այն գողին, որ պարծենում է այն անթիվ նշաններով, որ դրոշմվել են նրա ճակատին այն մեղքերի համար, որոնց մեջ բռնվեց:

150. Ինչքան որ մենք աշխարհում եինք, պարտական եինք մեր ծնողներին, սակայն մեզ ուրանալուց հետո, այլևս ազատ ենք նրանց հոգսերից ու զբաղումներից:

(Շարունակելի)



ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ՆԱԽՆՅԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Ս. ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ. ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ ԵԽԱՅԱ ՄԱՐԳԱՐԵՐՈՒԹՅԱՆ*

«Դմ դատաստանը հեթանոսների լույսն է» (ԾԱ. 4): Սա խկ լուսավորեց նրանց, իմանալ դատաստանը և ի մտի ունենալ իրավունքը: Տեսանուն են դատաստանի շահը, քանզի խավարը փախավ, երկյուղը մերժվեց, ցանկության կարիքը փախտական եղավ: Ինչպես երբ դատավոր է երևան գալիս, գողերին, ավագակներին, գերեզմանակրկիտներին և ամեն տեսակ չարագործների հալածում է, այնպես էլ մտքի ընտրությունը. Երբ կրկին վերստանում է իր գորությունը և, բարձրանարով, հասում ատյանի աթոռին, ամեն վճասակար (բաները) հալածում է, և ամենայն օգտակարը՝ համրուրով ընտանի դարձնում: Կամ թե. չի տեսանվել մի քաղաք, որ դատավորը հասում է ատյանում. ինչ անի մեջ կլինի քաղաքը, (անի մեջ կլինեն) ոչ միայն վճասարարները, այլև նրանք, որոնք խոճի մտոք չեն (առաջնորդվում): Նոյնպես և միտքը. երբ առողջ է, ինչպես դատավորը, բարձրանում ու հասում է ատյանի աթոռին, ապա, այնուհետ, ան ու երկյուղը, որ մինչ այդ անգործության էին մատնված, շտապում են իրենց գործին: Եվ ոչ միայն չար խորհուրդներն են հանդիմանվում, այլև մտքի բարքը, որ վճասակար չէ, դողում և սարսում է: Ինչպես, օրինակ, երբ Աստված է դատում, աստղերն անգամ մաքոր չեն նրա առջև: Նոյնպես և միտքը, երբ ինքն իրեն դատավոր է լինում և, պատշաճ ամբատանությամբ, հանցանքի հատուցումն է պահանջում, չկա մի բան, որ կարողանան նրան արդարացնել:

Եվ հիրավի այդպես է կամենում, որպեսզի մեր անձերը դատապարտենք: Սակայն չհամարձակվեն և չհոժարեն մտքի խիդճը վրովվել, և քննել քո բովանդակ կյանքը, որ, բազով մեղքեր գտնելով, հալածվեն: Եվ գիտեմ,

* Իբրև ճաշակ հարախոսական գրականության, աշխարհաբար թարգմանությամբ ընթերցողների ուշադրությանը նմը ներկայացնում հատվածներ տիեզերական նկեղեցու բազմաբերում մշակներից մեկի՝ Ս. Հովհան Ռոկերերանի (344/54—407 թթ.) Նսայու մարգարության մեկնությունից: Հումարեն բնագրով մեզ հասել է Նսայու մարգարերության միայն առաջին ուր գլուխների մեկնությունը: Մնացայ 56 գլուխների մեկնությունը աշխարհին այսօր հայտնի է հայերեն թարգմանության շնորհիլ, որն իրավանացվել է Ե դարում:

Թարգմանությունը կատարվել է նետիկ բրատարակությունից: «Հատքնիթ ընթերցուածքը ի մատենագրութեանց նախնեաց» (հրատ., Հ. Թատէու վ. Թոռնեան), Վիճակ, 1893, էջ 235—243:

որ շատերն իսկ ախտանում են այսպիսի ախտով. նոյնիսկ իմ (օրինակով) գիտեմ նաև այլոց. քանզի ես իսկ բազում անգամ կամեցա մտածել իմ կենաց վարքի մասին և անաշառությամբ քննել այն, բայց չհամարձակվեցի, որպեսզի բազում տրտմությունների մեջ չնկնիմվի միտք: Քանզի, եթե կարողանանք հարց ու փորձով վանել մեղքերը, և նոյնիսկ ամբողջովին չնշել մեղքերի հիշատակը, հիբավի (շատերը) կագուն դրան: Իսկ եթե մերթ խոշտանգենք մեր միտքը և մերթ ծովանանք, ի՞նչ կշահենք գրվածերից:

Եվ ինչ օգոս ունի, ասում են, մտածել, բայց առավել տրտմություն շահել, քանզի այստեղ մեր միտքն ենք ուսում և այնտեղ՝ պատիժ կրում: Սակայն ասում եմ, որ օգոս կա տրտմությունից ևս, քանզի, եթե մտածելով տատամսես, անվճռական կիմես մյուս անգամ այդպիսի բաներ մտաբերել: Եվ ոչ այնչափ միայն. այլև Աստուծն ևս կաղաշես հավանություն տալ ըստ այն (խորքի), թե «խոսովվանելիք դու նախ քո անօրինությունը, որպեսզի արդարանաս» (ԽԳ 26): Քանզի եթե ասելը (խոսովվանելը) արդարացնում է, որչափ ավելի՝ տատամսելը: Ոչ մի բան այնքան չի օգնում հանցավորին, որքան, եթե նա մշտապես աշքի առջև և մտքում իր մեղքն ունի և հաճախ դրոլում ու անձն է խոշտանգում. ոչ մի բան մեզ Աստուծն իւն այնպես շուտ չի հաշտեցնում. ոչ պահը, ոչ գետնատարած անկողինը, ոչ հսկումը և ոչ ել նման բաները. սրա ապացուցը (Ա.) Գիրքն է: «Սաացի, ասում է, կապտմամ մեղքերս և դու կրողեմես իմ բոլոր մեղքերի ամբարշտությունը: «Սաացի» ասում է. տեսնո՞ւ ես ինչ զորություն կա հրանում. թե «Սաա դու նախ քո անօրինությունը, որպեսզի արդարանաս» (ԽԳ 26): Միթե՞, եթե դու ինքը չես կամենում հիշեցնել (մեղքերիդ մասին), Աստված չգիտո՞ւ, միթե՞ (նա) չունի ամենագետ գիտություն, որով (մեր) բոլոր գործերը գրված ունի իբրև մի գիրք:

Այլ ասում են. գեր այս աշխարհի թշնամանքը չշահենք, որպեսզի ծաղր ու ծանակ չլինենք: Բայց այսպես խորիելով ոչ այստեղի թշնամանքը կարող ես խափանել և ոչ ել այնտեղի շահից օգտվել:

Վա՞յ ոչ միայն հրան, որ ամբարտանում է իր Արարշին, այլև հրան, որ հիմորտում և իրավունք է վերապահում իրեն (Տիրոչից) կատարվելիք բաների մասին պահանջել: Ես քեզ ստեղծեցի, և դու ինձանից իրավո՞ւնք ես պահանջում. քանզի, եթե չկամենայի, նոյնիսկ չեիր ել ինի: Միթե՞ կարող է կավը բրոտին ասել. ի՞նչ ես անում, ինչու չես գործում, և գործն էլ, թե՝ ձեռքեր չունե՞ն դու: Սա ասում է հրանց, որ բամբասում են Աստուծն երկայնամտությունը, թե՝ Աստուծու պետք էր այս անել կամ այս ինչը պետք չէր: Առավել ամբարշտագույն բան չկա, բան օրենքի (տակ) դնել դատավլութին և ամենագործ բնությունը մարդկային (սահմանափակ) մտքով բամբասել: Թեպեսու չկա այդպիսի օրինակ, քանի որ բրոտը ոչ թե կավի հյութի ստեղծիչն է, այլ, (իր) կարողության չափ, միայն ստեղծվածի (կերպավորողը: Իսկ Աստված ոչ միայն քո պատկերի արարիչն է, այլև այն հյութի, որից ստեղծվել ես: Կավը ոչ թե իր գորությունը, այլ բրոտից իր կերպարանը է միայն ստանում, և ամեննին չի հակառակում ու չի ընդդիմակայում (հրան). իսկ դու, որ ամբողջապես Աստուծով կաս, նատած հաշիվ ես պահանջում հրանից: Կավը դիմադար չի լինում, քանզի անբարբար է, իսկ դու դիմադար ես լինում ինչո՞ւ շնորհիվ. այն բանի, որ խոտանակ պարզեւող պարզեւությունը դեմ ես կովում: Ինչո՞ւ խորամուխ չես պատճառի մեջ, որպեսզի գերծ մնաս ընդդիմակայումից. քեզ արարել է որպես

խոսուն, իմաստուն ոչ թե (այն բանի համար, որպեսզի) առավելությամբդ դիմադրած լինեն Տիրոջը, այլ՝ որպեսզի նրան փառավորեն և նրանցից օրինակն ոչ թե քննեն և հարց ու փորձ անեն: Լեզու ևս առել փառատրության համար, միտք ես առել գոհության և հավատքի համար: Կավճ անհոսու է: քանզի եթե ճանաչեիր Արարչին, թերևս կիմանայիր, որ կավից ավելի անարգագոյն և անձայնական են:

Եվ տես, թե ինչ պատեհ ժամանակի է ասում, երբ արձակվելու եր (գերություննից), որպեսզի չկարծի, թե գործը չի կարող ավարտի հասցել, և այս պատճառով այնպիսի խոսքեր է մեջքերում: Եվ կարծում է, թե վշտերի մեջ է թողնված, և (Աստված) վշտերից չկարողացավ փրկել (իրեն). այդպիսի խորհուրդներով է խարվում: Եսկ նա, ահավասիկ, փրկության ժամին լուցնում է (նրանց), որպեսզի իմանան, որ (դեսպերի) վայրիվերու ընթացքը ((Աստուծոն) անքնին և անձառ իմաստության գործն եր, և պետք չէ քամբաւել ու մեղադիր լինել և կամ հետազոտել և քննության անել:

Եվ միայն այսափ չէ, ինչպես կավի և բրուտի միջև, Աստուծոն և քո միջև եղած տարբերությունը: Քանզի բրուտը կավի ստեղծողը չէ, այլ՝ միայն (նրա) կերպարանքի: Եվ նրանք խիստ մոտ են իրար. քանզի կավը և բրուտն արարած են, իսկ քո Արարիչը անարար է և դու' արարած:

* * *

«Ամբարիշտները խաղաղություն (ուրախություն) չունեն» (ԽԸ 21): Եվ հանրահայտ է, որ չունեն անվախան, անթառամ և ճշմարիտ ուրախություն, քանզի ինչպես Աստված անվախան է, այնպես էլ նրա (տված) ուրախությունը, որ անեղծ է, միշտ բխում է, միշտ ծաղկում և փթթում: Այնպիսի ուրախությունից անմասն են ամբարիշտները. շաաց թե՝ «ուրախ չեն», այլ թե՝ չունեն իսկական ուրախություն: Ինչպես օրինակ, երբ աղքատներից ոմանք ասում են, թե նրանք չեն կարող հարատանալ, քանզի չիք հնար: Քանի որ մարդիկ, որ մշտապես մեղքի մեջ են և, խղճի շարչը կումով, միշտ ահ ու սարսափի մեջ, հարատևորեն մահվան մահով են մտուում. և մանավանդ պետք չէ այն հոյնիսկ մահ անվանել, քանզի առավել դժնակ է, քան մահը: Մահը շարիքի լուծումն է, որ, կապված լինելով մեզ, հոգին ձերքագատում է մարմնի շղթաներից, որովհետև, երբ արձակում է նրան, նաև հոգսերն է դրանով փարառում: Անօրեն վարքը ևս աղեստների պատճառ է, քանզի երկարեցնում և առավել սաստկորեն բորբոքում է ցավերը, յուրաքանչյուր ոք իր կապանքների մեջ է թակարդվում, քանզի թակարդումը շար ընթացքից է լինում:

Կան և այլ, առանց մեղքի իսկ, վշտագին կյանքեր. կերակրվելու հոգսեր, հիվանդության տրտմություններ, վճառներ, անկումներ, զրպարտություններ, անենդություններ, ժամանակին և անժամանակ տիսրություններ և այսպիսի այլայլ (հոգսեր), իսկ երբ մեղքը ևս, իբրև դժնակ և անհամբույր գազան, կանգնում է սրանց կողքին, այլև չի լինում միսիթարություն: Տե՛ս, թե ինչպես էր շրջում կայեն՝ տատանվելով և երերալով: Եվ արդ անհանձարներին է հարկ ճառել, անհույսներին, որ թեպես մարդիկ են, սակայն քարերից ավելի անզգա են, որ միտք ունեն, քայլ չեն վայելում միտքը: Քանզի շարիքի խորխորատն են միշտ մղում և գցում իրենք իրենց անձերը, և, մոլորության մեջ գլորված ընկած, նրանց թվում է, թե կանգուն են: Այդպիսիների մասին ասվում է. «Ուրախություն չունեն ամբարիշտնե-

րը»: Եվ արդարի չունեն, քանզի ցավով և տառապանքով է նրանց կյանքը, թե՛ մեկուսի լինելիս և թե՛ որիշելորի պատմվելը տեսնելիս. այլոց պատժի մեջ իրենց անձերին սպառնացող աղեստ են տեսնում: Խնչակն, օրինակ, առարքինությանը հետամուս եղողները, երբ ինչ որ բարի (լոր) են լսում, որպահանում են. իսկ նրանք Ս. Գիրքը չեն կարող ունենորել, քանզի անկար են իրենց պատուհափ մասին լսել. թեպես Ս. Գիրքը հայտնապես չի պատժում չարը, սակայն, երբ նա սպառնում է հանցավորներին, և նրանք լսում են այս մասին, իրենց միտք ու մարմինն են ուսում. և թեպես հական հանվանեն չի պատժում, բայց և, ընդհանուրին սպառնալով, ձաղում նրանց: Իսկ հանցավորը երբ լսում է սրա մասին, ի մտի առնելով վերքը, գնում է: Քանզի խոցված միտք (կորցնում է իր հանցավոր) վճռականությունը և դա տեսում է մի որոշ ժամանակ, ու խիշճը հանցանքի հաշիվն է պահանջում, երբ անաշոռությամբ է խորհում: Իսկ երբ մեղավորին եկեղեցի և թատրոն, հարսանիք և կամ զվարճավայր տանենք, և չմիտթարփի, ինչպես վարդենք: Խնչակն, օրինակ, շարախտավոր հիմանեներին տիհան է, երբ նրանց տանում ենք աղբյուրների, գետերի կամ ճահիճների մոտ, (որով) առավել ոժգին է այրվում նրանց որովայնը, քանզի այդ ախտը իրենց որովայնում է: Իսկ եթե մահիվան մասին նրանց ասես, թե երբ են մեռնելու, այդ ևս առավել մեծ աղետների և մեծ չարիքի (տեղիք կտա): Երբ հարսանիքից դուրս գտան, տաճանքի պիտի մատնեն և պատմվելու հրաման պիտի (տրվի նրանց): Իսկ արդ. այնուղեք չե՞ն լինելու արդյոք առավել մեծ ցավեր, սահմոկելի արհավիրքներ և սարսափներ:

«Ամբարիշտներն որպահություն չունեն» ասում է Տերը: Երբ Աստված է ասում, այլև թերահավատ մի եղիր. վճուեց, թե «չունեն որպահություն». սրա մեջ, եղածից ավելի, որիշ բան մի տես: Երբ տեսնես ջերմով բռնված ոմանց, որոնց առջև դրված են պես-պես ըմպելիքներով կամ զովացուցիչ օշարակով լի գավաթներ և բաժակներ, պես-պես կերակուրներով և համադաշտ խորտիկներով ծանրաբեռն սեղաններ, միթե՞ լավ կհամարես ախտացյալ (հիմանդի) վիճակը: Թեպետև ճաշակնեն խորտիկներ, այնժամ Է՛լ ավելի կտանչվեն, քանզի կերակուրը սաստկացնում է ջերմության տապը: Նույնպես և դու. երբ կտսնես մի մեղավորի, որ մեծարվում է հացկատակների կողմից, փառաբանվում իրեն հաճոյացող և շողոքորթող ապասավորներից: Երբեք երանի մի տուր բազմախորտիկ սեղաններ վայելողներին, տեսակ-տեսակ յուղերով օծվածներին, պես-պես զարդերով պաճուծվածներին, այլ սգա, լաց և հոգոց համար, քանզի դրանք ոչ այլ ինչ են, բայց եթե մեղքերով բորբոքված հրո կերակուր: Քանզի այն Է՛լ ավելի է մեծացնում ցավը և հոգիներին պատճառում ծանրություն ու տաղտուկ, քանի որ հենց դրանով է հարստությունը դառնում խաճ: Եվ, եթե կամենում ես, սրա կողքով հարևանցի չանցնենք: Երբ տեսնես քաղաքների գլխավորներին՝ գեղեցկամարմին, հաղթանակամ, խոր ծերության մեջ՝ զվարճացող, որդիներով, թռուներով՝ բերկող, որպահալից խրախնանքի մեջ, սուանց տրտության՝ անհոգ, երջանկության մեջ՝ երանելի, այնժամ նրանց Է՛լ ավելի լալու և արտասրահի արժանի համարիր. որովհետև (նրանց) հոգիները ներքին մեղքերի հրով են բորբոքվում: Քանզի մեղքերը սպիր են (անհոգ) բարեկեցության մեջ աճել և ցավերով ու վշտերով՝ նվազել: Իսկ երբ մեկը մեղավոր է և անհոգ ու հեշտական կյանքի մեջ՝ այն համելում է (մեղքի) ցավերը: Եվ շատերին գիտես, որ անաստաների հման անխոս են և ալսափի կյանքի են ձգում և ասում, թե՝ «կամենում եմ հոյն այդ կյանքով ապրել և զուն ախ-

տով ախտանիլ»: Եվ սա առավել տաժանելի է, որովհետև (իրենց) ցավերն իսկ չեն գգում:

[ՎԱՍՆ ԻՒՂՈՅՆ ՍՈՒՐԲ ԱԽԾՈՒԹԵԱՆ]

Ինչպես հայտնի է, Ելից գիրքը պարունակում է թանկագին մի վկայություն օծման սրբազն յուղի պատրաստման մասին (Ելր 1, 22—26): Ներկայացվող բնագիրը Աստծո կողմից Մովսես Նախամարգարեին տրված յուղի պատրաստման դեղատումսի խորհրդական մեկնաբանությունն է: Հեղինակը սրբազն յուղի բաղադրատարրերը նմանեցնում է այս կամ այն նախահոր գլխավոր ստարինությամբ. զմուսը՝ Արեյի արյան հեղումին կամ զոհաբերվելուն, կինամոնը՝ Ենուքի հոգեւոր արթնությանն ու գգոնությանը, խունկը՝ Նոյի արդարությամբ, խիրիկը (հիրիկը)¹ Արքահամի հավատքին: Ուրիշ խոսքով, բաղադրատարրերից յուրաքանչյուրը հիշատակված ստարինությունների արտահայտությունն է, որ օծման ժամանակ և նրանց հետո դառնում է նյութականով դրսւորվող հոգեւոր իրողություն: Օծության հինկուականացնին այս նշանակությունը Նոր Կտակարանում, պահպանելով իր նախնական իմաստը լիալրվում է նորորակ բովանդակությամբ՝ շնորհով, որի բացարձակ դրսւորումը Քրիստո-Օծյալն է:

Միավորս հրատարակվում է ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի № 1443 (թերթ 133թ—134թ) ձեռագրի: Խորագիր չունի: Ուղղագրությունը բերված է միօրինակության (օ=ա, և=ել):

Հ. Հ. ՔՅՈՍԵՅՅԱՆ

«Առ քեզ խունկս անուշուն ծաղիկ ընտիր զմոնեաց ԵԾ (500) սկեղ, եւ կինամովն ԲԾ եւ Ծ (250) եւ խունկս եղեգնեա անոյշ ԲԾ եւ Ծ (250), եւ խիրիկ ԵԾ (500), ըստ սրբութեան եւ իուս ի ձիթենեաց հիմանաւ միով: Եւ արացես լիոյ յածումն սրբութեանցն եւ դեկեալ ըստ արուեստի եւղագործացն: Եւ յածումն սրբութեանց եղիցի»¹: Եւ մի այլ ումեք ի Ե (5) հիւրոյ գոյացեալ իուս ըստ կարգի հարցն առաջին արդարութեան: Արեյ՝ ծաղիկ զմոնցնեաց ծաղկաձեւ արին նորա հեղաւ: Կինամոն անուշ արինակ ունի արթնական վարուցն Ենուքա: Զկինամոն ասեն, թէ որ ի քոն թանձրացեալ են իբրեւ զարթնոյ տայ խաւել եւ հարցման առնել պատասխանի որպէս Ենուք ի ժամանակի մեղաց թարութեան թանձրութեան բնութեան մերոյ, այլև եռանդան ցրտացոցից է, զի եռանդնու հնոց, այսինքն Է՝ զրանարկուին, որ արկանէ ի հոգի եւ ի մարմին. զայս ողջախոհն Ենուք բացարեաց զիտրինորդս բանսարկուին ի մտաց եւ զցանկութիւն հեշտափրութեան, ի մարմնոյն նմանեաց զուարթնոց երկնից, որք ոչ ունին զեռանդն արեան եւ մարմնոյ: Խունգն եղեգնեայ՝ Նոյի անուշակ արդարութեան նշանակ, որ հոտուեալ Տէր Աստուած վկայեաց նմա, ասէ. «Զքեզ տեսի արդար յազգի լայդմիկ»²: Խիրիկ ԵԾ (500) սկեղ զհաւատոցն Արքահամու նշանակէ, ի Ե (5)³ շարժմանց գգայութեանց: Խոկ իուս ձիթենեաց՝ արինակ Մովսիսի արինադրութեանցն, վասն զի զճանանչ* լուսոյ լինքեան բերէ ձեթն լուծիչ

¹ Ելր 1, 22—26:

² ԾԱՆԴ. Է 1:

* ձեռագործ ժամանակ:

գիշերոյ, նոյնակա և արինադրութիւն նորս ի խաւարէ կոսպաշտութեմէ ի լոյս էած զորդիսն Խորայէլի ըստ այնմ՝ ծրագ է պատուիրանն և լոյս եւ կեանք, այլ է ճրագն ճաճանշատր** կարապետն, որ խղովն ածոյթեան եկն, քանզի ի Մովսիս սկսա, որով ածաւ Ահարոնվն և զորդիսն նորս ի քահանայութիւն և ի թագաւորութիւն եկն լուսատու ձիթովն մինչեւ ի Յովկի հանձնեան քի որպէս խառնուածն ըստ իրաքանչիր անուանցն յանուն եղոյն կատարի, նոյնակա և ամենայն ածեալքն ի Մովսիս և յԱհարոնվն յարինակ անշառափակն Յովկի հանձնեան կատարեցաւ: Ի հինան այսափ իսկ ի նորս գլխաւոր՝ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս. որպէս արեամբն Արեկի ծաղկաձեւ և արթնական վարուքն Ենովրայ եւ, ըստ Նոյի, խոնկ անուշ արդարութեան, որով լցան տիեզերքը: Խիրիկ ըստ Աքրանամու առ ի հաւատալն ի Տէր, յորում մենքեան հաւատովք արդարանամք, ըստ այն թէ. «Եւ մեր ի Քրիստոս արդարանամբ հաւատովք»³: Եսկ իդն ածոյթեան լուսատու ճրագ արինացն ըստ մարգարեւորթեան և քահանայութեան և թագաւորութեան Մովսիսի և Ահարոնվի և Յովկի հանձնու Մկրտչի արինակ, զի սորա են ածեալ: Եւ զայս ի յիմքեանս գլխաւորեաց Քրիստոս, որ թարքմանի Օծեալ և Մարգարէ, ըստ այնմ թէ՝ «Մարգարէ յարուցէ ձեզ Տէր Աստուած ձեր»⁴, և Թագաւոր, ըստ այնմ թէ՝ «Աստուած Թագաւոր մեր յառաջ քան զափիտեան», և Քահանայ, ըստ այնմ թէ՝ «Քրիստոս եկեալ Քահանայ[ա]պէտ յափիտեանց»⁵, և Նմա փառք յափիտեանս. ամէն:

^{**} ձեռագրում՝ ճաճանշատր:

³ Գևառ. Բ 16:

⁴ Գործք Գ 22:

⁵ Սրեմ. Ժ 10:

⁶ Եքր. Թ 11:

ԵՂԻԾԵ

ԽՐԱՏ ՄԵՆԱԿՅԱՑՆԵՐԻՆ*

Մարդիկ, որ մարմնի մեջ [ապրում] են և իրենց անձը կամովին հանձնում են աստվածապաշտության, տակալին պատաճի՝ խոկում և կրթվում են վշտամբերության մեջ, հեռանում են հայրենի քնակավարից և ապրում անշեն անապատում. փախչում են ոչ թե նախանձու ու չարամիտ աղքատների ամբոխի պէս, այլ՝ որովհետև աշխարհը տեսնում են չարիքի մեջ. խոյս են տպիս խորչեր ու անապատ վայրեր:

Հարավային կողմում հաճախ տեսնում ենք այրերի բազմություն՝ առանց կանանց միաբանության, որոնք իրենց համակամությամբ և լեզվով մեկտեղվել են մի վայրում, ժողովվել ինչպէս իրենց հայրենի գալաքում, քնակվում են երկու-երկու կամ երեք-երեք և կամ սրանցից ավելի: Եվ շինում են իրենց խցերը իրարից զատված. բարակ պատերը՝ ցրտից և ճրա վրա ձեղունը՝ արեգակից պաշտպանվելու համար, հատակը՝ անպանուճ՝ խոտեղեն անկողիններով ծածկված: Եվ քանի որ մեր քնությունը թաքնվող

* Աշխարհաբար թարգմանություն՝ ըստ Բետկապ հրատարակության. «Աքր. հօրն մեր Եղիշեի վարդապետի մատենագրութիւնը», Վենետիկ, 1859, էջ 159—165:

է, և սիրում է (իր) մերկությունը ծածկել, այսու հրանք օգտագործում են անպանույն և խիստ աղքատիկ հանդերձներ. ամռանը՝ անջևն և ձմռանը՝ երկարաժամ կամ կրում լոկ մի վերարկու: Մանավանդ խմբովին անդադար պաշտամունքի պահին՝ խնդրությամբ հոգևոր երգ են մատուցանում բոլորի Հորը: Կանգնած մեկ մեկու առջև, իրենց աչքերը հակած ներքև, ոտքի ծայրերին նայելով՝ կարծես բոլորը մի կետի են սկսում իրենց հայացքը. աչ ձեռքը ծնուտին դրած և ձախը՝ կրծքին: Այսպես եմ կարծում ուսած լիճելով անապատաքանակ հայութից. մարմնի մեջ պատվականագույն բամերը երկուս են՝ կենդանականն ու խոհականը, որոնք երկուստեր մեկ մեկու են սպասավորում. կենդանականին զայրույշն է հակառակ, իսկ խոհականին՝ արտաքերական բանը: Սրդ. ձախով, երասանակը ձեռքն առած, զայրույշն է սանձահարում և աչ ձեռքը՝ աչ ծնուտին՝ խոհականին է սպասավորում հսկելով խոսքի արտաքերման դուռը, որպեսզի այլախությունը չխառնվի ուղիղ փառատրությանը: Եվ այսպիսով, երկուստեր նահանջում են բոլոր զգայությունները. աչքերը մնում են ոտիղ՝ տեսության մեջ, ականջները՝ զգացան՝ լսողության, միտքը՝ սուրբ իմաստության և մնացյալն՝ ըստ կարգի:

Եվ այսպես հաստատված ու օրինակարգված, բոլոր վեցթևան սերով բեների նման խմբված, անդադար ձայն են հնչեցնում վերառաքելով, և եռաստիճան օրինություն են հյուսում ի նշան Արարչի հետ միաբանության: Սմբող օրը անցկացնում են երգերի քաղցրությամբ, հագեճնալով և զմայլվելով երկնային կերակորներով՝ (հոգևոր) լուսով հասնում են երեկոյան ժամին: Եվ քանի որ մարմին ունեն ըստ մեր զգայական բնության, ուսում են, որպեսզի չքաղցեն, և ըմպում, որպեսզի չծարավեն:

Սրդ. դու, երբ լսես հրանց ուտելու մասին, մեր (ուտելու) նման մի հասկացիր. քանզի հրանց հացը անպանույն է և քանչարը՝ վայրենի, որ աղով են հնամենում, ու ջուրը ականակիտ, որ ամսերի բույրը հավաքում է ջրհորում: Սակայն այս նոյնիսկ երբեք տվեշչան պահին չեն ընդունում դարմանելով մարմնի պետքերը. այլ, միասնաբար պահելով բովանդակ օրը, տեղի են տալիս արևամուտին, ձգում, երկարում են երեկոն, մինչև աստղերն իրենց կայաններում պայծառանան, կարծես գոհանում են, միաբերան ասելով. «խավարային ժամին խավարային կերակորը տանք խավարային մարմիններիս»:

Եվ այս ասելով, քարձը ձայնով փառաբանում են Սուրբ Երրորդությանը, խնդախից ուրախությամբ հավաքվում լուրաքանչչուրն իր տեղում: Եվ, ինչպես սասացինք, ուսում են հաց և զոպա (ծորթին) և ըմպում սառնորակ ջուր: Քանի որ կան հրանց մեջ փափկակյաց ծերունիներ, (հրանց) մատուցում են տաք ջուր, որը և քարեխառն են անվանում, իսկ գինի և կամ այլ զանազան բաներ չկան հրանց սուրբ միավարաններում:

Եվ անպանույն ընթրիքը ալխարտելով, ասում են. «փառք Քեզ Տեր, փառք Քեզ Թագավոր մեր, որ ուրախության կերակոր տվիր, լցու մեզ Սուրբ Հոգով, որպեսզի Քեզ հան լինենք և չամաշենք, քանզի Դու հատուցում ես լուրաքանչչուրին ըստ իր գործերի»: Եվ այսպես. խաչակնքելով իրենց՝ տըրփում են թեթև քնի, որպեսզի չմարսված կերակորով մարմնի գեղեցիկ շինվածքը չավերվի: Նաև, երբ բոլորը քնում են և հոգևոր երազ են տեսնում, հետո երազը մեկնում են, ինչպես սուրբ մարգարեների խոսքերը:

Եվ հետո, բոլորը արթնանալով, շրջան են կազմում. ոչ հակառակբար և ընդդիմակա, (այլ) քաղցր հավանությամբ ու հեզ հանդարտությամբ: Խըմբերի առաջնորդները, հնչեցնելով, ձայն են արձակում հոգևոր երգը քաղց-

բանուշ նվազի փոխարեկելով, իսկ կրտսերագույնները, ձայներին ունկնդիր, խառնվում են յորաքանչյուր բարբառումին՝ հարմարելով և կազմելով հնչման խառնվում են յորաքանչյուր բարբառումին՝ հարմարելով և կազմելով հնչման խառնվում են յորաքանչյուր բարբառումին՝ հարմարելով և բովանդակ բազմության ձայնը ներդաշնակություն։ Իբրև թե մի բերանից է բովանդակ բազմության ձայնը ներդաշնակություն։ Իբրև թե մի բերանից է բովանդակ բազմության ձայնը ներդաշնակություն։ Եվ այսպես երկարելով ձայնավոր պաշտամունքը, բոլոր ծնրադրում են, աղոթում լուսյամբ, և աղոթքի առաջնորդի նշանով, կանգնելով, բոլորը փառք են մաստոցում։

Եվ կատարելով տվյալյան պաշտամունքը, նախընտրելի են համարում կեսպիշերին վեր կենալ ու մինչև առավոտ աղոթել և ընթերցել Սուրբ Գրքը, իսկ ովքեր վարդապետելու շնորհ ունեն, (Սուրբ Գիրքը) են մեկնում՝ ի միխթարություն լսողների։ Պատմում են աշխարհի՝ ոչնչից ստեղծված լիւսկու մասին և կարգելով մի առ մի, Սուրբ Գրոց վկայությամբ, բարի խրատ-ներ են ուղղում ծողովականների լսելիքին։ Եվ այսպես ուսուցանելուց հետո ունկնդիրները մոռանում են նույնիսկ ամենայն աշխարհական բաները և բոլորովին չեն հիշում կերպարուի և ըմբեկիք պետքը։ Այսպես ուրախա-նալով Աստծո սիրո մեջ, նույնիսկ իրենց շնամարելով մարմնի մեջ, այլ երկնքի, և հեշտությամբ անցկացնում են գիշերի ամբողջ երկարությունը մին-չև առավոտ, բանզի սուլացել են երկրից և հագել երկինքը։ Մահն ամաչում է հրանց դոների մոտ և դժոխքը դառնանում հրանց իշնելու պահին։ Նրանց կյանքը աշխարհի աղոթքի դոներն են և հրանց ուսկրները բոլոր պապա-նողների գանձն են։ Նրանց ձայնը բոլոր ծովերի հորդորիչն է, և հրանց գործը՝ բոլոր կամեցողների վարդապետությունը. դասակից են հրեշտուկնե-րին և օթևաններն են Սուրբ Երրորդության։

Արդ. այս բոլորը իմանալով, եղբայրներ, մեզ պարն է փութալ և, մեր անձերի մեջ դեմքով սրբության նույն նախանձը, նմանվել աշխարհից զատ-լած բազմագունէ միայնացյալներին և դեսի երկրավորների ախտից ազատ վերին քաղաքամայրը դիմողներին, բանզի (երկրավոր պատերը) ընկերա-կից են մեր ընությանը, որը զորացնում է մեր տկարությունը։ Միայն կամե-ցիր, զատիր հավատով, հուսա, սիրի և կարող ես ճաշակել այնպիսի հա-հատակությունը։ Քանզի ոչինչ է ժամանակավոր չարչարանքը այն կյանքի համեմատ, որ պատրաստված է այնպիսի ճգնողների համար։

Հոյժ երկյուղում եմ մեր ծովությունից, գրեթե բոլորին տեսնում եմ երկ-րավոր ստացվածքի մեջ թավալված։ Իսկ արդ. իմ ընությունս արդյո՞ք կը շ-տամբելով չի հանդիմանում ինձ։ Թե մերկ ստեղծվեցի, և թե դրախտում զե-տեղվեցի մերկ, թե՝ մերկ դորս եկա այնտեղից, և թե՝ մերկ ծնվեցի, և թե՝ այնտեղից մերկանդամ հոյն եմ մտնելու։ Արդ. եթե պատեղից ոչինչ չենք կարող տանել, ինչո՞ւ ենք այս աշխարհի (խավարում) թարթափում։ Մերկա-ցի՞ր, սուկա (չար խորհուրդներից), ո՞վ միայնակացդ, թշնամուն ընդունող (պատուներով ծանրաբեռն) ամրաթալ անտառ մի եռիր. գուցե մոտիկ մի վայրում դարան մտած՝ քո վրա արշավի կողոպտելու և քեզնից երկրավոր գանձը իսկելու։ Բավական համարիր քեզ տերունական կանոնը. երկրավոր-ներից և ոչ ոք չի կարող երկու տերերի ծառայել, որ, առանց միջնորդի և մեկնության, հայտնագույնս ցույց է տալիս. «Զեք կարող դուք, ասում ե, հա-ճ լինել Աստծո և Մամոնայի» (Մատթ. Զ 24, Ղոկ. ԺԶ 13):

Եվ արդ. ես մեր աշխարհում տեսնում եմ, որ այդպիսի աղետից և ոչ ոք գերծ չէ։ Հակասակ իմաստով ենք մեկնաբանում գեղեցիկ գովածքները. ոխ-տափորության պատճառով հեռացանք սուրբ ծնողներից և ստեղծեցինք բա-զում օտարութիւն հայրեր. որը պատվի էր արժանի, անարգեցինք և, որին ի-րավունք չունեինք մեծարելու, (հրանով)՝ մեր աղետների ախտով խապա-

Ղափկեցինք: Ազատվեցինք արքունի հարկերից, որոնք առանց մերի հարկադրանքի էին և մտանք հարկադրի ստացվածքի մեջ, որ լի է անառականությամբ: Հբարձրացանք սուրբ հարսանյաց առաջատար, և արարեցինք մեզ (համար) բարձրագահ մահինեներ առավել քան աշխարհինը: Փափկանում ենք հարմար անկողինեներում և, բովանդակ գիշերը թափառելով, կոծում է մեր միտքը աղտեղի խորհուրդների մեջ:

ծուս է մեր միտքը աղտօղի բարուութանք ուզ։ Մեր ոսքի կոչիկները հանդիմանում են մեզ, թե մեր անսապարհները սուրբ չեն։ Մեր հանդերձները աղաղակոս են մեր գործերի մասին, թե մեր ենք երկնավոր զգաւուներից։ Մեր երիվարները ցուց են տալիս մեզ, թե չենք հափշտակվելու օրով Տիրոջն ընտառաշ։ Մեր ապարանքի շինվածքներու հայտնում են, թե մենք չունենք անձեռագործ տաճար երկնավին, որ մտնելու են երկրավոր ախտից բոլոր սուկացողները։ Մեր անդաստանների կալվածքները կշտամբում են մեզ, թե բաժին չունենք երկնավորների վիճակում։

Անարդ և անհագ եղանք կերպությունների մեջ և խորհրդական ու ըստ քերք պլոտորող գինին խանցինք առանց չափի: Խոր քնի մեջ ենք նշունչ բոլորս, և ճշմարտությունը մեզ երազ է թվում: Փակ են մեր մորի աշքերը տեսական խորհրդական համար և անհագործ պազշութված՝ աշխարհային կյանքը դիտելու համար: Խցել ենք մեր լսելիները սուրբ ընթերցումների առջև և ունկնդիր ենք մեր խաչների բառաշխանը: Սուրբ Հոգու անուշ բուր-մունքը մեզ չի հասնում, որովհետև ախտայից աշխարհի յուր սիրեցինք: Մեր ոգիների քիմքերը չնաշակեցին երկնային կերպությը, որովհետև մեր անձը պարարտեցինք զանազան խորտիկներով: Մեր դեմքի գոյնը մութ է, որովհետև մեր երեսները զգվարթացան սրբության խորհրդականությունը: Մեր մարմնի ամրամմերը ցալվայից են, որովհետև մեր մարմիններից առաջ մեր ողիները ախտավորեցինք: Ծեփված գերեզմանների համանեցինք մեր ան-ծերով (հմտն. Մատթ. Իգ 27), որովհետև Սուրբ Հոգու շնորհից ունայն ենք:

Այս պատճառով բոլոր շարիթները պատուհանեցին մազ. (Կոկազն), մեր կենդանության՝ տեսանք մեր անձերի դիակնացումը: Մեր քաջ Զահա- տակներն ընկած պատերազմում և սուրբ քահանաները մեր խոյլսողվեցին անօրենների ձեռքով, գեղեցիկ երիտասարդները զոհվեցին սպանվելով և բազում կոյսեր գերեվարվեցին, փափկասոն կանայք այրիության տառա- պանքով տառապեցին, և բազում որդեր համաստես կոծում են: Ազատ եկե- ղեցին հերանուսների ծառապոյթյան տակ ընկալ և հրա սուրբ քահանաները գահահարվում, շարչարվում են անօրեն հարկահանների կողմից: Վերացել է աշխարհի ողորմությունը և յորաքանչյորի մորթից հեռացել է գորթը: Երկին- քը վերևից բարկացել է, և երկիրը ներքնից տառապատմով երերում է:


քը վերսր բարդացաւ և առաջ պատճենացաւ մեր դիակների գերեզմանները եղան (համ). Սակ. Մեր շինվածքները մեր դիակների գերեզմանները եղան (համ). Սակ. ԽԸ 12) և մեր ձեռքերի փաստակները տապալվեցին մեր վրա: Պայտեց ու պատուեց գտնին թանձրությունը և բազում մարդիկ գահավիժեցին: Չսպասեց որդին հորը և ոչ՝ բույզը եղրուն ակնեկալց, և ոչ էլ կանանց ձայնը լացից՝ նորածինների, որովհետև սովոր հուսաբեկց հրանց բերանը: Հզրեները հանեկարծակի խորտակվեցին ինչպես Լիբանանի բարձրավալց մայրիները, բարկության հնձան եղան և ճնշեցին բոլորը որպես ողկուզը ուստերի տակ, գինու փոխարեն անմտների արյունը ցայտեց մեր հանդերձների վրա: Ավելի քան լոյնի դառնացավ կերպարը քիմքին մեր, և քացախի վերածվեց սուրբ ըմբեկիքը մեր: Գանահարվողների հետ գանահարվում էինք հոգով և մարմնով մեր, և մեղաղների հետ մահը ճաշակեցինք: Արդ. միտե՛ մեր ծովորժյան պատճառով չեն աշխարհի մեջ մոտք գործել չարչարանքները:

Օ՞ն, որեւմն, հետացիր աշխարհից, որ վաղ ես արթնացել, բաժանվել սրա աղեստերից, թոթափելով ձերբազատվիր ախտալից աշխարհիս կեղև-ներից: Ըմբամարտիկի նման մերկացիր, օծվիր Քրիստոսի յուղով, որպեսզի ախտանի ձեռքերը չկառչեն քեզնից: Իսկ արդ. եթե հեթանոսները, որոնք փարեցին տեսական իմաստությանը, ոչ միայն ստացվածքներից, այլև՝ օրինավոր կերակորներից հրաժարվեցին, տակավ և անպաճույն ըմպելիներով բավարարեցին իրենց անձը և, իրենց կանքի ավարտին, առաքինի մահով վախճանվեցին, ապա որչափ ավելի մեզ հարկ է նմանվող լինել Քրիստոսի սիրելիներին, որոնք իրենց անձը հրեշտակարոն դարձրին՝ խառնելով իրենց վերնց գնդերին:

Արդ. գանք նաև մենք, ո՞վ միայնակյացներ, ըստ օրինի թշնամյաց, մըտ-անք մեր կարգածքը իրեւ օտար երկիր, թշնամու արմատախիլ ծառատուն-կերը կոտորենք, իրեւ գերեվարված (իր) տանք մեր ինչքերը ձեղյալներին՝ ոչ թե ազգականներին ատելու պատճառով, այլ՝ որպեսզի սիրենք աղքատ-ներին, որոնք Քրիստոսի զորականներն ու ճշմարիտ բարեկասուներն են: Իսկ եթե այստեղ հյութին կապվես, ինքո թեզ կմատնես անդարձ գերության, որ (այլև) չիք փրկագին: Փոլա, փոլա, աճապարիր, եղբա՛յր, փրկվել այդ-ախիս անողորմ գեհեննից, որպեսզի կարողանաս հասնել ամրապինտ քաղաքը, որ (այլև) քո մեջ չի լինի կասկած կամ երկյուր՝ խվելու կամ գերեվար-վերու:

Եվ եթե հայրերի գեղեցիկ վարդապետության հետ ընթանաս, որ վերե-վում գծագրեցի թեզ սուրբ միայնակյացների վարդով, այնժամ կկարողա-նաս, առանց շարշարանաց ախտի, մտքի աչքը բարձրացնել, նայել և տեսնել բոլոր երկինքներից ել ավելի վերագույնը: Երանի կտաս վշտալից կյանքի աշխարհից քաջաբար ճողովրած անձիդ, և կյատնվես միայնակյացների երամին և սուրբ արդարների գնդին, առաքյալների կարգածում, մարգարե-ների բույլում, հահատակների կաճառում, հրեշտակների բանակում և ան-դրանիկների ժողովում, երկնքի մեծ քաղաքում, աբրահամյան սեղանակից-ների մեջ, որոնք կարիք չունեն երկրային կերակորների և ըմպելիների: Այնուհետև դու կիմես մարգարե, որ չի խմկարկվում մարմնական աշխար-հում, այլ՝ թևածելով թոշում անմարմին աշխարհում և, հանգստանալով, դա-դարում անապական որախության մեջ:





**ՄՈՎՍԵՍ ԽԱՐԵՆԱՑՈՒ ՊԵՏՄԱՒԹՅԱՆ
1500-ԱՄՅԱԿԻ ԱԹԹԻՎ**

Ա. Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՄՈՎԱՆԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄԱԳՐՅԻ ԽՈՐԱԳԻՐԸ
ԵՎ ԱՎԱՐՏՄԱՆ ԹՎԱԿԱՆԸ

«Ամենայն ոք, որ զիրս աստուածային ի ձեռ առնցուն, նախկինակագրութիւն նորս ընթեռնու և նովա հասու լինին, եթէ մարդարէական իցէ արդեալը, և եթէ առաքելական, և կամ թէ ի ներշշական արհեստից ի բանիքուն արանց ասացեալ: Զի յառաջարանութիւն գրոցն է պատկեր նորին, զոր արինակ մարդն ի պատկերէն իրուն անաչի, այնպէս և գիր ի նախերգանէն... Քանզի նախաղաւեալ բանն երիս եղանակս բացայատէ, նախ՝ եթէ յորուն ժամանակի գրեցաւ, և կամ թէ յունմէ՞ հարկաւորեցաւ, և կամ թէ մի՞նչ պէտու գրեցաւ»¹:

«Նախկի մակագրութեան», «յառաջանութեան» կամ «նախերգան» մեջ էր մտնում նաև երկի խորագիրը, որն ընդարձակ շարադրություն ուներ, որը հցվում էին երկի բնույթը, հեղինակի, պատվիրատուի անոնք, գրվում էր բնագրի համեմատությամք՝ մանրագրով և գծերով կամ կետերով առանձ-նացվում: Այս բոլորն հաճախ արվում էր կարմրանեղով:

¹ Հայերևն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխատությամբ Ա. Մաքնոսյանի, Երևան, 1988, էջ 169:

պես քաղվածք, թերված է Մովսես Խորենացու Պատմութեան մեջ²⁾: «Եղիշեի վարդապետի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Դարձի երից Սամիկոնի հայցեավ»: «Հայոց պատմութիւն երիս հատածն, ասացեալ Մովսեսի Խորենացոյ ի խնդրոյ Սահակայ Բագրատունոյ»^{2)*}

Թովմա Արծրունին շարադրելով հինգերորդ դարի ոյժաւագամ թշքական պարսիկների դեմ Վահան Մամիկոնյանի պատերազմի պատմությանը, հիշելով Սահմակ Բագրատունուն, գրու է. «Սահմակ այս այն Սայունը, որոյ հրամանաւ գրեաց Մեծ վարդապետն Մովսէս տիեզերահուչակավ քերթողն զգիրս Պատմութեան Հայոց Մեծաց՝ հրաշազան հորինուածքով, սկսեալ Աղամայ մինչև կայսր Զենոն, որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի Զորբորդ դրուացի խոստարանեալ Պատմութեանն Մովսէսի Խորենացու Վերադարձաւ ի վերայ երեցունց դրուագեալ հատուածին»³: Արիստակես Լաստիվերցին իր երկը «Պատմութին Հայոց Մեծաց» է կոչել Խորենացու հետևողությամբ, պատմության համազգային, համահայկական թագավորն ընդգծելու համար⁴:

Այս արտաքին վկայություններից բացի, ունենք նաև ներքին վկայություններ հետոց Պատմահոր պատմագրքի բնագրում և ցանկերում՝ հանվանել։ Սուծառանում կամ ընծայականում՝ ըստ Էության։

Խորենացու Պատմության գրքերն սկզբում և ավարտին եւ այսպէս. «Գիրը պատօնի. Ծննդարանորթին Հայոց Մեծաց»⁵.

Գալաթիսցան Դիլիք Օւաչչի, Տիգրան Արշակունյացը՝ պատմութեան մերոցն նախնեաց⁷. Գիոր Եղիսրոյ, Բան Միջակ պատմութեան մերոցն նախնեաց⁷.

Նոյն պատկերն ունեն յուրաքանչյուր գրքից առաջ դրված ցանկերը:
Հետինակային են այն ցանկերը, թե հետագայում արված, միևնույն է, եր-

² Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, աշխատությամբ Մ. Աբեղյան և Ս. Հա-ռությունյան, Տիֆլիս, 1913, էջ 120:

^{2*} Եպարքային գումարան, ձ. № 10000, էջ 2ա:

³ Թարմ Անդրուսիս, մ. թ. 1985: էջ 85:

³ Խովան Օքրիսի, Կառավարի մասն օքրիսաց, Երևան, 1927, էջ 12.

Պատահեցած ի մին ձեռագրէ գրելոյ ի թվին Հայոց, ուկ (1214) զայ Պատմութիւն, ի վայրէ անձին խրոյ Յովկաննեւ Յարութիւննեան Երզնկեա:

Հին ձեռագիրն զտու յալրին Զատոների պահարանի կայից վաճիցն, ի 1827 ամի, ի Հունվար:

1840, ի վաճառ Սրբոյ Նշանի»:

⁵ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 5:

⁶ U.S. 19 88:

⁷ ԱՐԵՆ, էջ 101:

⁸ Այսուհետեւ 250:

⁹ Ասով, էջ 257:

կու դեպքում էլ նրանք արտածված են բնագրից և համապատասխան են նրան: Ավելին, երրորդ հատվածի ցանկի սկզբում գրված է.

«Աւարտումն Պատմոթեան Հայոց Մեծաց»՝ «Աւարտաբանութիւն մերց հայրենեաց»-ի փոխարեն¹¹, իսկ վերջում՝ դարձյալ «Աւարտեցան ցանկը երրորդ գրոց յանկ ելանելոյ Պատմոթեան Հայոց Մեծաց»¹² (Վերշին («Մեծաց») բառը բնագրի վերջում կա, ցանկից դուրս է մնացել պատահականորեն, ուստի մուծում ենք բնագրից):

Մովսես Խորենացու Պատմոթեան երեք գրքերի վերևագրերում և պարտագրերում, ինչպես նաև նրանց ցանկերում պահպանել է պատմագրի հեղինակային ճշգրիտ անվանումը կամ խորագիրը՝ Պատմոթիւն Հայոց Մեծաց», մասնաւոր պատմոթյան վերջում՝ «Աւարտեցան գիրք երրորդ յանկ ելանելոյ Պատմոթեան Հայոց Մեծաց»:

Խորենացու երկի խորագրի ճշգրտության ապացույցն է, նշված փաստերից զատ, պատմագրի ողջ շարադրանքը՝ Առաջարանից մինչև Ողբ, երկի ստեղծման շարժադրմերը, իրականացումը:

«Աշխարհ Հայոց Մեծաց», «Երկիր Հայոց Մեծաց», «Թագաւորութիւն Հայոց Մեծաց», «Կաթողիկոսութիւն Հայոց Մեծաց», «Կաթողիկոս Հայոց Մեծաց», «Սպարապետ Հայոց Մեծաց», «Սահմանը Հայոց Մեծաց», «Տիկին Հայոց Մեծաց», «Օրիորդ Հայոց Մեծաց» հասկացությունները եղել են և կան հայ մատենագրության մեջ, և ընդունել են թե՛ հայերը, թե՛ օտարեները:

Հովհան Ռոկերերանը շարադրել է «Վասն վարուց և նահատակութեան սրբյն Գրիգորի Հայոց Մեծաց լուսաւորչի» ներբողյանը: «Հայոց Մեծաց» անվանը 5 անգամ հանդիպում ենք Կորյունի («Հասաներ առ սուրբ կաթողիկոսն Հայոց Մեծաց-42: Վոամշապիոյ արքայի Հայոց Մեծաց-50, և այլն), 16 անգամ Ազգաթանգեղոսի («Աշխարհ Հայոց Մեծաց», «Ամենայն երկիրն սահմանացն Հայոց Մեծաց»-436), 25 անգամ Բուզանդի («Արշակ արքայն Հայոց Մեծաց-55: Իսկ ի սորմն ամենայն Հայոց Մեծաց զԼաղարշ-26»), 4 անգամ Եղիշեի (Եկան եմուտ յաշխարհն Հայոց Մեծաց-190), 10 անգամ Խորենացու մոտ (Ծննդաբանութիւն Հայոց Մեծաց-5: Աւարտաբանութիւն պատմոթեան Հայոց Մեծաց-251: «...օքիորդդ Հայոց Մեծաց-79: Նախարարք Հայոց Մեծաց-251»):

Բացառություն է կազմում Ղազար Փարպեցին, որն իր «Հայոց Պատմոթեան» մեջ և Վահան Մամիկոնյանին ուղղված «Թղթում», «Հայոց Մեծաց» արտահայտությունը չի օգտագործում: Իսկ Պատմութիւնը գրվել է Վահան Մամիկոնյանի հրամանով, որպես «Պատմութիւն Հայոց»-ի Երրորդ գիրք, որն սկզբում է այն տեղից, որտեղ կանգ է առնում Երկրորդ գիրքը՝ Փավստոս Բուզանդի Հայոց Պատմութիւնը: Ընդ որում Առաջին՝ Ազգաթանգեղոսի գրքով Հայոց Պատմությունը սկզբում էր Գրիգոր Լուսավորչից, իսկ Երկրորդ գիրքը շարունակելով առաջինին, ավարտվում էր Հայաստանի առաջին բաժանումը Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև: Փաստորեն ոչ լրիվ մի հարյուրամյակի պատմություն: Առաջին գիրքն արտահայտում էր Եկեղեցական դասի գգտումները, փառարանվում է քրիստոնեությունն ու Հայոց Եկեղեցին ու կաթողիկոսական աթոռը: Երկրորդ գրքում փառարանվում են թագավորներն ու Մամիկոնյանները¹³: Եվ այս այն ժամանակ, երբ

¹¹ Անդ, էջ 251:

¹² Անդ, էջ 256:

¹³ Մ. Արելյան, Երկիր, 1963, էջ 187, 310:

Երկատված Հայաստանը կրեց ճակատագրական մի հարված և. Կորցրեց թագավորական իշխանությունը, պետականությունը, որին հաջորդեց Ավարազի հարկադրական, անհավասար ճակատամարտը: Օտարերկրյա դրա ծնները ուժեղացնում էին իրենց հայակործան գործողությունները և օգտագործում ենքում եղած հակամարտությունները, որտեղ առավել եռանդուն էին ասրի հոգերականները:

Անհրաժեշտ էր ազգային միասնությունը ամրապնդող գործուների բացահայտում, գործադրում, ազգային ինքնագիտակցության բարձրացում, ամրապնդում, որը լավագույնս կարելի է իրականացնել ազգային պատմության գիտական, ճշմարիտ շարադրմամբ¹⁴, որի մեջ կրացնախայտվեր ժողովրդի գոյության արմատները, անցած հերոսական ուժին, արիտության բազում գործերը, վերելքներն ու վայրէջքները: Այնինչ նոր պատմագրքերն անտեսում էին անցյալի պատմությունը, որը և դժոխություն էր առաջացրել ժողովրդի որոշ խավերի ներկայացուցիչների, նախարարական որոշ տեսերի մեջ:

Բացահայտ ակներև է Հայոց պատմությունը շարադրելու երկու ուղղություն. Ազգաթանգեղոսի, Խուզանդի, հետազայտմ նաև Փարպեցու հովանավորները Հայոց պատմությունն սկսում են Քրիստոնեության ընդունումից. Սահմակ Բագրատունին և Մովսես Խորենացին՝ Հայկ և ամապետից: Առաջին տեսակետի կողմնակիցներն արդեն ունեն երկու գիրք, երկրորդինը՝ նոր էր շարադրվում և պետք էր տեսակետը հիմնավորել գործով: Պետք էր մերկայացնել «զՀայաստանեացց նախարարութիւն», զամենեցուն և զուտն և զզիարդն յայտնելով համառօտ և հաւաստի», ցոյց տալ «Զի թեպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքր սահմանեալ, և զօրութեամբ տկար, և ընդ այլով յոյն անգամ նուանեալ բագաւորութեամբ՝ սակայն բազում գործ արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի»¹⁵, սկսելով «Ծ ժամանակէ անկարգ ամբարտակին շինուածոյ մինչև ցայլմ»¹⁶, այսինքն մի քանի հազարամյակներ ընդգրկող ժամանակաշրջանի պատմություն: «Ժամանակի ազգային ինքնուրույնական ձգուում հետևանքով պահանջ կար մի ամբողջական մշակված Հայոց պատմության: Այդ պահանջին բավարարություն տալու համար ահա երևան է եկել Խորենացու Հայոց Պատմությունը¹⁷»—գրում է Մ. Արենյանը:

Սովոր Խորենացին, ի տարբերություն Ամստրդամերի, գրում է իր ազգի ընդհանուր պատմությունը, և բնականաբար պետք է ընտրեր համապատասխան խորագիր, ուստի կոչում է «Պատմության Հայոց Մեծաց», որն այնքան պատշաճում է իր երկին:

Սովորենացու «Պատմության» աշխարհաբար թարգմանության մեջ բազմավաստակ հայագետ Ստ. Մալխաչյանը «Հայոց Մեծաց» արտահայտությունը տարբեր ձևով է թարգմանել: Սովոր գրքի խորագիրը՝ «Ծննդաբանութիւն Հայոց Մեծաց» թարգմանել է «Հայոց մեծերի ծննդաբանություն» այսպիսի պատճառաբանությամբ: «Բնագիրն ունի «Ծննդաբանութիւն Հայոց Մեծաց», որ մենք թարգմանեցինք Հայոց մեծերի ծննդաբանությունը, այսինքն հայ նահապետերի և թագավորների ճյուղա-

14 УГН, № 192:

15 U.Gn, by 10:

¹⁶ Մ. Խորենացի, Պատմութիւն, էջ 12:

¹⁷ **Ա.** Արեգակնայք, Երևան, 6. գ., էջ 310

Վորությունը, ինչպես որ իրապես պատմովյան Ա. գիրքը: Ուրիշները թարգմանել են „Родословия Великой Армении“ (Էմին), «Մեծ Հայաստանի ծննդաբանություն» (Ստեփանէ), որ ընդունելի չէ, նաև որովհետև երկրի կամ ժողովրդի ծննդաբանություն չի լինում առհասարակ, որ պատմահայրը գրում է ընդհանուր Հայաստանի պատմությունը և ոչ թե Մեծ Հայքի, որ անձերելի կլիներ»¹⁸:

Այդպես և մյուս դեպքերում. «Վերջացավ Առաջին գիրքը՝ Հայոց Մեծերի ծննդաբանությունը»:

«Ավարտվեց Երկրորդ գիրքը՝ Հայոց մեծերի պատմությունը»:

«Ավարտվեց Երրորդ գիրքը, որով վերջանում է Հայոց մեծերի պատմությունը»: Ուրեմն շատ Ստ. Մալխասյանի Մովսես Խորենացու երկի աշխարհաբար վերնագիրը պեսք է դնել «Հայոց մեծերի Պատմություն», որ, մեր կարծիքով, բոլորովին ճիշտ չէ, «ոչ Էլ Մեծ Հայքի պատմություն», որ, ինչպես ինքը է ասում, «անձերելի կլիներ», քանի որ Խորենացին գրել է ընդհանուր Հայաստանի պատմություն:

Խորենացին ասում է, որ ինքը գրել է «մեր ազգի ճշմարիտ պատմությունը, թագավորների և նախարարական ցեղերի և տոհմերի մասին, թե ով ումից է ծագել, ինչ գործ է կատարել նրանցից յուրաքանչյուրը, և որն այս բաժանված ցեղերից բնիկ մեր ազգից է և որոնք եկվորներ են և հայցել՝ բնիկ են դարձել, ամեն մենքի գործերն ու ժամանակները գրով դրշմել ե... առանց նեղության»¹⁹:

Սա Էլ հենց Հայոց Մեծաց ծննդաբանությունն է, որովհետև «Ծննդաբանութիւն» բացատրում է Նոր Հայկացյան բառարանը, նշանակում է «խօսք և ճառ զծննդոց և զերնդոց, ազգաբանութիւն, ազգահամար, ցեղին տան պատմութիւնք»: Ուրեմն «Ծննդաբանութիւն Հայոց Մեծաց» նշանակում է Մեծ Հայաստանի ազգաբանությունը՝ Հայաստանյաց թագավորությունների, նախարարությունների, ցեղերի, ազգատոհմերի, ամրող հայ ժողովրդի ընդհանուր պատմությունը, Խորենացու վկայությամբ, ինքն ուներ ձեռքի տակ այդ մասին հյութեր և օգտագործել է իր Պատմությունը հյուսելիս:

Ստ. Մալխասյանը «Հայոց Մեծաց»-ը միակերպ չի թարգմանում, Տիգրանին ուղարկած Աժդակակի թղթի «Եւ այս լինի ի տաղն քում գրիդրող Հայոց Մեծաց, զքոյր քո Տիգրանունի, ինձ կնութեան...» թարգմանել է՝ «Եվ այս բանը կկատարվի, եթե ինձ կնության տաս քո քոյր Տիգրանունուն, Մեծ Հայոց օրիորդին» (իհարկե՝ «Մեծ Հայոց օրիորդին», և ոչ «Հայոց մեծերի օրիորդին», որն անկարելի է—Ս. Մ.): «Եպիսկոպոսներ և նախարարը Հայոց Մեծաց» թարգմանել է «եպիսկոպոսները և Մեծ Հայաստանի թուրո նախարարները», իսկ «Արշակ արքայ Հայոց մեծաց», «Մեծ Հայքի թագաւոր Արշակը»²⁰:

Ինչպես տեսնում ենք, Ստ. Մալխասյանը. «Հայոց Մեծաց» թարգմանել է Հայոց Մեծեր, Մեծ Հայք, Մեծ Հայոց, Մեծ Հայաստան ձևերով: Փակստու Բուզանդի «Հայոց Պատմության» աշխարհաբար թարգմանության մեջ Ստ. Մալխասյանը ամենուր «Հայոց Մեծացը», «Մեծ Հայք» է թարգմանել:

¹⁸ Անդ, էջ 96—97:

¹⁹ Նոր Հայկացյան բառարան, Վենետիկ, 1837, թ. Ա., էջ 1021 (ընդօնում ինն է —Ս. Մ.):

²⁰ Նույն տեղում:

²¹ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1968, էջ 115, 242, 243, 263:

Նոյնակ «Գրիգոր առաջին կաթողիկոսին Հայոց Մեծացը», «Մեծ Հայրի առաջին կաթողիկոս» է դարձել²²:

Մ. Արեւյանը Կորյունի «Վարք Մաշտոցի» երկում հինգ անգամ հանդիպող «Հայոց Մեծաց»-ը թարգմանում է «Մեծ Հայաստան»²³: Ե. Տեր-դիպող «Հայոց Մեծաց»-ը թարգմանում է «Մեծ Հայաստան»²⁴: Հայոց Մեծասահմանը Հայոց Մեծացը մեկ անգամ դարձրել է Մեծ Հայր, մեկ անգամ Մինասյանը Հայոց Մեծացը մեկ անգամ դարձրել է Մեծ Հայր, մեկ անգամ Հայոց աշխարհ, երկու անգամ թողել նոյնը՝ «Հայոց Մեծաց»²⁵: Հայութիւն Հայոց աշխարհի աշխարհաբար ժամանակակից թարգմանություններում:

Հայր աշխարհը, երկիրը, իր անոնք ստացել է Հայկ համապետի անունը: «Իսկ աշխարհն մեր կոչի յանոն համանույն մերոյ Հայկաց՝ Հայր»²⁶: Այս. «Իսկ աշխարհն մեր կոչի յանոն համանույն մերոյ Հայկաց՝ Հայր»²⁷: Այս. «Իսկ աշխարհից ու Հայր աշխարհից սկիզբ առնող հայ ազգի և Հայաստան աշխարհի պատմությունն է շարադրում Մովսես Խորենացին: Այդ աշխարհը ստեղծվել է հեռավոր անցյալում և փոքրիկ աշխարհից, դարերի ընթացքում մեծացել, ընդարձակվել, հզորացել և դարձել է «աշխարհ Հայոց Մեծաց», «Հանուրց հիւսիսականաց վեհագոյն», «Մեծ Հայոց աշխարհ»²⁸, ուստի նրա պատմությունը պետք է կոչվեր Մեծ Հայաստանի Պատմություն, որ համապատասխաներ իր շարադրած հյութին, ոչ միայն հազարամյակներ անցած ժամանակի և լայնածավալ տարածության ընդգրկած սահմաններին, այլև Հայկական ոգուն, պատմության հետապնդած հպատակներին, «մերցն հախնենաց» ճանաչելուն և հիշելուն, «մերցն հայրենեաց» պահպանությանը: Ենրքեք չպետք է մոռանալ հայրենիքն ու նրա պատմությունը, պետք է սովորել և պահել որպես «անմահ լիշտակ», այդպես Էլ Կոտակում է Խորենացին իր Պատմությունը Սահակ Բագրատունուն, և ոչ միայն նրան: «յանմահ լիշտակ յողով զայտ քեզ և որ զենի քո գալոց են ազգք»: Հայոց մեծաց պատմությունը Խորենացին կտակում է Հայոց գալիք սերունդներին: Հայոց Մեծաց» հասկացությունը պահպանվում է հետագայում ևս. Կայսերաց գրքում, «Դիլովենիստիանո... թագաւորեցոյ զՔրտատ քաջ՝ Հայոց Մեծաց»...²⁹ Կաղանկապնդեցին Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանի հօնչը՝ Հեղինենեան կոչում է «Տիկին Հայոց Մեծաց»³⁰, որը չի նշանակում «Հայոց մեծերի Տիկին», Հովհաննես Դրասիանակերտոցին իրեն համարում է «Հայոց Մեծաց կաթողիկոս»³¹, որ Հայոց մեծերի կաթողիկոս չի նշանակում: Գրիգոր Նարեկացին «Հայոց Մեծաց հոեստոր»³² էր և ոչ Հայոց մեծերի հոեստոր, «Հայոց մեծաց դիտապետ» Ներսես Մեծը Հայոց մեծերի դիտապետ չէր: Լևոն իշխանը ձեռնադրվում է թագավոր «Հայոց մեծաց»³³ և ոչ Հայոց մեծաց

²² Փավստոս Բուզանդ, Հայոց Պատմութիւն, Երևան, 1968, էջ 85:

²³ «Մեծ Հայաստանի Արշակունի թագավորների դուռը», «Մեծ Հայաստանի սուրբ կաթողիկոսը», «Մեծ Հայաստանի արքա Վուամշապոնի վեցերորդ տարում», ««Մեծ Հայաստանի կողմերը»», «Մեծ Հայաստանի հազարապետ» (Կորյուն, Վարք Մաշտոցի, էջ 43, 51, 71, 93):

²⁴ Եղիշե, Վարդանանց պատմությունը, Երևան, 1958, էջ 16, 168, 28:

²⁵ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, էջ 37:

²⁶ Անը:

²⁷ Անանոն Ժամանակագրութիւն, Վենետիկ, 1904, էջ 49:

²⁸ Մ. Կաղանկապնդի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 236: Աշխարհաբարում «Մեծ Հայաստանի տիկին» թարգ. Վ. Առաքելյան (1969, էջ 184):

²⁹ Գրասիանակերտոցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 272:

³⁰ ԺԴ դարի հիշատակաբաններ, 1950, էջ 594:

³¹ Մատենադարան, ձև. № 488, էջ 13ա:

ծերի թագավոր: Հովհաննես Որոտնեցին Գրիգոր Տաթևացուն կարգում է «քարունապետ Հայոց Մեծաց»³² և ոչ Հայոց մեծերի բարունապետ: 1855 թ. Դ. Ալիշանը գրում է Հայաստանի տեղագրությունը և անվանում «Տեղագիր Հայոց Մեծաց»³³, որն հայոց մեծերի տեղագրություն չի նշանակում, ոչ եւ միայն Մեծ Հայք է ընդգրկում:

Ամենուր, երբ «Հայոց Մեծաց»-ը միայն Մեծ Հայքը նկատի չունի (ինչպես «Հայոց Մեծաց և Փոքրունց»), Մեծ Հայաստան է նշանակում, ինչպես Խորենացու և վկայակոչված մյուս հեղինակների մոտ:

Մովսես Խորենացու Հայաստանն ու Արա Պատմությունը մեծ են տարիքով, տարածքով և տարողությամբ՝ «արության բազում գործերով», սկիզբ են առել Հայկ Ասհաւատի հոգոր բազկից: Հասել է մինչև Մեսրոպ Մաշտոցի սուրբ աջը, որպես մի նոր սկիզբ, որտեղից շարունակվեց Հայաստանն ու իր Պատմությունը՝ նոր համագամանքներում, «Որ երթայ զաշխարհն Հայոց աշխարհ մեծ է,—գրում է Ղազար Փարպեցին,—յամս երկուս և երիս հագի կարէ ճամաչէ. ճախ՝ դիրս աշխարհին՝ զդիրս և զդժարն, ապա՝ զմարդիկ աշխարհին»³⁴: «Զաշխարհն Հայոց մեծ է» ասելով, Ղազար Փարպեցին կարծես լույսայն իր համաձայնությունն է արտահայտում իր ավագ և հսկա ժամանակակից՝ «Երանելի փիլիսոփա Մովսեսի»³⁵, Հայոց մեծ աշխարհն Հայոց մեծաց պատմություն շարադրելու գաղափարին, որն, անշուշտ, մտնում էր պատմահոր «տգիտահալած գորեանց» մեջ, որոնք Փարպեցուն լավ հայտնի էին:

Ղազար Փարպեցին իր հովանավոր և պատվիրատու Վահան Մամիկոնյանի հրամանով շարունակեց Հայոց Պատմությունը Գրիգոր Լուսավորչից սկսող պատմիշների առաջին երկու գրքից հետո և իր երկն անվանեց Հայոց պատմության երրորդ գիրը: Նա օգտագործեց Մովսես Խորենացու Հայոց Մեծաց Պատմությունը՝ առանց անունը տպու:

Իսկ երբ է ավարտել Մովսես Խորենացին Հայոց Մեծաց պատմությունը: Այդ մասին առաջին վկայությունը պահպանվել է 6-րդ դարի մատենագիր-սուսաքագիր Մշո Ս. Կարապետ վանքի առաջնորդ Աթանաս Տարոնացու առաջմ անհայտ ժամանակագրության մեջ, որի մի մասը մեզ հասել է Հոռմեալիան կայսրերի և հայոց թագավորների մասին վկայությունների միահյուսված ժամանակագրության տեսքով:

Հայերեն հնագույն թղթայ ձեռագրի Երկրորդ մատյանն սկսվում է «Երաեցոց ժամանակագրութիւն» սկավածքով ժամանակագրությունների շարքով, որը Հոռմեալիացոց շարադրված է Եվսեբի և Աթանասի ժամանակագրությունների հիման վրա:

Եվսեբն—հանրահոչակ հույս մատենագիր Եվսեբիոս Կեսարացին է, որի «Քրոնիկոնից» բաղված են Հոռմեալիան պատմության վերաբերվող վկայություններ, իսկ Աթանասը, որին պատկանում են Հայոց պատմությունից բաղված վկայություններ, ինչպես ցուց ենք մի ուսումնասիրու-

³² 1. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարամներ, մ. Ա. Երևան, էջ 104:

³³ Դ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, Վեհնատիկ, 1865:

³⁴ Դ. Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1904, էջ 177:

³⁵ «Երանելի փիլիսոփա Մովսեսին» նա հիշում է մինչև իր Պատմության շարադրությունը, Վահան Մամիկոնյանին ուղարկած թղթի մեջ: Այդ ժամանակ, ըստ Երևույթին, «Թղթից» պակասեց մի թերթ:

թյան մեջ³⁶, Գլակա կամ Ս. Կարապետ վանքի առաջնորդ Աթանաս Տարոնացին է, որը կարգավորել է Հայոց նոր տոմարը, 584 թվականին:

Աթանաս Տարոնացին իր ժամանակագրությունը կազմելիս, հիմք է ընդունել Մովսես Խորենացու Հայոց Մեծաց պատմությունը, (ի դեպ իր տոմարն էլ կոչել է Հայոց Մեծաց տոմար), ապա շարունակել է այլ աղբյուրներից՝ մինչև 556 թվականը (որ ճշում է, որ տոմարը ինքը է հորինել):

Այս ժամանակագրության մեջ նշել (474) թվականի դիմաց գրված է «Մովսես Խորենացի, փիլիսոփա և մատենագիր»³⁷:

474 թվականը Մովսես Խորենացու ծննդյան թվականը չի կարող լինել, քանի որ նա եղել է Մեսրոպ Մաշտոցի աշակերտներից: Եվ ոչ էլ մահանալ, քանի որ նա եղել է լինել. Սամվել Սանեցին նրան հիշատակում է 492 վան թվականը կարող է լինել. Սամվել Սանեցին նրան հիշատակում է 492 թվականին շարականներ հորինելու կապակցությամբ: Մնում է ենթադրել, որ այդ թվականը Հայոց պատմությունը ավարտելու տարին է: Այս ենթադրությունը համոզունք է դառնում, եթե նկատում ենք, որ Աթանաս Տարոնացու մոտ Ափրիկանու պատմագիրը հիշվում է Ուրիայի պատմությունը գրելու, Սահակ Պարթևը՝ Հայ դպրությանը փոխելու, Մեսրոպ Մաշտոցը՝ Հայոց գըրեն ատեղձելու, նրանց աշակերտները՝ Եզրիկն ու Հովսեփը, թարգմանություններ կատարելու առթիվ, այսինքն՝ կանքում անհատի հիշատակության արժանի գործն է արձանագրվում, բնականարար մատենագիր Խորենացուն էլ իր պատմագրի ավարտի տարին պեսը է նշվել:

Բարեկամատարար այս իրողությունը հաստատվում է մատենագրական մի այլ հավաստի վկայությամբ: Այն Թովմա Արծրունու վերը բերված վկայությունն է, որ նշված է, որ Խորենացու Հայոց Մեծաց պատմությունը սկսվում է Ադամից և հասնում մինչև Զենոն կայսր, որը գահ է բարձրացել 474 թվականին:

Աթանաս Տարոնացու հաղորդած 474-ը ցուց է տալիս, որ Խորենացին իր պատմությունը ավարտել է Զենոն կայսրի գահակալության առաջին տարում, այլապես նա այլ թվական կնշեր: Խոկ Թովմա Արծրունու «Ադամից մինչև Զենոն կայսր» արտահայտությունը այդ նույն է հաստատում, այսինքն մինչև նրա գահակալության սկիզբը, այսինքն 474 թվականը:

Հայունի է, որ Մովսես Խորենացու Հայոց պատմությունը Ադամից սկսվելով, ավարտվում է 440 թվականին, Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի մահվամբ: Պատմագիրը բաղկացած է երեք գրքերից, և վերշին գիրը կոչվում է Ավարտաբանություն, աս էլ ավարտվում է հաշմանդրություն: Այստեղ էլ մեզ օգնում է Թովմա Արծրունին: Վերը բերված նույն քաղաքացու նա նշել է, որ մինչև Զենոն կայսրին հասնելու մասին Խորենացին մեզ հաղորդում է իր խոստացած Զորբորդ գրքում, որը կոչվում է «Վերաբարձրութիւն ի վերայ երեցունց դրուգեալ հասուածին», այսինքն հավելված նախորդ երեք գրքերի³⁸: Թովմա Արծրունին ոչ թե հայտարարում է, այլև ցուցումներ է կատարում «Վերաբարձրութիւն» գրքից, որի շնորհիվ հնարավորություն ենք ստանում վերականգնելու Զորբորդ գրքի մաս կազմող մատենագրական որոշ, ավելի ճիշտ, որոշակի երկեր:

³⁶ Ա. Ս. Մաթևոսյան, Մովսես Խորենացին և Աթանաս Տարոնացու ժամանակագրությունը, Պատմաբանակրական հանդես, 1989, № 1...

³⁷ Մատենադարան, ձև. 2679. էջ 162ա:

³⁸ Թովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 122:

Դրանցից է «Սովուսի Խորենցոց և Անդրէասի» ժամանակագրությունը, որը վերագրվել է այս կամ այն հեղինակին, որպես «Խմբագիր ժամանակագրութիւն»³⁹, կամ «Պատմութիւն Անանիաշի Ծիրակունոյ համարողի»⁴⁰, և այլն:

Քննությունը ցուց է տալիս, որ Սովուսի Խորենացու հորինվածքով սկսվող և լրացումներով վերջացող սույն ժամանակագրությունը Սովուսի Խորենացու Չորրորդ գրքի մեջ մտնող առաջին երկն է, որն սկսվում է Առամով և հասնում մինչև Զեմոն կայսր, այսինքն 474 թվական⁴¹:

Ուստի աներկրայելիորեն 474 թվականը կարելի է համարել Սովուսի Խորենացու Հայոց Մեծաց պատմության ավարտման տարին:

³⁹ Բ. Մարգիսյան, Անանուն ժամանակագրութիւն է դարու, Վենետիկ, 1904, էջ Ա—ի:

⁴⁰ Ա. Աբրահամյան, Անանիա Ծիրակացու մատենագրությունը, Երևան, 1940:

⁴¹ Ա. Մաքնոսյան, Սովուսի Խորենացու Հայոց Մեծաց պատմության Չորրորդ գրքի հարցը, Պատմաբանասիրական համելս, 1991, № 2: Հմմո., Ա. Մաքնոսյան, Սովուսի Խորենացու Հայոց պատմության Չորրորդ գիրը, «Հայաստան» օրաթերթ, 1991, դեկտեմբերի 24:



ЭЧМИАДЗИН

ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА (СЕНТЯБРЬ—ОКТЯБРЬ 1991 г.)

1. Поздравительная телеграмма Католикоса всех армян Вазгена I Левону Тер-Петросяну по случаю избрания президентом Республики Армения, 18 октября 1991 г. (стр. 3).

2. Обращение Католикоса всех армян Вазгена I к армянскому народу о голосовании 21 сентября за независимость Армении, 14 сентября 1991 г. (стр. 4).

3. Слово Католикоса всех армян Вазгена I в Парламенте Армении по случаю провозглашения независимости Армении, 23 сентября 1991 г. (стр. 5).

4. Слово Католикоса всех армян Вазгена I армянскому телевидению (стр. 6—8).

5. Мироосвящение в первопрестольном Эчмиадзине, 29 сентября 1991 г. Помещено также по этому случаю слово Католикоса всех армян Вазгена I (стр. 9—19).

6. Визиты в резиденцию первопрестольного Эчмиадзина по случаю 83-ей годовщины со дня рождения Католикоса всех армян Вазгена I (стр. 20—25).

7. Диаконское рукоположение в первопрестольном Эчмиадзине, 15 сентября 1991 г. Помещены также проповедь архиепископа Нерсеса Позапаляна в Кафедральном соборе и биографии вновь рукоположенных диаконов (стр. 26—32).

8. Торжество открытия Духовной Академии, 10 сентября 1991 г. Помещено также слово Католикоса всех армян Вазгена I по случаю нового учебного года (стр. 33—37).

9. Церковная хроника первопрестольного Эчмиадзина за сентябрь—октябрь месяцы (стр. 38—39).

10. **Сасун Григорян**—Эчмиадзин (стихотворение)—(стр. 40—41).

11. Обращение к миру Армянского Патриарха Иерусалима архиепископа Торгома Манукяна о безопасности армян Арцаха (стр. 42).

12. **Володя Абрамян**—Вести из армянской епархии Иерусалима:

а) Официальное посещение Патриарха Православной Русской Церкви в Армянский Патриархат Иерусалима, 28 марта 1991 г. (стр. 43—44).

б) Хиротония в иеромонаха в Армянской Патриархии Иерусалима, 13—14 февраля 1991 г. (стр. 44—45).

в) Паломничество в Иерусалим поощряется Армянским Патриархом Иерусалима архиепископом Торгомом Манукяном (стр. 45).

г) Камерный хор радио и телевидения Республики Армения в Иерусалиме, 27 марта—3 апреля 1991 г. (стр. 45—46).

13. **Иеромонах Макар Оганесян**—Ритуал водоосвящения в армянской епархии Ирака по случаю получения нового миро из первопрестольного Эчмиадзина, 18 октября 1991 г. (стр. 47—49).

14. **Володя Абрамян**—Вести из армянской епархии Канады (стр. 50—51).


15. **Симонян-Габузян Кнарик**—Из воспоминаний отца (мемуары)—(стр. 52—54).

16. **Священик Нерсес Нерсесян**, доктор богословия—Непогрешимость и авторитет Вселенских Соборов (исследование)—(стр. 55—68).

17. **А. А. Коосеян**—Свидетельства для проповеди (исследование, продолжение)—(стр. 69—74).

18. **А. А. Коосеян**—Чтения из прошедшей библиографии (исследование)—(стр. 75—84).

19. **А. С. Матевосян**—Заглавие и дата окончания истории Мовсеса Хоренаци (исследование)—(стр. 85—93).



“ETCHMIADZIN”

OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(SEPTEMBER—OCTOBER 1991)

1. The congratulatory cable of His Holiness Vasken I, Catholicos of All Armenians, to His Excellency Mr. Levon Ter-Petrossian, on the occasion of His election president of the Republic of Armenia, 18-th October 1991 (p. 3).
2. The appeal of His Holiness to the Armenian people, about the voting for the independence of Armenia in September 21-st, 14-th September 1991 (p. 4).
3. The message of blessing of His Holiness in the parliament of Armenia, on the occasion of the proclamation of independence of Armenia, 23-rd September 1991 (p. 5).
4. The address of His Holiness from the T. V. of Yerevna (pp. 6—8).
5. The blessing of His Holy Oil in the Mother See of Holy Etchmiadzin, 29-th September 1991. It is given also the message of His Holiness given on this occasion (pp. (9—19).
6. Visits to the Mother See of Holy Etchmiadzin's patriarchal residence on the occasion of the 83-rd birthday anniversary of His Holiness Vasken I, Catholicos of All Armenians (pp. 20—25).
7. Deacons ordination in the Mother See of Holy Etchmiadzin, 15-th September 1991. It is given also the officiating Archbishop Nerses Bozabalian's sermon and the biographies of the newly ordained deacons (pp. 26—32).
8. The reopening ceremony of the Theological Seminary of Holy Etchmiadzin, 10-th September 1991. It is given also the address of blessing of His Holiness, on the occasion of the new scholar year (pp. 33—37).
9. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and descriptions of church festivities in the Holy See during the months of September—October 1991 (pp. 38—39).
10. **Sassoon Grigorian**—«Etchmiadzin» (poetry)—(pp. 40—41).
11. The appeal to the world of His Beatitude Archbishop Torgom Manoukian for the safety of the Armenians of Karabakh (p. 42).
12. **Volodya Abrahamian**—News from the Armenian diocese of Jerusalem:
 - a) The official visit of His Holiness the Patriarch of the Russian Church to the Armenian Patriarcal Residency of Jerusalem, 28-th March 1991 (pp. 43—44).
 - b) Sacerdotal Ordination in the Armenian Cathedral of Jerusalem, 13—14-th February 1991 (pp. 44—45).
 - c) Encouragement of pilgrimage to Jerusalem by the Armenian Patriarch of Jerusalem His Beatitude Archbishop Torgom Manoukian (p. 45).
 - d) The chorus of radio and T. V. of the Republic of Armenia in Jerusalem, March 27-th—April 3-rd 1991 (pp. 45—46).
13. **Reverend Makar Hovhannessian**—Ceremony of water blessing on the occasion of the transfer to the Armenian diocese of Iraq the new Holy Oil, 18-th October 1991 (pp. 47—49).
14. **Volodya Abrahamian**—News from the Armenian diocese of Canada (pp. 50—51).
15. **Simonian-Kapoutchian Knarig**—«Memories of my father» (pp. 52—54).
16. **Father Nerses Nersessian**—«The authority and the infallibility of the ecumenical councils» (study)—(pp. 55—68).
17. **H. H. Keusseyan**—«Testimonies for the preachings» (study—to be continued)—(pp. 69—74).
18. **H. H. Keusseyan**—«Readings from our ancestors' literature» (study)—(pp. 75—84).
19. **A.S. Matevossian**—«The title of Movses Khorenatz's book of history and the date of the end (study)—(pp. 85—93).

„ETCHMIADZINE“
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(SEPTEMBRE—OCTOBRE 1991)

1. Télégramme de félicitation de Sa Sainteté Vasken Ier adressé à Son Excellence Lévon Ter-Pétrossian à l'occasion de son élection au poste de président de la République d'Arménie (18 octobre 1991) —(p. 3).
2. Appel de Sa Sainteté invitant le peuple arménien à voter en faveur de l'indépendance d'Arménie (14 septembre 1991)—(p. 4).
3. Discours de Sa Sainteté prononcé le 23 septembre 1991 à la séance plénière du Parlement à l'occasion de la proclamation d'indépendance de l'Arménie (p. 5).
4. Message de Sa Sainteté prononcé à la télévision d'Erévan (pp. 6—8).
5. Bénédiction du Saint-Chrême au Saint-Siège d'Etchmiadzine (29 septembre 1991). Texte de l'allocution de Sa Sainteté prononcée à cette occasion (pp. 9—19).
6. Visites à la résidence patriarcale du Saint-Siège d'Etchmiadzine à l'occasion du 83e anniversaire de la naissance du catholicos de tous les Arméniens (pp. 20—25).
7. Ordination diaconale dans la cathédrale de Saint-Etchmiadzine (15 septembre 1991). Texte du sermon de l'archevêque Nersès Bozabalian prononcé à cette occasion. Biographies des diacres ordonnés (pp. 26—32).
8. Rentrée des classes au séminaire théologique de Saint-Etchmiadzine (10 septembre, 1991). Texte de l'allocution de Sa Sainteté prononcé à l'occasion de la nouvelle année scolaire (pp. 33—37).
9. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours des mois septembre—octobre 1991 (pp. 38—39).
10. **Sassoun Grigorian**—«Etchmiadzine» (poème)—pp. 40—41).
11. Appel de Sa Béatitude l'archevêque Torgom Manoukian, patriarche des Arméniens de Jérusalem, adressé au monde entier pour la sécurité de la population arménienne du Haut-Karabakh (p. 42).
12. **Volodia Abrahamian**—Nouvelles du diocèse des Arméniens de Jérusalem.
 - a) Visite officielle du patriarche de l'Eglise orthodoxe russe au patriarcat arménien de Jérusalem (28 mars 1991)—(pp. 43—44).
 - b) Ordinations sacerdotales dans la cathédrale arménienne St. Jacques de Jérusalem (13—14 février 1991)—(pp. 44—45).
 - c) Sa Béatitude le patriarche Torgom Manoukian encourage le pèlerinage vers Jérusalem (p. 45).
 - d) Le choeur de la Radio-Télévision d'Arménie à Jérusalem (du 27 mars au 3 avril 1991)—(pp. 45—46).
13. **Père Makar Hovhannessian**—Bénédiction d'eau dans l'église arménienne de Bagdad à l'occasion du transfert de l'huile sainte au diocèse des Arméniens d'Iraq (18 octobre 1991)—(pp. 47—48).
14. **Volodia Abrahamian**—Nouvelles du diocèse des Arméniens du Canada (pp. 50—51).
15. **Knarik Simonian-Kapoutchian**—«Mémoires de mon père» (pp. 52—54).
16. **Père Nersès Nersessian**—«L'autorité et l'inaffabilité des conciles oecuméniques» (étude)—(pp. 55—68).
17. **H. H. Keusseyan**—«Témoignages à l'usage des prédications» (étude, à suivre)—(pp. 69—74).
18. **H. H. Keusseyan**—«Lecture des ouvrages de nos anciens» (étude)—(pp. 75—84).
19. **A. S. Matévosian**—«Le titre et la date d'achèvement de l'histoire de Movsès Khorenatsi» (étude)—(pp. 85—93).

ԲՈՎԱՆԴԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական հեռագիրը	մեծամարգ
տիար Առն Տեր-Պատրոպատիկ՝ Հայրապետի Հանրապետության նախագահ	
ընտրվելու առթիվ	
Ամենայն Հայոց Հայրապետի կոչը	
Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա.-ի օրինության խոսքը Հայրապետի Խորհրդարանում	
S. Վազգեն Ա. Վեհափառ Հայրապետի խոսքը Երևանի հեռուստացույցից ապրուս մեռոնի օրինություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում	
Այցելություններ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետիկ՝ ծննդյան 83-րդ տա- րեարձի առթիվ	
Սարկավագական ձևոնադրություն Մայր Աթոռում	20
Հոգնոր մենարանի վերաբացման համեյստուկունը	26
ՄԱՅՐ Ա.ԹՈՐՈՒԹՅ-ԵԿԵԼԵԳԵԿԱՆ թեմ. լուրեր	33
ՍՍՍՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ-Էջմիածնին	38
Երուսաղեմի Պատրիարքը Բամաշխարհային կոչ Կ'ընէ Ղարաբաղի հայութեան ան- վունդութեան համար	40
ՎՈԼՈԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄՑԱՆ-Լուրեր Երուսաղեմի հայոց թեմից	42
ՄԵՇԿԱՐ ԱԲԵՂԱՍ ՅՈՎՀԱՆՆԵՍԵՍԱՆ-«Զօրօնների արարողություն» Սրբալոյն նոր Միոնիկ թերման աժիքությունը	43
ՎՈԼՈԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄՑԱՆ-Լուրեր Երուսաղեմի հայոց թեմից «Երան»	47
ԱԲՐԱՀԱՄՑԱՆ-Լուրեր Կանադայի հայոց թեմից	50
ՄԻՄՈՆՑԱՆ-ԳԱԲՐՈՒՔՑԱՆ ՔՆԱՄԻԿ-Հորս հուշերից	52
ԴԱԿՏ. Տ. ՆԵՐՍԵՍ ՔՀՆ. ՆԵՐՍԵՍԱՆ-Տիեզերական ժողովների հեղինակու- թյունն ու աճխալականությունը	55
«Ավալույթինը ի պետս բարողութեանց»	69
Հ. Հ. ՔՅՈՒՆԵՑԱՆ-Լեթերոցներ Ասխենյաց մատենագրությունից	75
Ս. Ս. ՄԱԹԵՎՈՍՑԱՆ-Մովսես Խորենացու պատմագրքի խորագիրը և ավարտ- ման թվականը	85
«Էշմիածն» օֆիցիալին յանական ամառագիրը	94
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin	95
«Etchmiadzine» organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine	96

ԽՄԷ ագիր ԵՐՎԱՆԴ ԱԵԼՔՈՒՅՑԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅՈՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԵԶՄԻԱՅԻՆ
«ԷԶՄԻԱՄԵԴԻՆ» ԱՐՄԱԿՐՈՒ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Է արտադրության 27.11.1991 թ.: Ստորագրված է տպագրության 2
Տպագրության համար՝ 1. Տպագրության չափը՝ 70×1081/1 սարքավոր է 45

ISSN 0134—5249